ՀԱՅ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻ ԲԻԲԼԻՈԳՐԱՖԻԱ

1956

016:05/07(47·925)
Պ-48

ՍՏՈՒԳՎԱԾ Է 1901 Թ.

ՀԱՅ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻ ԲԻԲԼԻՈԳՐԱՖԻԱ

(1794—1900)

ԱՌԱՋԱԲԱՆՈՎ ԵՎ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ

Կազմեց
ՀՈՎՀ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԿԱԴԵՄԻԱ
ԳՐԱԴԱՐԱՆ

ԵՐԵՎԱՆ

Հայկական ՍՍՌ
ՊԵՏԳՐԱՊԱԼԱՏ

1956

A III 270

БИБЛИОГРАФИЯ АРМЯНСКОЙ ПЕРИОДИЧЕСКОЙ ПЕЧАТИ

(1794—1900)

С ПРЕДИСЛОВИЕМ И ПРИМЕЧАНИЯМИ

Составил
ОВ. ПЕТРОСЯН

ЕРЕВАН

ГОС. КНИЖНАЯ ПАЛАТА
Арм. ССР

1956

ԱՌԱՋԱԲԱՆ

Քանի տարի է մենք աշխատում ենք հայ գրականության և պարբերական մամուլի բիբլիոգրաֆիայի վրա։ Արդեն լույս են տեսել մեր կազմած «Հայ գրականության բիբլիոգրաֆիա»-ն երեք հատորով և «Հայ պարբերական մամուլի բիբլիոգրաֆիա»-ի մեկ հատորը։

«Հայ պարբերական մամուլի բիբլիոգրաֆիա»-ն (1794—1955) ունի երեք մեծադիր հատորներ։

Առաջին հատորն այս գիրքն է, որ ընդգրկում է անդրանիկ հայ ամսագրից, 1794 թվականից մինչև 1900 թվականը լույս տեսած հայ բոլոր տեսակի պարբերականների բիբլիոգրաֆիան.

Երկրորդ հատորն ընդգրկում է 1900 թվականից մինչև Հայաստանում սովետական կարգերի հաստատումն ընկած ժամանակաշրջանի (1920 թ.) մեր պարբերական մամուլի բիբլիոգրաֆիան։

Երրորդ հատորը, որ լույս է տեսել 1954 թվականին, ընդգրկում է՝ հայ բոլշևիկյան մամուլի (1902—1920 թ. թ.) և սովետահայ մամուլի (1920—1954 թ. թ.) բիբլիոգրաֆիան։

Այս աշխատությունը կատարվել է միանգամայն ծանր պայմաններում։

Մինչև այժմ չկա հայ պարբերական մամուլի և հրապարակախոսության ամբողջական պատմությունը, չկան ոչ առանձին պարբերականների և ոչ էլ ընդհանրապես հայ պարբերական մամուլի բիբլիոգրաֆիաներ։ Մեր հիմնական աղբյուրներն են հանդիսացել բոլոր տեսակի հայ պարբերականները, որ պահվում են Հայկական ՍՍՌ-ի գրապահոցներում և գրադարաններում, ու մի շարք գրական աղբյուրներ, որոնցից տեղեկություններ ենք քաղել։

Ոչ մի տեղ գրադարաններում չի կարելի գտնել հայ պարբերականների բոլոր անունները և լրիվ կոմպլեկտները։

Ինչպես մեզնից առաջ եղած ուսումնասիրողները, որ ներքևում հիշատակված են, նույնպես և մենք մի շարք պարբերականներ չենք գտել գրապահոցներում, չենք տեսել, հնարավորություն չենք ունեցել նկարագրել նրանց նյութերը։

Մենք աշխատել ենք՝ Հայաստանի և Սովետական Միության շատ գրադարաններում, աշխատել ենք ձեռք բերել և ապահովել բիբլիոգրաֆիայի լրի-

վուքյունը, իսկ մեր ձեռքը չհասած, չտեսած քերթերի ու ամսագրերի մասին, նյութեր ենք վերցրել հետևյալ աղբյուրներից.

1. Գալեմքարյան, Հ. Գ. Պատմություն հայ լրագրության (1794—1860), Վիեննա, 1893։

2. Վանոյան, Գ. Ջ. Հայոց պարբերական մամուլը սկզբից մինչև մեր օրերը. 1794—1894. Ալեքսանդրապոլ, 1894։

3. Նույնի՝ Հայոց պարբերական մամուլը, Լիակատար ցուցակ հայ լրագրության սկզբից մինչև մեր օրերը (1794—1934), Երևան, 1934։

4. Պատուրյան, Հ. Մ. Հայ մամուլը տասնհինգ տարվան մեջ (1894—1909), Վենետիկ, 1910։

5. Կարապետյան, Հ. Ռ. Լիակատար ցուցակ հայերեն լրագրերու, որոնք կգտնվին Մխիթարյան մատենադարանի մեջ։ Վիեննա, 1924։

Բացի այս աղբյուրներից, ուսումնասիրել ենք հայ պարբերական մամուլում ցրված հատ ու կենա հոդվածները և ստորև բերված պատմագրական աշխատությունները՝ հայ մամուլի ու հրատարակախոսության մասին։

1. Ներսիսյան, Մ. Գ. Հայ ժողովրդի ազատագրական պայքարը բյուրքական բռնապետության դեմ 1850—1870 Թ. Թ։ Երևան, 1955։

2. Հովհաննիսյան, Աշ. Նալբանդյանը և նրա ժամանակը։ Երևան, 1955։

3. Կարինյան, Ա. Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության [Հտ. 1։ Հնդկահայ պարբերականներ]։ Երևան, 1956։

Ինչպես վերը նշված աղբյուրներից է երևում, ոչ նախահեղափոխական ժամանակաշրջանում և ոչ էլ Հայաստանում սովետական կարգերի հաստատումից հետո, չեն հրատարակվել հայ հրատարակախոսության և պարբերական մամուլի բիբլիոգրաֆիային նվիրված աշխատություններ։

Հ. Գ. Գալեմքարյանի փոքրիկ գիրքն իր ժամանակի համար (1894 Թ.) տեղեկատու աղբյուր է հանդիսացել, որոշ փաստական նյութեր է պարունակում, բայց գրված է կղերա-պահպանողական ոգղությամբ։ Գ. Ջ. Վանոյանի «Հայոց պարբերական մամուլը սկզբից մինչև մեր օրերը. 1794—1894» ինչպես իր ժամանակին քննադատությունը ցույց տվեց*, գրվել է Հ. Գ. Գալեմքարյանի գրքի հետևողությամբ, ոչ պատմություն է և ոչ էլ բիբլիոգրաֆիա, ինքը հեղինակը նույնիսկ հետագայում հրժարվեց վերահրատարակել և սովետական ժամանակաշրջանում վերածեց հայ պարբերական մամուլի ցուցակի, որն իրոք տեղեկատու ցանկ, առայժմ միակ աղբյուրն է և օգտագործվում է։

Բայց պարբերականների այդ ցուցակը նույնպես ունի թերություններ, որ օգտագործելու ժամանակ պիտի ի նկատի ունենալ։

Այդ թերություններն են ոչ լիակատար լինելը, Տասնյակ քերթեր, ժուռնալներ բաց են թողնված՝ ոչ միայն մինչև 1850—60-ական թվականները, այլև ավելի ուշ ժամանակներին։

Մյուս թերությունն այն է, որ չհամանալով սովետական բիբլիոգրաֆիայի մեթոդիկան և նյութերի նկարագրման միասնական կանոնները, Գ. Վանոյանը սխալներ է արել, նկարագրված պարբերականների մասին չկան ծանոթագրություններ։

---

* Վանյան, Գ. Հայոց պարբերական մամուլը (1794—1894)։ [Ալեքսոպ., 1894. Գրախոս՝ Ա. Ա.]. Մուրճ, 1895, № 5, էջ 667—680։

Չնայած այդ թերություններին, նորից ենք կրկնում, որ Գ. Լևոնյանի կազմած «Հայ պարբերական մամուլը, լիակատար ցուցակ հայ լրագրության սկզբից մինչև մեր օրերը (1794—1934)»—արժեքավոր գործ է։

Մեր քննադատական դիտողությունները Գ. Լևոնյանի գրքի մասին, նպատակ ունեն ոչ թե արժեքազրկելու նրա գործը, այլ վերապին պարզելու, որ հայ պարբերական մամուլը ցրված է աշխարհով մեկ, նույնիսկ տասնյակ տարիներով պրպտումներ կատարողներին չի հաջողվում կազմել հայ պարբերական մամուլի լրիվ ցուցակը։

Մեր ներկա աշխատությունն իր բովանդակությամբ և բիբլիոգրաֆիական մշակման մեթոդով, վերը հիշատակված աշխատություններից տարբերվում է հիմնովին, սա հայ պարբերական մամուլի ընդարձակ բիբլիոգրաֆիան է։

Ներկա բիբլիոգրաֆիայում՝ լրագրերը, ամսագրերը և բոլոր պարբերականները դասավորված են ժամանակագրական կարգով՝ 1794 թվականից մինչև 1900 թիվը։

Նույն թվի տակ նշված պարբերականները դասավորել ենք՝ այբուբենական կարգով, որովհետև անհնարին է եղել՝ պարզել, թե որ պարբերականը, ո՞ր ամսից և տվյալ ամսի քանիսից է լույս տեսել։

Յուրաքանչյուր պարբերականի բիբլիոգրաֆիական նյութերը բաժանվում են հետևյալ մասերի.

1. Պարբերականի անունը և հրատարակչական ցուցանիշները. (ենթավերնագիր, հրատարակության տեղը, տպարանը, հրատարակություն, հրատարակության թիվը, էջ, չափ, բաժանեգինը, արտոնատերի, խմբագրի անուն ազգանունը)։

2. Ծանոթագրություն տվյալ պարբերականի մասին։ Չնայած այդ ծանոթագրությունները երբեմն ընդարձակ են, բայց դրանք պատմություն չեն, չեն կարող տալ հայ պարբերական մամուլի, հրապարակախոսության և հասարակական մտքի զարգացումը, այս խնդիրը պիտի կատարվի ոչ թե բիբլիոգրաֆիկ աշխատության սահմաններում, այլ հատուկ ուսումնասիրությունների միջոցով։ Պարզ է, որ մեր ամփոփ ծանոթագրություններում, մենք չէինք կարող տալ՝ յուրաքանչյուր պարբերականի բնութագիրը՝ կապված պատմական դեպքերի, քաղաքական ու տնտեսական անցուդարձի հետ, նույնպես և չէինք կարող տալ՝ յուրաքանչյուր պարբերականի հրապարակախոսական ձևերն ու մեթոդները, առանձին ժուռնալիստների կենսագրությունները, խոսել պարբերականի լեզվի մասին և այլն։

Մեր ծանոթագրություններում աշխատել ենք ընդհանուր ձևով տալ յուրաքանչյուր պարբերականի ուղղությունը, պարզել թե որ հասարակական խմբակցության գաղափարների արտահայտիչն է հանդիսացել։ Վ. Ի. Լենինը գրել է. «Ուղղություն չունեցող ժուռնալը անհնթնք, անճոռնի, խայտառակ ու վնասակար բան է»*։

Չնայած չեն ուսումնասիրված, չի բացահայտված հայ պարբերականների մեծագույն մասի իդեական ուղղությունը, բայց մենք աշխատել ենք մեր ծանոթագրություններում հնարավորին չափ պարզել նրանց գաղափարական ուղղությունը, դասակարգային բնույթը։

Որպեսզի պարզ լինի պարբերականի իդեական, դասակարգային պատ-

---

* Լենին, Վ. Ի. Երկեր, հա. 34, էջ 505։

կերը, մենք հաճախ տվել ենք թերթերի և ժուռնալների՝ ծրագրերը, առաջին համարների խմբագրականներից ընդարձակ քաղվածքներ։

Իհարկե թերևսակի մոտեցման դեպքում, կարելի է ասել՝ ուրիշ բան է ծրագիրը, ուրիշ է նրա իրականացումը, այդ ծրագրային խոստումները չեն իրականացվել։

Մենք հակառակն ենք գտնում, այդ ծրագրային հոդվածները տվյալ լրագրի կամ ամսագրի դաղափարական ուղղության և բովանդակության վերաբերյալ շատ բան են տալիս։

3. Մանրագրությունից անմիջապես հետո, մենք նկարագրել ենք տվյալ ամսագրի և որոշ դեպքերում նաև շաբաթաթերթերի, երկշաբաթաթերթերի բովանդակությունը։

Իրրև կանոն, մենք չենք տվել լրագրերի հոդվածների նկարագրությունը, որովհետև տասնյակ հատորներ կպահանջվեր այդ մեծ նյութին ընդգրկելու համար։

Պարբերականների բոլոր նյութերը չէ որ նկարագրել ենք, արժեքաղրկված, անկարևոր, շատ հնացած, նաև կրոնական-եկեղեցական, դավանաբանական-վարքագրական նյութերը չենք նկարագրել։

Պարբերականների նյութերի նկարագրությունը մենք կատարել ենք նորագույն մեթոդներով՝ Համամիութենական Պետական Գրապալատի մշակած և ներկայումս ամբողջ Սովետական Միությունում կիրառվող բիբլիոգրաֆիական հրահանգների համաձայն։

Հոդվածների բովանդակությունը պարզելու նպատակով մենք տվել ենք անոտացիաներ, որոնք ապացույց են, որ նյութը մշակվել է։

Իրրև տեղեկատու-բիբլիոգրաֆիական ձեռնարկ, ներկա աշխատությունը նպատակ ունի՝ ապահարկել մեր գրադարաններին, օգնել մեր ինտելիգենցիայի լայն խավերին, գիտական աշխատողներին, մասնագետներին, ուսուցչությանը, ուսանողությանը, մամուլի աշխատողներին՝ օգտվել մեր պարբերական մամուլից՝ իրենց ուսումնասիրական աշխատանքներում։

Այժմ մի քանի խոսք այն մասին, թե ի՞նչ չենք կարողացել լուսաբանել մեր ծանոթագրություններում և բիբլիոգրաֆիական նկարագրություններում։

Չենք տվել տիրաժները։

Պարբերական մամուլի ազդեցությունը ժողովրդի վրա պարզելու լավագույն միջոցներից մեկն է տիրաժների հաշվառումը։ Բայց տիրաժներ չեն նշվել ոչ միայն 18-րդ դարի, այլև հետագա ժամանակաշրջանի հայ պարբերականների վրա։

Անցյալ դարի 60—70-ական թվականներից ամսագրերի մի մասը միայն, տարվա վերջում տվել են իրենց տարգո բաժանորդագրության ցուցակը։ Այդ ցուցակներից պարզվում է, որ ժամանակի լավագույն ամսագրերի բաժանորդների թիվը 150—200—300-ից չի անցել։ Հասարակական գոյություն չի ունեցել։

Օրաթերթերի տիրաժը 19-րդ դարի երկրորդ կեսերին հազիվ հասել է 400—700-ի։ «Մշակ»-ը և «Նոր-Դար»-ը դարավերջին լույս էին տեսնում 1200—1500 օրինակ։ Եղել են նաև այնպիսի թերթեր, որ տարածվել են մեկ կամ մի քանի տասնյակ օրինակ։ Պարբերականների տարածման, ժողովրդականացման այս աղքատության մեջ մի բացառություն է կազմում էջմիածնի պաշտոնական ամսագիր «Արարատ»-ը, որ իր հրատարակման սկզբից, 1868 թվից 2000 բաժանորդ է ունեցել։ Այս փաստը դեռ չի վկայում, որ «Արարատ»-ը մեծարժեք

և ժողովրդական ամսագիր էր և կամ այն, թե 1870-ական թվականներից սկսած հայ հոգևորականներն այնքան լուսամիտ և ընթերցասեր էին, որ բոլորը բաժանորդագրվում էին։

«Արարատ»-ը տարածվում էր ժամանակի կաթողիկոսների հրահանգով, ուղղակի ասմեն մի կուսակրոն և տերտեր պարտավոր էր մեկ օրինակ ստանալ։

Հայերեն պարբերականների նյութական վիճակը շատ ծանր է եղել, փակման վտանգը սպառնացել է մեր թերթերի, ամսագրերի մեծագույն մասին։

19-րդ դարի պարբերականների մեծ մասը հաճախակի դիմել են բաժանորդներին, խնդրելով, թախանձելով՝ բաժնեվճարներն ուղարկել, իսկ բաժանորդները մտածելով, որ թերթը կարող է տարվա ընթացքում դադարել, բաժնեվճարները ձգձգել են, որպեսզի իրենց ծառակը չկորչի։

Եղել են նաև մեկենասներ, որ նյութապես օգնել են թերթերին, տասնյակ օրինակներով բաժանորդագրվել են՝ դպրոցներին ուղարկելու համար։

Մեր ծանոթագրություններում հնարավոր չէր կանգ առնել պարբերականների լեզվական հարցերի վրա։ Հայ պարբերական մամուլի լեզուն ունի 160 տարվա պատմություն, նա կրել է շատ փոփոխություններ, նա պիտի արժանանա լեզվաբանների հատուկ ուսումնասիրությանը։

Չեն լուսաբանվել ծանոթագրություններում մեր մամուլի ժանրերը։ Նախահեղափոխական հայ պարբերական մամուլը շատ ծանր պայմաններում է հրատարակվել։ Նա գաղափարապես խեղդվել է՝ սուլթանական բռնակալության, իրանական միջնադարյան խավարի և ցարական Ռուսաստանի ցենզուրային կաշկանդումների պայմաններում։

Ռուսաստանում, ըստ 1865 թվի ցենզուրային կանոնադրության, որևէ ժուռնալ կամ լրագիր հրատարակելու դեպքում, խստորեն քննվում էր հրատարակչի «բարեհուսությունը», հետո նրանից մի քանի հազար ռուբլի գրավական էին վերցնում և ապա թույլատրում հրատարակել։ Հրատարակիչները և խմբագիրները անձամբ և իրենց դուլքով պատասխանատու էին պետության առաջ։ Պարբերականներում լույս ընծայած «հակապետական» նյութերի համար հոդվածների հեղինակների, խմբագիրների, հրատարակիչների «հանցանքները» դիտվում էին իբրև քաղաքական հանցանքներ, այդ տիպի «հանցագործությունները» քննվում էին հատուկ դատական պալատներում և հրապարակախոսներին, գրականագետներին պատժում էին իբրև պետության դեմ կատարած հանցագործներին։ Հաճախ էլ մեծ գումարների տուգանքներ էին դրվում և բանտ էին նետում խմբագիրներին ու հրատարակիչներին։ Ահա պարբերական մամուլի մղած հասարակական-քաղաքական պայքարի ընթացքում է, որ առաջ են գալիս հրապարակախոսական տարբեր ժանրեր։ Ցենզուրային հաշվեհարդարներն ստիպում են խմբագիրներին, ժուռնալիստներին դիմել «եզոպոսյան» լեզվի, դիմել ակնարկների, պայմանական և մշուշապատ արտահայտությունների։

Մ. Նալբանդյանն իր «Հիշատակարան»-ի մեջ գրելով «Հյուսիսափայլ»-ի մասին, անշուշտ ցենզուրային արգելքներն է ակնարկում, ասելով՝ «...Ճշմարիտ է և այն, որ շատ բան ևս չէ կախվում օրագրի հրատարակողից կամ նորա գործակիցներից. երկիրը շատ անգամ բուռեցանում է դալար ծիլեր, բայց և շատ անգամ հյուսիսի ցուրտը պաղեցնում է նորանց արևագալից առաջ...»։

Նայած իրենց քաղաքական-գաղափարական ուղղությանը, նայած հասարակական-քաղաքական պայմաններին մեր պարբերականները օգտագործել են

գրական տարբեր ժանրեր։ Մեր ամսագրերում, լրագրերում գրվել են՝ ֆելյետոններ, նկարագրական նոթեր, պատմվածքներ, պիեսներ, վեպեր, օրագրեր, երգիծական կենսագրականներ, պամֆլետներ, նամականի, նամակ խմբագրության, բառարաններ, առակներ և այլն, և այլն։

Հայ պարբերական մամուլի և հրապարակախոսության պատմությունը գրողը պիտի կանգ առնի նաև այս ժանրերի վրա։

Մեր ծանոթագրություններում մենք չենք լուսաբանել, թե հայ խմբագիրները, հրապարակախոսները ի՞նչ ձևեր, մեթոդներ են օգտագործել իրենց խմբագրականներում, հոդվածներում, պոլեմիկայում։

Հայ անվանի խմբագիրների, ժուռնալիստների մասին մենք գրել ենք մեր ծանոթություններում, ավելի ընդարձակ կանգ ենք առել՝ պրոգրեսիվ և դեմոկրատական խմբագիրների, հրապարակախոսների վրա։

Ինչպես ռուսական պարբերական մամուլի և հրապարակախոսության պատմությանը նվիրված աշխատություններում հիմնական տեղը տրվում է՝ պրոգրեսիվ և ռևոլյուցիոն-դեմոկրատական հրապարակախոսներին, նույնպես և մենք ավելի ընդարձակ ծանոթագրություններ ենք գրել՝ պրոգրեսիվ և դեմոկրատական ուղղության խմբագիրների ու հրապարակախոսների մասին։

Անհրաժեշտ ենք համարում համառոտակի կանգ առնել նաև մեր պարբերականների կյանքի տևողության և արտաքին ձևավորման հարցերի վրա։

Մինչև 19-րդ դարի վերջերը հայ պարբերականների մեծ մասը՝ ժուռնալներ են, թե արտաքին տեսքով և թե բովանդակությամբ՝ ամսագրեր, երկշաբաթաթերթեր, շատ հաճախ շաբաթաթերթեր։ Քիչ քանակով կան՝ տարեգրեր, 2—3 ամիսը մեկ անգամ լույս տեսնող պարբերականներ։

Տիպականն այն է, որ մեր պարբերականներից շատերի վրա տպագրված է՝ օրագիր, շրջագիր, բայց իրենց արտաքին տեսքով և բովանդակությամբ դրանք ժուռնալներ են, զուրկ են լրագրային նյութերից և հրատապ հարցեր չեն լուսաբանում։

Բերենք մի քանի օրինակ.

«Ազդարար Բյուզանդյանոց Կ. Պոլիս, 1840—41. վրան տպված է «կաղենդար», բայց լույս է տեսել իբրև շաբաթաթերթ։— «Արշալույս Արարատյանց» Զմյուռնիա, 1840—87. վրան գրված է օրագիր, իսկ լույս է տեսել իբրև կիսամսյա, 10-օրյա և շաբաթաթերթ։— «Հայրենասեր» Զմյուռնիա, 1843—46. վրան տպված է օրագիր, բայց լույս է տեսել իբրև կիսամսյա և շաբաթաթերթ։— «Կովկաս» Թիֆլիս, 1846—47. վրան տպված է շաբաթագիր, իսկ լույս է տեսել իբրև շաբաթաթերթ։— «Մեղու Հայաստանեաց» Թիֆլիս, 1858—86. վրան գրված է շրջագիր, իսկ լույս է տեսել իբրև շաբաթաթերթ։

19-րդ դարի հայ պարբերական մամուլի մյուս բնորոշ գիծն է այն, որ նրանք կարճատև կյանք են ունեցել։

Ահա մի քանի տվյալներ հայ պարբերականների կյանքի տևողության մասին։

Ուսումնասիրված մոտ 273 պարբերականներից՝

—	մեկ կամ մի քանի համար են լույս տեսել			34	պարբերական
—	մեկ կամ երկու տարի լույս են տեսել			14	»
—	մինչև մեկ տարի	»	»	67	»
—	» երկու տարի	»	»	28	»
—	» երեք տարի	»	»	29	»

—	մինչև	չորս տարի	լույս են տեսել			18	պարբերական
—	»	հինգ տարի	»	»	»	15	»
—	»	վեց տարի	»	»	»	4	»
—	»	յոթ տարի	»	»	»	1	»
—	»	ութ տարի	»	»	»	6	»
—	»	ինը տարի	»	»	»	5	»
—	»	տասը տարի	»	»	»	2	»
—	»	10—14 տարի	»	»	»	15	»
—	»	15—20 տարի	»	»	»	13	»
—	»	21—30 տարի	»	»	»	7	»
—	»	31—40 տարի	»	»	»	6	»
—	»	41—50 տարի	»	»	»	6	»
—	»	51—60 տարի	»	»	»	1	»
—	»	61—70 տարի	»	»	»	1	»
—	»	100—113 տարի	»	»	»	1	»

19-րդ դարի հայ պարբերական մամուլի երրորդ բնորոշ գիծն այն է, որ նա անհամաչափ տեմպերով է զարգացել՝ 1794 թվից մինչև 1840-ական թվականների վերջերը նոր թերթեր, ամսագրեր շատ քիչ են հրատարակվել, 1840-ից 1850 թվականների տասնամյակում 16 պարբերականով աճել է եղած մամուլի թիվը, իսկ 1850-ից մինչև 1890-ական թվականները նոր հրատարակությունների թիվն աճել է մեծ տեմպերով։

Մեր ասածը պարզելու համար, բերենք թվեր՝

Տարեթիվ	քանի նոր անուն է լույս տեսել	Տարեթիվ	քանի նոր անուն է լույս տեսել
1794—1800	2	1841—1850	16
1801—1810	3	1851—1860	28
1811—1820	4	1861—1870	54
1821—1830	2	1871—1880	41
1831—1840	4	1881—1890	61
		1891—1900	58

Այս թվերը հաստատում են հետևյալը.

Առաջին, որ հայ ժողովուրդը 19-րդ դարի սկզբներում դառնվելով թյուրքական և պարսկական բռնակալությունների դարավոր լծի տակ, ստրկական ծանր պայմաններում էր ապրում և մամուլն էլ չէր կարող ծաղկել։

Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միանալուց հետո, ճիշտ է դանդաղ, բայց որոշ ժամանակից հետո՝ դուրս է գալիս տնտեսական, քաղաքական և կուլտուրական զարգացման նոր ճանապարհ — կապիտալիզմի զարգացման ճանապարհը։

1850 թվականներից, մինչև 1900-ական թվականները, ինչպես հայ գիրքը, նույնպես և պարբերական մամուլը որոշ վերելք են ապրում։

Բացի ընդհանուր պատճառներից, դա ունի և մի ուրիշ պատճառ։ Դա այն է, որ 1860-ական թվականներից մինչև 70—80-ական թվականները արևմտահայ մամուլը աճել է մեծ թափով, հայերեն թերթերը բուռնում էին սունկի պես։ Սա ոչ թե հետևանք է նրա, որ Թյուրքիայում հայ մամուլն ավելի ազատ

էր, քան Ռուսաստանում, և կամ արևմտահայերն ավելի լուսավորված էին, քան ռուսահայերը, ոչ. դրա պատճառը բոլորովին այլ բան է։

1860—1870-ական թվականներին ռուսահայերն ունեցել են 5 պարբերական, որոնց թվում՝ «Համբավաբեր Ռուսիոյ»-ն հրատարակվել է՝ 1861—1864 թ. թ., «Հյուսիսաց»-ը 1863—64 թ. թ., «Հայկական Աշխարհ» ամսագիրը 1864—79 թ. թ. «Գարուն» ամսագիրը 1866 թ. և էջմիածնի «Արարատ» ամսագիրը 1868—1918 թ. թ.։

Այն ինչ նույն 1860—70-ական թվականներին Թյուրքիայում լույս են տեսել՝ «Արևակ» Կ. Պոլիս, 1861 թ. (ապակեսիպ), «Բուշնիկ» Կ. Պոլիս 1861—1862 թ.թ., «Մաղիկ» Զմյուռնիա 1861—65 թ.թ., «Կիլիկիա» Կ. Պոլիս, Կիսամսյա 1861—75 թ. թ., «Վարդ Մեսրոպյան» Կ. Պոլիս 1861—63 թ. թ., «Քնար Հայկական» Կ. Պոլիս 1861—64 թ. թ., «Ափեղցփեղ» Զմյուռնիա 1862 թ., «Բողբոջ» Զմյուռնիա 1862 թ. «Գարուն Հայաստանի» Զմյուռնիա 1862—63 թ. թ., «Դիմակ» Զմյուռնիա, 1862—63 թ. թ., «Զհիյուր Հայրենյաց» Կ. Պոլիս 1862—67 թ. թ., «Կիթառ» Կ. Պոլիս 1862—63 թ. թ., «Մամուլ» Կ. Պոլիս 1862 թ., «Համերժահարս» Զմյուռնիա 1862 թ., «Զհիյուս Քաղերականն» Կ. Պոլիս 1863 թ., «Բուշնիկ Պեզասյանց» Կ. Պոլիս 1863—66 թ. թ., «Ժամանակ» Կ. Պոլիս 1863—68 թ. թ., «Վարդ Կեսարիո» Կ. Պոլիս 1863 թ., «Տաճար Մուսայից» 1863 թ., «Օսմանյան երաժշտություն» Կ. Պոլիս 1863 թ., «Լուսափայլ» Զմյուռնիա 1864 թ., «Միսածանց» Կ. Պոլիս 1866—70 թ. թ., «Միլն Ավարայրիկ» Կ. Պոլիս 1866—67 թ. թ., «Էրիվան» Կ. Պոլիս 1868 թ., «Իրավունք» Զմյուռնիա, 1868 թ., «Օրագիր» Կ. Պոլիս 1868 թ., «Արարատ» Կ. Պոլիս 1869—72 թ. թ., «Ընկերատ» Կ. Պոլիս 1869—72 թ. թ., «Մամուլ» Կ. Պոլիս, 1869—82 թ. թ. և մի քանի այլ թերթեր։

Այս թերթերի մեծամասնության կյանքը շատ կարճ է եղել, արմատ չեն գցել ժողովրդի մեջ և արագորեն անհետացել են։

«Արձագանք»-ը ժամանակին գրել է. «Վաթսունական թվականներին Կ. Պոլսի հայերեն թերթերը սունկի նման էին բուսնում։ Տուրքանչյուր դպրոցավար... մի լրագիր էր հիմնում։ Թերթի նպատակը՝ ապրուստ մատակարարելն էր խմբագրին...»*։

Այդ ժամանակաշրջանի որոշ թերթերի խմբագիրներին է նկարագրել մեր անմահ երգիծաբան Հ. Պարոնյանը, գրելով, որ խմբագիրը շողոքորթում էր Աբիսողում Աղային անվանելով՝ «... պատվական ազգային մը, շնորհալի երիտասարդ մը, ողջամիտ մեկը... ազնիվ սիրտ մը, վեհանձն հոգի մը... հայրենասեր անձ մը... ազգասեր, ուսյալ, կրթյալ... դաստիարակյալ... ազնվասիրտ, ազնվախոհ, ազնվագեմ...»։ Իրը ճիղճի և արդարության պարտքը կատարելու համար խմբագիրը ստում է անվերջ։ Աբիսողում ազան ոչ մի չեղու չգիտեն, իսկ խմբագիրն ստում է «ինաս շունի, ես լեզվագետ ալիսի ըսեմ ձեզի...»։

Այդ ժամանակաշրջանի որոշ թերթերի դատարկությունը, քշվառությունն է արտահայտել Հ. Պարոնյանը «Մեծապատիվ մուրացկաններիս խմբագրի տիպում»։

Բացի նյութականից, մենք կարծում ենք, ուրիշ պատճառ էլ է եղել թերթերի սունկի պես բուսնելուն։

Դա այն է, որ 1860—70—80-ական թվականներին արևմտահայ երիտա-

---

* Արձագանք, 1893, № 131 (խմբագրական)։

սպրուքյան մեծ խմբեր ուսանելով Եվրոպայում, վերադառնում էին Թյուրքիա և ձգտելով իրենց ստացած «եվրոպական քաղաքակրթությունը» մտցնել հայերի մեջ, եվրոպական մամուլի օրինակով օրագրեր, շաբաթաթերթեր և ամսագրեր էին հիմնում, շատ երիտասարդների բաղձանքն էր «իմբրագիր» դառնալ, ֆրանսիական թերթերի օրինակով «լույս», քաղաքակրթություն տարածել, բայց իրական կյանքը դաժան էր, ոչ ոք չէր բաժանորդագրվում և այդ թերթերը իրար հետևից փակվում էին։

Թերթերի աղքատիկ բովանդակությունը, հիմնականում կյանքից կտրված լինելը, կույր ու համր լինելը դեպի կենդանի կյանքը, ժողովրդի աղքատությունը, տգիտությունը, խավարի մեջ տատապելը — ահա շատ ու շատ պարբերականների անհետացման հիմնական պատճառը 1860—900-ական թվականներին։

Այժմ մի քանի խոսք նորկա բիբլիոգրաֆիայի և նրա թերությունների մասին։

Ինչպես վերը նշեցինք, սա հայ պարբերական մամուլի առաջին ընդհանուր բիբլիոգրաֆիան է։ Մենք մինչև այժմ չենք ունեցել հայ պարբերական մամուլին կամ հրատարակախոհությանը նվիրված ամբողջական բիբլիոգրաֆիա։

Առաջին գործը լինելով հանդերձ, պարբերականների հոդվածների բովանդակության ընդարձակ ընդգրկումով, այս բիբլիոգրաֆիան բավական լայն գաղափար է տալիս հայ պարբերական մամուլի մասին, մեծապես օգտակար կլինի ընթերցողների գիտական և ուսումնասիրական աշխատանքներում։

Մենք աշխատել ենք ավելին տալ, քան թույլ էին տալիս գրքի սահմանները։

Որպեսզի կարևոր, հայագիտական նշանակություն ունեցող պարբերականների նյութերն ամփոփված լիննեն մեկ հատորում, մենք մի շարք ժուռնալների («Բազմավեպ», «Հանդես Ամսօրյա», «Մուրճ», «Արձագանք», «Անահիտ» և այլն) նյութերի նկարագրությունը ոչ թե ավարտել ենք 1900 թվականով, այլ շարունակել ենք մինչև 1955 թիվը, կամ մինչև պարբերականի դադարելը։

Բիբլիոգրաֆիան բարձրարժեք է, նրա նա կազմված է սկզբնաղբյուրների հիման վրա։

Ներկա բիբլիոգրաֆիան կազմված է միայն հայ պարբերականների նյութերի հիման վրա։ Նրա պարբերականների մի ընչին մասը մեր ձեռքը չի ընկել, կամ ավյալ ամսագրի լրիվ համարները չենք կարողացել ճարել, մենք չենք կարողացել տալ նրանց հոդվածների նկարագրությունը։ Գուցե հնարավոր լինի հետագա հրատարակություններում լրացնել այդ բացերը, թերինները։

Բայց կան այնպիսի բացեր, թերիններ, որ հետագայում էլ հնարավոր չի լինի լրացնել. օրինակ. հնդկահայ գաղութում 1794—1850 թվականներին հրատարակվել են 11 պարբերականներ, որոնցից 6-ը մինչև այժմ եղած տասնյակ հետազոտողներից, պրպտողներից ոչ ոք չի տեսել։

Բիբլիոգրաֆիան բարձրարժեք է, նրա այն կազմում են մասնագետները։

Մեզնում, ասյժմ գիտնականները չեն զբաղվում բիբլիոգրաֆիական աշխատանքով, միայն գրադարանային աշխատողներն են կազմում ամեն տեսակի բիբլիոգրաֆիաներ։

Ճշտերն այն կարծիքի են, որ բիբլիոգրաֆիան տեխնիկական աշխատանք է։

Բայց դա սխալ կարծիք է։

Համագույն բիբլիոգրաֆիական աշխատությունները, թե ՍՍՌՄ-ում և թե արտասահմանում, կազմվել են գիտնական-մասնագետների կողմից։ Օրինակ. Ա. Գ. Ծումինը եղել է Լենինգրադի համալսարանի պրոֆեսոր և կազմել է ռուսական գրականության բիբլիոգրաֆիան, Ն. Կ. Պիկասանովը և Ս. Դ. Բալուխատին ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամներ են և կազմել են գրականագիտական բիբլիոգրաֆիաներ։ Պատմագրական լավագույն բիբլիոգրաֆիան * կազմել է ակադեմիկոս Վ. Ս. Իկոնեիկովը, Ֆրանսիական գրականության պատմության բիբլիոգրաֆիան կազմել է Սորբոնի համալսարանի պրոֆեսոր Գյուստավ Լանսոնը և այլն։

Բիբլիոգրաֆիան տեխնիկական աշխատանք չէ, գրքերի ու մամուլի հոդվածների ֆորմալ նկարագրություն չէ։

Բիբլիոգրաֆիայի կազմողն, ամենից առաջ լավ պիտի իմանա լուսաբանվող հարցի էությունը, որպեսզի կարողանա իր նկարագրած գրքերի, մամուլի հոդվածները բացահայտել՝ ծանոթագրել, անոտացիաներ գրել։

Մենք ամբողջ քսան տարի զբաղվել ենք հայ գրականության բիբլիոգրաֆիայի աշխատանքով, հիմնավին ծանոթացել ենք հայ պարբերական մամուլին, գրել ենք և պատրաստել տպագրության հայ պարբերական մամուլի համառոտ պատմությունը և այս սկսել այս բիբլիոգրաֆիայի կազմմամբ։

Այսպիսով բիբլիոգրաֆիական կապիտալ աշխատությունները մասնագիտական աշխատանք են, գիտական գործ են, կազմվում են գիտությանը օժանդակելու նպատակով, դրա համար էլ նրանք կոչվում են գիտա-օժանդակող (научная, научно-вспомогательная) բիբլիոգրաֆիա, Բիբլիոգրաֆիան իդեալական աշխատանքի մի կարևոր բնագավառն է։ Բիբլիոգրաֆը պիտի ունենա մարքսիստական-լենինյան պատրաստություն, լինի մասնագետ գիտության տվյալ ճյուղի։

Գիտական կարևորություն չի ներկայացնում նաև բիբլիոգրաֆիական աշխատության նյութերի նկարագրման միասնական ձևը։

Ինչպես ամեն մի լուրջ գրական-գիտական աշխատանքներում, չի կարելի թույլ տալ, որ ամեն մեկն իր մեթոդը մտցնի, նույնպես և բիբլիոգրաֆիական աշխատանքներում չի կարելի թույլ տալ, որ ամեն մեկն իր կանոնները, նյութի նկարագրման իր հորինած մեթոդները մտցնի։

Մենք ստիպված ենք գրել այս հարցերի մասին, որովհետև վերջին տարիներին մեր մի քանի հիմնարկներում, թերագնահատելով բիբլիոգրաֆիան, հրատարակում են՝ անմշակ նյութեր, որոնք չունեն ո՛չ գիտական և ո՛չ էլ գործնական արժեք։

Մեր բիբլիոգրաֆիական աշխատանքներում, նյութերի նկարագրությունը կատարել ենք սովետական բիբլիոգրաֆիայի ժամանակակից մեթոդներով։

Եզրափակելով մեր խոսքը, պիտի ասենք. Ներկա աշխատությունն երկար տարիների և համբերատար պրպտումների արդյունք է։

Հայ պարբերական մամուլի բովանդակությանը նվիրված առաջին բիբլիոգրաֆիան է։

Ով տեղյակ է հայ պարբերական մամուլի 162 տարվա պատմությանը, գիտե, որ աշխարհով մեկ ցրված են եղել հայ քերթերը, հանդեսները, նա

---

* Иконников, В. С. Опыт русской историографии. Киев, 1908 [2 том].

անպայման կընդունի, որ անհնարին է, առանց թերիների, բացերի նկարագրել բոլոր հայ պարբերականների բովանդակությունը։

Նույնիսկ Մխիթարյանները, որ իրենց գրապահոցներում են կենտրոնացրել հայ պարբերական մամուլի հարուստ ժառանգությունը, մինչև այժմ չեն հրատարակել հայ մամուլին նվիրված որևէ բիբլիոգրաֆիա։

Չնայած մեր կազմած երեք մեծադիր հատորները տալիս են հայ պարբերականների բովանդակությունը 300-ից ավել տպագրական մամուլ ծավալով, բայց մեր աշխատությունն էլ ունի՝ թերիներ, բացեր։ Մենք չենք տվել և անհնարին էր ընդգրկել՝ հայ լրագրերի բովանդակությունը, չենք կարողացել գտնել [Հայաստանում] որոշ պարբերականների լրիվ կոմպլեկտները, հնարավորություն չենք ունեցել՝ կապ հաստատել և օգտվել արտասահմանի հայկական գիտական և գրական կենտրոնների աշխատակցությունից։

Միաժամանակ կրկնում ենք, որ տասնյակ ամսագրերի նյութեր մենք շարունակել ենք նկարագրել նաև 1900 թվից հետո, որպեսզի բիբլիոգրաֆիան լինի ամբողջական, ընթերցողը տեխալված չլինի միևնույն պարբերականի նյութերը փնտրել մեր աշխատության երկու հատորներում։

Եղած թերիները, բացերը կաշխատենք հաջորդ հրատարակության ժամանակ վերացնել։

Ծորին շնորհակալությամբ կընդունենք ճշգրիտ ուղղումները, լրացումները և քննադատական դիտողությունները։

ՀՈՎՀ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԿՐՃԱՏՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ակադեմիա — ակադ.
արտադրական — արտադր.
առողջապահության — առողջապահ.
բանասիրական — բանասիրական.
բիբլիոգրաֆիա — բիբլիոգր.
բովանդակության — բովանդ.
բնագիտական — բնագիտ.
գեղարվեստական — գեղ.
գիտական — գիտ.
գյուղատնտեսական — գյուղատնտ.
գրադարան — գրադ.
գրական — գրակ.
գրախոսության — գրախոսակ.
թարգմանության — թարգմ.
քիմ — քիմ.
մոդուլրգական — մոդ.
լեզուս — լեզ.
խմբագիր — խմբ.
ժանրության — ժանրակ.
կուլտուրական — կուլտ.
համալսարան — համալս.
հայկական — հայկակ.
հասարակական — հասարակ.
հատոր — հատ.
հնդկական — հնդ.
հրատարակության — հրատ.
մաս — մ.
նկարիչ — նկ.
շաբիկ — շաբ.
շարժանագության — շար.
շրջան — շրջ.
պարբերական — պարբ.
պրակ — պրակ.
ռուսական — ռուս.
տնտեսագիտություն — սոց.
Միացյալ Պետությունների — ՄՊՀ
վիճակագրության — վիճ.
տիրաժ — տիր.
տնտեսական — տնտ.
տպարան — տպ.
ուսումնական — ուս.
քաղաք — ք.
օրինակ — օր.

Ա.Ղ Թ Ա Ր Ա Ր

ԹՒՐԱՑ ԱՄՍՈՑ

1794

Բարեպաշտ Գարոնաց և
Մաքրակենցաղ Տիկնաց
} Մատրասիս Հայոց։

կատեր լով իմով երէ զօժանդակութեն տպարանին՝ և երէ բարեպէս յառաջ երկ ան ուսումնասիրաց, յարմար վարկայ նոսիրել առաջի ձեր թատրգ ազգասիրուհե, զխոնարհութեն նայիդ ունիլ, ի տպի ցմամբ՝ երբայս ածել զ տետրակ մի յաճմուճ վէպ բջնոց ամոց, ուսնոճ անեալ ապագարարուհ յորմէ իմացուհին լինել լոցէ ընթերցողաց. ծայրագոյն անգ քն նոյնոյ ամոց, երբէ՝ ի զանազան կապեցից, երէ՝ ի զանազան քարտիզից, և երբէ այլոց զննազանեց գրոց, նաև բանք հնարկաւորք և քաղցրալսելիք, և՝ ի վե ջ նաւելն առ տրակիս, զօրացոյց մի հետևեալ ամոց, պարբերակե ալ՝ ինձ զամ.ս արքոց, և զաւրա ծննդեան և լրման լուսնոյ և սլն։

Ա.Ղ

Հայերեն անդրանիկ պարբերականի՝ «ԱԶԴԱՐԱՐ» ամսագրի
առաջին երեսը

1794

ԱԶԴԱՐԱՐ: *Թիւրա ամսոյ 1794—1796*

Ի Հայրապետութենան Տն Ղուկասու Սրբազան Կաթողիկոսի Ամենայն Հայոց 'ի Վաղարշապատ, 'ի Թադաւորութենան Օգոստոսափայլ Տեառն Երկրորդի Հերակլեայ Արքայի 'ի Քիֆլիզ, Ընդ հովանու Սուրբ Աստուածածնայ եկեղեցւոյն որ 'ի Մադրաս, 'ի տպարանի Տր Յարութիւն Եմաւննան Շիրազեցւոյ:

— խմբագիր՝ Հարութիւն ք. Եմավոնյան:

Аздарар. Известия. Ежемесячник. Мадрас. 1794—1796.

Մեր առաջին խմբագիր Հարութիւն քահանայ Եմավոնյանը ծնվել է Իրանի Շիրազ քաղաքում 1750 թվին: Նրա հոր անունը Եմավոն էր:

Մեծ դժբախտութիւնը, գնահատ երկու որդիների մահը — մի շաբաթում, սաստիկ ազդում են զգայուն Հարութիւն քահ. Եմավոնյանի վրա, նա 1774 թվին առանձնանում է Բաբաքվա լեռներում, Շիրազից երկու ժամվա հեռավորութեան վրա, այդտեղ, հայ գերեզմանատանը, ապրում է միայնութեան մեջ: Այդ ճգնութեան ժամանակ նա սերտ կապեր է հաստատում պարսիկ դերվիշների հետ: Յոթ տարի մնալով առանձնութեան մեջ, Հարութիւն Եմավոնյանը ուսումնասիրում է պարսկական և արաբական լեզուները, գրականութիւնը: Յոթ տարի հետո, իր կնոջ և բարեկամների խնդրանքով նա իջնում է լեռից և կարճ ժամանակից—1780 թվին մեկնում է Հնդկաստան, բնակութիւն է հաստատում Մադրաս քաղաքում, և այնտեղ ս. Աստվածածնա եկեղեցում քահանայութիւն անում:

Այդ ժամանակ, Մադրասում կար հայ հարուստ Հակոբ Շահամիրյանի տպարանը, որ հիմնվել էր 1772 թվից և բավական արժեքավոր գրքեր էր տպագրել: Հարութիւն քահ. Եմավոնյանը իր աշխատանքով ու ծախսով 1789 թվին հիմնում է նոր տպարան, պատրաստում է տառեր, որոնց նա անվանում է «որդի վշտաց», ակնարկելով իր քաշած տանջանքները այդպիսի մի ծանր գործում:

Առաջին գիրքը, որ տպագրվել է Հարութիւն քահ. Եմավոնյանի սեփական տպարանում, դա Մարիանէ կուսի վկայաբանութիւնն է («Պատմութիւն սրբոյ կուսին Մարիանէ»): Այդ գրքի հիշատակարանում (1789 թ.) ասված է. «Տպագրեցաւ գրքոյկս այս 200 հատ ի պատիւ սերտ մանկամին իմոյ աղնվագոյն Աղա Մարութ Հովսէփ Փոնտզեանց կոչեցալ... ով ոք վայելէք զքաղցրաճաշակ գրքոյկս այս, յիշեցէք՝ որպէս վշտաց և գիտ գրոց որ յօրինեցաւ ձեռամբ իմով, ամենայն պարագայս քէ տառաշինութիւնն և քէ շարուաճն կապարից, ծախիւք վաստակօք իմով՝ Յարութիւնի Եմաւնն, շնորհօքն Աստուծոյ քահանայ Շիրազեցիս»:

Այս գրքից բացի Հ. Եմավոնյանը հրատարակում է նաև՝ «Պատմութիւն կայսերն Փոնդիանոսի» [1790 թ.], «Տաղարան Սիմէոն կաթողիկոսի» [1791 թ.] և այլ արժեքավոր գրքեր:

Տեր Հարութիւն քահ. Եմավոնյանը ոգևորված իր տպագրած գրքերի տարածումով, ցանկանում է մի պարբերական հրատարակել: Այդ ժամանակ (1794 թ.) Մադրասում արդեն լույս էր տեսնում անգլերեն մի ամսագիր: 1794 թվի օգոստոսի

7-ին մի հայտարարություն է հրատարակում՝ ևս բարեպաշտ պարոնաց և մաքրակենցաղ տիկնաց Մադրասիս Հայոց, որտեղ ի դիտություն է հայտնում, որ Ղամար (հոկտեմբեր) ամսից հրատարակելու է «Աղդարար» անունով հայերեն մի լրագիր։ Այդ հայտարարության մեջ բացատրվում է լրագրի նպատակը և կարևորությունը. «Մտածելով ամենայն ամախ վերջը մի տետրակ հրատարակել, անվանելով «Աղդ-արարօղ» որի նպատակն է հաղորդել հարգելի Մադրասաբնակ ընթերցողներին նույն ամսվա նշանավոր անցքերի և զանազան լրագրներում տպված զանազան հետաքրքիր տեղեկությունների մասին, նույնպես հարկավոր բաներ և դիմարժալի լուրեր (քաղցրալուրք)։ տետրակի վերջում հետևյալ ամսո օրացույցը, որի մեջ կպարունակվի արբերի տոները, լուսնի ծննդյան և լրման օրերը»։

Այդ հայտարարությունը տպագրված է 1794 թվի Քիրա ամսի 30 (հոկտեմբեր 16) առաջին համարում, Դրա տակը գրված է. «Ձևոնադրողք քեղ[illegible] 28 հոգիք— այսինքն 28 հոգի են բաժանորդ գրվել «Աղդարար»-ին»։

«Աղդարար»-ի «Առաջաբանություն»-ում հետևյալն է ասված ամսագրի նպատակների մասին [1]. «Որովհետև բարեկարգ անգլիացիք սույն հրատարակությունից մի ամսով առաջ սկսանցին տպագրել յուրաքանչյուր ամսի վերջը մի տետրակ, որպես մերը և ինչպես տեղեկացա դրանց մեջ պարունակվում են իրանց ազգի համքավավոր մարդկանց կենսագրությունը, զանազան պատմություններ և ամանց արժանավոր գրվածքներ... և տետրակի վերջում գվարճության համար տպագրվում են զանազան վաճառելի իրերի գները, նավաբնակության, նավագնացության մասին տեղեկություններ և այլն։ Առնելով այս տետրակն ինձ օրինակ, ես էլ ահա սկսում եմ ամեն մի ամսի վերջին տպել այսպիսի մի տետրակ, որը իր մեջ պիտի ամփոփի զանազան խրատական բաներ կամ թարգմանություններ զանազան լեզուներից և ահա իմ ուրախակից երիտասարդները խոստացել են ինձ օգնել այդ բանում։

Եվ կամ զանազան հատորներ հանած մեր գրքերից և մենք կաշխատենք զանազան լուրեր ձեռք բերել Հայաստանից (ի տանէ Հայոց) և այլ հայրենակ տեղերից, նույնպես և Պարսկաստանից, այնպիսի լուրեր, որոնք դուք չեք լսել և տեղեկություններ զանազան կազմվածներից այնպիսի լուրեր, որոնք հարկավոր են իմանալու և որոնք շատերին կուրախացնեն... Մեր տետրակներում կլինեն նաև նույն օրերում վաճառելի իրերի գները, որովհետև սա օգտակար կարող է լինել վաճառականներին և ևս այլոց։ Գալով այս տետրակիս և նրա մեջ նշած գրվածքներին՝ համարձակվում եմ ասել, որ ընթերցողները չեն գտնի իմաստության գրվածքներ և խոստովանում եմ, որ ոչ ես և ոչ իմ օգնականները բոլորովին հմուտ չեն քերթության արհեստին և ոչ բուն հմուտ գրոց... Այս պատճառով խնդրում եմ ուղարկել լուրեր, ախորժ չարադրություններ, ոտանավորներ և այնպիսի գրվածքներ, որոնք պիտանի են և հաճելի հասարակության, խոստանում եմ տալ ևս ի պարծանս շարադրողաց և երշանկութիւն ազգին մերոյ»։

Մենք մանրամասն նկարագրել ենք «Աղդարար»-ի հոդվածները, այստեղ կարիք չկա նորից դրելու նրանց բովանդակության մասին։

Անհրաժեշտ ենք համարում ասել, որ «Աղդարար»-ի № 1-ում տպագրված են նաև երկու նկարներ՝ Արղության արքեպ. և նկատերինա 2-ի շքանշանները, նույն Արղությանի կնիքը և նախկին պատասական դիմարկը, իսկ վերևում՝ կայսերական քաղ։

«Աղդարար»-ի երկրորդ համարն ավելի լավ է կազմված. ունի «Աղդ», որտեղ ասված է, թե խմբագրությունը նկեղեցու զանգակատան տակը մի արկղ է փակցրել, որտեղ ամեն մարդ կարող է՝ լուրեր, հոդվածներ, գցել՝ հրատարակելու համար. «Մենք ամեն օր կբացենք արկղը և ինչ որ այդտեղ գտնենք, շատով կուղարկենք կարգված վերակացուներին, որպեսզի վերահասու լինեն գրվածքներին և ինչ որ նրանց մեջ հարմար համարեն, ուղարկեն տպարան որ տպենք»։

1794 թվին տպվել է 4 տետրակ 21—28 էջից, 1795 թվին 12 տետրակ 24—36 էջից, 1796 թվին 2 տետրակ։ Ուրեմն, հայ առաջին պարբերականը «Աղդարար»-ը 1794—1796 թ.թ. լույս է տեսել ընդամենը 18 տետրակ։

«Աղդարար»-ը գրաբար էր հրատարակվում, բայց տպագրվում էին նաև աշխարհաբար հոդվածներ, քերթվածքներ՝ Նոր-Ջուղայի և Հնդկահայ բարբառով։

[1] Գրաբար է, մենք տալիս ենք թարգմանաբար։

Ահա մի նմուշ աշխարհաբարի. «Շատ ժամանակ ա ես «Ազդարարին» կարդալով ցանկանանի էլ էլ մին բան գրեմ, բան չի գտամանի, ես անհատական պատահմունքին արժան համարեցի դրել և իմ ցանկութիւնն կատարել. խնդրեմ նրե ժամանակ ունենաս տաս վերակացվացն որ սրրագրեն և գրոց լեզվով գրեն, թե ոչ՝ էապես տպիր, հատարակութիւնն իմանա ում գրվածքն ա՝ կնեռի աշխարհարար գրելնա, վասն որ իմ կենաց մեն տաղտկից էլ ոչինչ հավել չեմ կարդացել և էս էլ ողջ իմ մակի հնաբածը չի, թե ոչ ես էլ կգտամանայի իմ գիտութիւան վրաւ («Ազդարար», 1794, էջ 184)։

Ինչպես երևում է «Ազդարար»-ի հայտարարություններից (Ազդ. 1794 էջ 76 և № 2) և խմբագրական պատասխաններից, մի խումբ երիտասարդներ՝ խմբագրել, օգնել են Հարությունն քահ. Շմավոնյանին, նա մեծ հոանդով աշխատել է՝ շարելու, տպելու, ծաղկատառեր հնարելու, գեղեցիկ ձև տալու վրաւ։ Մի քանի ուսանավորներ կարմիր գույնով են տպված։

«Ազդարար»-ի 1795 թվի 253—254 էջերում տպագրված է Մադրասի խանի հրովարտակը, որով հայ խմբագրին իրավունք է տալիս տպելու՝ պարսկերեն և արաբերեն գրքեր։

1795 թվի 139 էջում տպված է Հովսեփ արքեպ. Արղությանի շնորհավորականը։

«Ազդարար»-ը մեծ ընդունելություն է գտել Մադրասում և ուրախությամբ հնդկահայերը կարդացել և տարածել են. քշնամիներ էլ է ունեցել, «Ազդարար»-ը։ Հետևյալ կերպ է արտահայտվել մի քաղաքագիտությունում այդ վերաբերմունքը. «Ազդակ արտի ընդդէմ վատասիրտ արանց որք խոռվեն ի բարի գործոյ այլոց...ա։ «Ի ժամանակն հնոյ Հնդկաստանի, մեր ազնեայք կարօտ էին վասն նոցա (տպարանի և լրագրի) որոյ յաջողեալն եղև նախ ի Մադրաս. հաստատուբիւն մեր կարծէր իբրև լոյս երկնից իշեալ, այր զարամբ լինէր ոսկւով և արծաթով շրջանակել...ա։

«Ազդարար»-ում տպագրվում էին շուկայի տպրանքների գների ընդարձակ ցուցակները, քաղաքացիները վաճառականներ էին, որոնք Հնդկաստանից և այլ երկրներից տեղեկություններ էին հայտնում առևտրի և բորսայի մասին, տպագրած հայտարարությունները առևտրական բնույթի էին։

«Ազդարար»-ում տպվում էին նաև լուրեր, տեղեկություններ հնդկահայ գաղութականության մասին. յուրաքանչյուր ամսին՝ ծնվածների, մեռնողների, ամուսնացողների մասին։

Ամսագիրն ուներ նաև քաղաքական բաժին, որտեղ տպվում էին եվրոպական և հնդկական լրագրերից թարգմանված քաղաքական լուրեր։ «Ազդարար»-ում արձագանք է գտել ֆրանսիական մեծ ռևոլյուցիան։ «Ազդարար»-ում տպագրված մի շարք նյութեր, լուրեր ուղղված են այդ ռևոլյուցիայի և նրա առաջնորդների դեմ։ Հետևելով նկատելիորեն երկրորդի քաղաքականության շատագով Հովսեփ արքեպ. Արղությանի ցուցումներին, «Ազդարար»-ը դեմ էր արտահայտվում ֆրանսիական ռևոլյուցիային։

«Ազդարար»-ում հոդվածներ, երկարապատում ուղերձներ ունի Ռուսաստանի հայոց առաջնորդ (հոգևոր) Հովսեփ արքեպիսկոպոս Արղության երկայնաբազուկը, որոնց մեջ պատմվում է նկատելիորեն կայսրուհու արած շնորհների և Գրիգորիոպոլիս քաղաքի հիմնադրման ու հայերով բնակեցնելու մասին։ Իր մի ուղերձի մեջ Արղության-երկայնաբազուկը գրում է ֆրանսիական ռևոլյուցիայի մասին և Լուի 16-րդ կայսեր դիմաստումը որակում է, որպես անաստվածների ու խռովարար անբարիշտների ավազակային գործ։

«Ազդարար»-ի 1794 թ. հենց առաջին համարում տպագրված է Հովսեփ արքեպ. Արղությանի «Օրհնության թուղթ»-ը, որով նա աշխատել է քաղաքական և կուլտուրական կապեր հաստատել հնդկահայ գաղութի հետ, նույնիսկ հատուկ ներկայացուցիչ է նշանակել Մադրասում՝ Շահամիր Սուքիասում Շահամիրյանին։ Այս փաստը և ընդհանրապես «Ազդարար»-ի կապերը Հովսեփ արքեպ. Արղությանի հետ, վերջինիս ուղերձները, նամակները, ցույց են տալիս, որ ռուսական պետության օգնությամբ, Հայաստանը սուլթանական ու պարսկական լծից ազատագրելու գաղափարը Իսրայել Օրու, Հովսեփ էմինի և հնդկահայ գործիչների ստեղծած շարժումը ոգեշնչել է նաև «Ազդարար»-ին և նրա խմբագրին։

«Ազդարար»-ն ունի նաև գրական նյութեր՝ ինքնուրույն և թարգմանական։ Ինքնուրույն գրվածքներից է՝ «Հաշատուր Ջուղայեցու պատմութիւն պարսից»-ը և Հակոբ Այրիյանցի «Պատմութիւն Հնդկաստանի» գրվածքը։

Հաշատուր Ջուղայեցու «Պատմութիւն պար-

սից»-ը մի ժամանակագրություն է որտեղ հեղինակը տալիս է ամենահին ժամանակներից սկսած՝ Կյուրոսից մինչև Զենդ Քերիմ խան պարսից թագավորների պատմությունը։ Հեղինակը ժամանակակից է Զենդ Քերիմ խանին, իր ժամանակի դեպքերը նկարագրում է մանրամասն և պատմությունը հասցնում է մինչև 1779 թիվը։

Իր գրքում Խաչատուր Ջուղայեցին խոսում է նաև հայոց պատմության մասին, կանգ է առնում իր ծննդավայր Ջուղայի կործանման և նկեղեցական գործերի վրա։ Հայրենասեր հեղինակը նկարագրում է հայ ժողովրդի տառապանքները պարսից շահերի ասպատակություններից։ Ահա մի կտոր նրա պատմությունից, որտեղ նկարագրվում է, թե հարուստ և ճոխ Նոր-Ջուղան ինչպես է քարուքանդ արվել Նադիր շահի և այլ ամենի բռնավորներու կողմից։

«... Արդ ուրեմն արդարև սրպիսի քարաւիրտ այն այր իցէ արդեօք որ տեսանիցէ զրնակութիւնս գերափոխուեալ՝ անձանց ի հիմանց տապալեալ, և ոչ ողբս առնել փղձկեալ արտիւ ողբասցէ ի վիրայ նորա։ Որպիսի և կամ ով այն այր իցէ, իսկ որ տեսանիցէ փոխանակ գերապանծ և հրաշատեսակ անձանց՝ ճագարք և ողնիք, գայլք և աղուէսք բնակեալք ի մէջ գեղեցկազարդ տապրանից, և ոչ իսկ սրտառուչ սրտիւն ի վերոյ այնպիսի ձախողակ դիպուածոյ հառաչեսցէ»[1]։

Այսպիսի ողբեր շատ կան գրքում՝ հայ ժողովրդի կրած թշվառությունների մասին։

Հակոբ Այությանցի «Պատմութիւն Հեյդարլի խանին» գիրքը վերաբերում է Հնդկաստանի պատմությանը։ Արժեքավոր է գրքի առաջաբանը, որտեղ հեղինակը գրել է հայ պատմագիրների ընդարձակ ցանկը, մի բան, որ շատ դժվար էր այն ժամանակ, երբ մեր պատմիչների մեծ մասը դեռ չէին տպագրվել։ Կենշանակի ցանկի կազմողը լավատեղյակ և հմուտ է եղել մեր ձեռագիր գրականությանը։

«Ազդարարաց»-ի մեջ տպագրված են նաև բանաստեղծություններ՝ ինքնուրույն և թարգմանական։ Ինքնուրույն գրվածքներից են՝ «Բարեկամաց, «Հայ որդի Հայից», «Սատանի Զարխա կեղծանուններով գործերը։ Անգլերենից է թարգմանված «Փոքրիկ Զեկո» պատմվածքը։ Նախնական, դեռ չլարդացած գրությամբ մենք «Ազդարարաց»-ում հանդիպում ենք նաև հրապարակախոսական նյութերի։ Այսպես. «Ազդարարաց»-ի 1795 թվի հուլիս-օգոստոս ամիսների համարներում տպված է «Հայ որդի Հայից» և «Ազգակից» կեղծանունների տակ թաքնված մեր առաջին հրապարակախոսների բանավիճը՝ հայ ժողովրդի ազատագրության մասին։

«Հայ որդի Հայից» ժուռնալիստը քննադատում, մերկացնում է ունևորներին, հարուստ վերնախավի անտարբերությունն ու իներտ վերաբերմունքը դեպի հայ ժողովրդի ապագան, գրում է ժողովրդին լուսավորելու, առաջ մղելու անհրաժեշտության մասին։

«Ազգակից» կեղծանունով գրող մյուս ժուռնալիստը, նույնպես ընդգծում է հայ ժողովրդի հետամնացությունը, անհրաժեշտ է համարում կարևոր տեղ տալ, առաջ մղել ժողովրդի լուսավորության, դպրոցների շինարարության գործը։

Երկու ժուռնալիստներն էլ կոչ են անում «միաբանվել», որպեսզի հնարավոր լինի ազատություն ձեռք բերել։ Մեր առաջին ամսագիրը բավական աղքատիկ տեսք ունի. ծավալն է 16×19 սանտիմետր։ Չնայած ապագրական գործը այդ ժամանակները շատ հետամնաց վիճակում էր, բայց հայ անդրանիկ խմբագիր Հարություն քահանա Շմավոնյանը շատ ջանքեր է թափել իր ամսագիրը լավ ձևավորելու համար։ Տարբեր համարներում ամսագրի մեջ կան նյութեր, որ տպվել են դունավոր, խմբագրության հատուկ հանձնարարությամբ («Վասն Ազդարարին») պատրաստել են տրվել նկարներ՝ ինչպես օրինակ Կոստանդ Քաղեոսի փորագրած օդապարիկ գնդի և ուրիշ նկարներ։

«Ազդարարաց»-ի բոլոր տետրակների վրա, էջմիածնի Ղուկաս կաթողիկոսի անունից հետո, միշտ տպագրվում էր. «և ի թագավորութեան օդոստափսլ Տեառն երկրորդի Հերակլեայ Արքայի ի Թիֆլիզ»։

«Ազդարարաց»-ը լեզվական տեսակետից անմշակ էր. անատման տատասխանները և շարահյուսական ախալները աղավաղում էին միտքը։

«Ազդարարաց»-ը դադարեց 1796 թվի մարտ ամսին՝ 18-րդ համարից հետո։ Նրա խմբագիր Հարություն քահանա Շմավոնյանը այնուհետև որևէ գրական գործ չի կատարել։ Վախճանվել է նյութական ծանր վիճակում՝ 1842 թվականին։

[1] Խաչատուր սրճեցի Ջուղայեցւոյ Պատմութիւն պարսից։ Վաղարշ, 1903, էջ 103

1794 ԹԻՒ. ԱՄՍՈՑ № 1

1 Եմավոնեան, Հարութիւն Տաճ. *Առաջաբանութիւն [«Ազգարարութ-ի հրատարակութեան և խնդիրների մասին]. էջ 3—5*

2 Տեսիլ *Միրզային, նշանակիչ բնութեան մարդկային կենաց. էջ 5—10*

Բարոյա-փիլիսոփայական:

3 Թարգմանութիւն գրոց միոյ գրեալ Պարոն Եամիր Սուլթանումանէ առ մեծ բժիշկն քաղաքիս Պարոն Ջիմս Անդրսանն. [Ստորագր. «Եամիր Սուլթանումա]. էջ 11—13

Գրում է հայոց ծագման մասին:

4 Թարգմանութիւն յօդուածոյ միոյ 'ի սպանիացւոց յաշխարհագրոյ պատմութիւնէ, արարեցելոյ 'ի հեղինակ Սրբակրօն Պետր Մուրիլօէն, 'ի Մեքսիկօ, և տպագրեալ ի Մադրիդ, յամի 1752. էջ 14

5 Արզութեան, Հովսէփ (Արհեպիսկ.)։ *Սրբոյ և Մեծի Աթոռոյն էջմիածնի ծայրագոյն նուիրակ, Ռուսաց երկրի Ամենայն Հայոց Ազգին Առաջնորդ Հիմնադիր Նոր Նախիջևանա և Գրիգորուպօլու Հովսէփ Արք. Նպիսկոպոս. էջ 15—26*

Ուղերձ ռուս-տաճկական պատերազմի, քաղաքական հարցերի և ռուսահայերի մասին:

6 Օրինակ *երկրորդ Օրհնութեան Թղթոյն 'ի նոյն Սրբակրօն Տեառն Հովսէփայ Արքեպիսկոպոսէ առ Հաւատարակ ազգս Հայոց բնակեալ ի Հնդիկս. էջ 27—28*

Գրում է մշտական կապ հաստատելու մասին հնդկահայերի հետ։ Հայտնում է, որ Մադրասում Շահամիր Սուլթանում Շահամիրյանը և Լոնդոնում Փիլիպոս Մանուչարյանն իր ներկայացուցիչներն են:

7 Նկար: [Հայկական դիրքը]:

8 Ծկատարիճէլաւու *պարոն գուբեռնաթօր կախօվսկի։ [Ստորագր. «Ծկատարինէ]. էջ 29—32*

Գրիգորուպոլի քաղաքի շինարարության մասին Եկատերինա II հրովարտակն է։ Դրան կցվում է նաև բացատրագիր:

9 Հաճդէսն *օծմամբ հիմնարկութեան քաղաքին՝ անուանեալ Գրիգորուպօլիս. էջ 33—43*

10 Սրբակրօն *Տէր Յարութիւն Եմաւօնեան։ [Ստորագր. «Ուրախակիցս]. էջ 42*

Ուղարկում է ներքևում հիշված չափածո ստեղծագործությունը — տպագրելու

11 Բարեկամ: *«Նախ առ ընթերցօդ՝ է պիմ դրան. ոչ թէ խրատ՝ այլ զաղաչան, օրինակօք՝ բանասիրաց և մեկնութեամբ ըստ իմ կարեաց...» էջ 42—46*

Առանավոր։ Շնորհավորում է լրագրի ծնունդը:

12 [Հայաստարարութիւններ]. *Նիկողոս Յովհաննէս Գուլամիրի — որ խանութ է բացել և ապրանքներ է վաճառում:*

13 [Օրացոյց]— *վերջին էջում. էջ 48*

1794 ԴԱՄՍ. ԱՄՍՈՑ № 2

14 Պատմութիւն *մանկան միոյ, զոր գտեալ եղև իբր երկօրեայ ի ծերէ միոյ, զարգացաւ կամբամբ Աստուծոյ, աշխատեցաւ անօգնական, և ի վախճանի ի գեա զմխիթարութիւն կարողութեան օգնական լինիլ աղքատաց։ Թարգմանեալ յանգլիացոց. էջ 49—63*

15 Առակ. *էջ 63—64*

16 Նկար: [Ներդիր].

17 Պատմութիւն *Սատան Բառախաչին նշանակիչ բնութեան մարդոյ լինելն օժանդակ առ չարն. էջ 65—68*

18 Առակ. *էջ 68*

19 Համառօտ *ասութիւնք ինչ՝ տաղաչափական, ոճիւ, զոր ի յոմանէնէ բանասիրէ ասացաւ, առ ի պրօսանս ընթերցողաց։ [Բանաստեղծութ.]. էջ 69—72*

20 Յաղագս *դաւանանութեանն։ [Առակ]. էջ 73*

21 Նոր *ամիսք Գալիլեացւոց, այսինքն Ֆրանսիսաց սկսեալ սեպտեմբեր 22... էջ 74—75*

22 [Հայատարարութիւն — *թղթակցութիւնները ժամի դանդակատան տակ դրված արկղի մեջ դնելու մասին]. էջ 76*

23 Ուրախակից: *Սրբակրօն Տէր Յարութիւն Եմաւոնեան։ «Ազգարարութ-ի վերիպակների մասին]. էջ 77*

24 «Ողբամ *ազգարար տրտմութեամբ մեծաւ...». էջ 77—81*

25 Լուրք *Ֆրանսիսաց ընկալեալ ի յամապատասխանէ միոյ 'ի բաստրացւոյ [Ֆրանսիական ռևոլուցիայի մասին]. էջ 82—84*

26 Սաղկահաղ *լուրք կազէթից հանդիպեալ նախերգանօք ի թարգմանչէ սոյն լրոյս առ ընթերցողս։ [Ներքին և արտաքին լուրեր]. էջ 85—89*

27 Դուլամրեան Ստեփանոս Հովհաննէսի: *Հատոր գրոյ միոյ գրեալ մատր Ըստիֆն Պապանին*

Սրճուլի կողմէ ցանքին առ պարոն Փիլիպպոս Յակոբ Պառոնեան. էջ 89—91
28 Մաճազդ. ծնունդ. էջ 91
29—30 Ներսո գրածս Մադրասումն ծախուել է... [Ապրանքների գներ]. էջ 96
31 [Ամավա առների օրացույց]. էջ 96

1794 ՀԱՄԻՐԱՅ ԱՄՍՈՑ № 3

32 Յետևմունք Պառոնեան մանկանն [այսինքն փոքրիկ Յակիս] սկսելոյն անցեալ յԱզդարարին [Թարգմ. անգլերենից]. էջ 97—111
33 Լուրք պարսից. էջ 112—114
34 Յաղագս կամապաշտութեան [Առակ]. էջ 114
35 Ուրախակից: Սրբակրօն Տեր Յարութիւն Եմաւօնեան [Նամակ]. էջ 114
36 Բարեկամ: ունմանելոյ ազդարար հարց խոհականաց... [Ջափածո]. էջ 115—121
37 Առած նզօրսի սակս խորհրդոյն մկանց... էջ 121—122
38 Պատուրիւն քրեական մեղաց աւարտեցաւ նօվեմբեր 28 օր է համիրայ... էջ 122—125
39 Սրբակրօն Տեր Յարութիւն Եմաւօնեան [Նամակ և ապա մի ծովային ճանապարհորդութեան նկարագրութիւն]. էջ 126—130
40 Յաւարս գրոյ միոյ գրեալ ի պարոն Խալիկ Մատուր Ջարիֆեանէ ի Պուլպիծանկ կղզոյէն նախայ 16։ [Նավային ճանապարհորդութիւն]. էջ 131—132
41 Ազդարարութիւն: [Հայտարարութիւն մեկի մահվան մասին]. էջ 139
42 Յաւարս գրոյ միոյ գրեալ ի պարոն Մոսէփաննոս Գուլամրեանէն։ [Մի անգլիացու ճանապարհորդական նկարագրութիւն]. էջ 140—141
43 Ներսոյ գրածս Մադրասումն ծախուել է... [Ջանազան ապրանքների գներ]. էջ 142—147
44 [Տոճացույց]. էջ 148
45 Լուրեր. [ծնունդ, ամուսնութիւն]. էջ 149
46 Յատկութիւն նաւացն։ [Նավերի երթևեկութեան մասին]. էջ 150
47 Յանկ առարակիս. էջ 151

1794 ԱՐԱՄ ԱՄՍՈՑ № 4

48 Յետևմունք և աւարտ Պառոնեան մանկանն [այսինքն փոքրիկ Յակիս] սկսելոյն Դամա ամսոյ յԱզդարարի. էջ 152—163
49 Առ վերակացուս գրուածոյն դանելոց ի անդկի Ազդարարին։ [Անստորագիր հոգված քահանա ուսուցիչ՝ Տեր Սամվել Տեր Փիլիպոսյան Ղայթմազյանցի մասին]. էջ 164—172
50 Փոքր ինչ ասութիւնք խրատականք առ ամենայն ընթերցողս... էջ 173
51 Պատահմունք և պատիժք դիպելոյ զամբարտաւան Թագաւորն արդարակշիռ կոչեցեալ. էջ 174—180
52 Ազդարար: [Լուրեր Կալկաթայից. գրում է նաև Հովսեփ Էմինի գրքի անգլերեն հրատարակվելու մասին]. էջ 180—183
53 Ա. Բ. Առ բանակատար Ազդարարին Հայոց։ [Թղթակցություն Մադրասից. աշխարհաբար]. էջ 184—185
54 եի յերրորդ ամ կեանս տղայութեան իմ...ս։ [Բանաստեղծութ.]. էջ 186—190
55 Սեւունդ: [Հաղորդում]. էջ 190
56 [Հայտարարութիւն]. Ազդարարի 1794 թիվը լրանալու մասին. էջ 190

1795 ՈՎԴԱՆ ԱՄՍՈՑ № 5

57 [Անվերնագիր: Եմբագրի ծանոթությունը նախատուր արեղա Ջուղայեցու պատմության հրատարակության մասին]. էջ 1
58 Գիրք հակիրճ վասն ճառագրության պարսից աշխարհի ի յերկուս հատորս բաժանեալ. էջ 2—22
59 ՁՁճ. Առ բանակատար Ազդարարին Հայոց. էջ 23—24
60 Բարեկամ: ունյր մի ազդարար ծեր և խոհական...ս։ [Բանաստեղծութ.]. էջ 25—35
61 [Բան ինչ գտեալ ի անդկի Ազդարարին]. էջ 36—37
62 Ազդարար: [Լուրեր]. էջ 37—40
63 Մահ. ծնունդ։ [Լուրեր]. էջ 40
64 Ներսոյ գրածս Մադրասումն ծախուել է։ [Ապրանքների գնացուցակ]. էջ 41—46
65 [Ամսվա տոնացույց]. էջ 46—47
66 Հայտարարութիւն: [Որբանոցների համար ժողովի հրավեր]. էջ 48
67 Յատկութիւն ամսոյ երթևեկութեան նաւուց. էջ 49

1795 ՆԻՐՀԱՆ ԱՄՍՈՑ № 6

68 Յետևմունք Պատմութեան Պարսից արարեալ ի հաշատուր վարդապետէ Նոր Ջուղացւոյ... [Պրակ 3]. էջ *50—69*

68ա [Առակ]. էջ *69*

69 Սրբակրօն Տէր Յարութիւն Եմաւօնեան։ [Թղթակցութիւն «Ուրախակից»]. էջ *70—71*

70 Բարեկամ: «Թէ չաշօղի մին փորձեա վերըստին...»։ [Խանասեղծութ.]. էջ *71—78*

71 Առ Բանակատարք Ազգարարին Հայոց։ [Չինաստանի վաճառականութ. մասին]. էջ *79—80*

72 [Հայտարարութիւններ]. էջ *80—84*

73 Տաղ վասն ղղջացեալ մարդոյ ապացեալ Ղարաբաղցի Սարդսի որդի անարժան Պետրոս քահանայի։ [Ոտանաւոր]. էջ *85—86*

74 «Ողորմութեամբն Աստուծոյ...»։ [Հովսեփ արքեպիսկոպոս Արղութեանի թուղթը. նա գրում է ռուս-տաճկական պատերազմի, ֆրանսիական revolucիայի և այլնի մասին]. էջ *87—93*

75 Ազգարար: [Լուրեր]. էջ *94—95*

76 Նիրհոյ գրածս Մադրասումն ծախուել է։ [Վաճառվող ապրանքների գները]. էջ *96—101*

77 [Ամսվա տոների տախտակ]. էջ *102*

78 Քեզ ով վսեմախոհ պատուական ուրախակից։ [Նամակ—հրատարակողից—թղթակցին]. էջ *103*

79 Յաւակութիւն ամառյա երթևեկութեան նաւուց. էջ *104—105*

1795 ՇԱՄՍ ԱՄՍՈՑ № 7

80 Յետևմունք Պատմութեան Պարսից արարեալ ի հաշատուր Ջուղացւոյ... էջ *106—129*

81 Այր խոնարհ... էջ *130—131*

82 Հոսմոլոս ա՛ո հոսմեացիս չեստ չինելոյ ղքաղաքն. էջ *131—135*

83—84 Բան ինչ խրատական տաղաչափ... [Ոտանաւոր]. էջ *135—139*

85 Յոգնահանեցար Տէր Յարութիւն Աւագ Քահանայ։ [Հովսեփ արքեպիսկոպոս Արղութեանից]. էջ *139—140*

86 Օրինակ Պատասխանոյ և Շնորհակալութեան տէր Յարութիւն Եմաւօնի առ սրբակրօն

87 Տեառն Յովսէփ Արքեպիսկոպոսեան. էջ *141—142*

88 Ուրախակից: Սրբակրօն Տէր Յարութիւն Եմաւօնեան։ [Թղթակցութիւն]. էջ *142—144*

89 Բարեկամ: «Պարտիս ազդարար գիտել և զայս բան...»։ [Բանասեղծութ.]. էջ *144—146*

90 [Վիճակահանութեան հայտարարութիւն]. էջ *146—150*

91 Ազգարար: [Լուրեր]. էջ *151—152*

92 Նիրհոյ գրածս Մադրասումն է ծախվել։ [Վաճառվող ապրանքների գնացուցակ]. էջ *153—160*

93 Ամսվա տոն օրերը. էջ *161*

1795 ԱՂԱՄ ԱՄՍՈՑ № 8

94 Յետևմունք Պատմութեան Պարսից... [Հաշատուր Ջուղայեցու]. էջ *162—184*

95 Գիրք զբօսանաց և թուղք քաղցրալուրք։ [Հայտարարութիւն Հակոբ Սիմոնյանի գրքի մասին]. էջ *185—193*

96 «Փաղառական յորդ յանգական...»։ [Բանասեղծութ.]. էջ *194—204*

97 Զանազան լուրք. էջ *204—206*

98 Հեռանալ համարք փոթորկախառն Տիփանի, որ պատահեցաւ ի Լոնդրայ... [Անգլիական թերթերից]. էջ *207—208*

99 Ազգարար: [Լուրեր]. էջ *209—210*

100 Յաւակութիւն երթևեկութեանց նաւուց։ [Նավերի ժամանելու և մեկնելու ցուցակ]. էջ *212—213*

101 Նիրհոյ գրուածս Մադրասումն ծախուել է։ [Վաճառվող ապրանքների գնացուցակ]. էջ *214—219*

102 Ամսվա տոնացուցակ. էջ *220*

102ա Մնուն. մահ։ [Տեղեկութիւններ]. էջ *221*

1795 ՏՐԱՔ ԱՄՍՈՑ № 9

103 Յետևմունք Պատմութեան Պարսից... [Հաշատուր Ջուղայեցու]. էջ *222—243*

104 Պատմութիւն վարուցն և գործոց Հենդրացւոց... [Շարունակութիւն պատմութեան Հնդստրլի խանի]. էջ *243—255*

105 Ազգարար: [Քաղաքական տեսութիւն, լուրեր]. էջ *256—259*

106 Յաւակութիւն երթևեկութեանց նաւուց. էջ *260—261*

107 Նիրհոյ գրածս Մադրասումն ծախուել է։ [Վաճառվող ապրանքների գնացուցակ]. էջ *262—267*

108 [Ամսվա տոնացույց]. էջ *268—269*

109 [Հայտարարութիւն ամուսնութեան]. էջ *269*

1795 ՆԱԽԱՑ ԱՄՍՈՑ № 10

110 Յետգմուխ Պատմութեան Պարսից... [Նաչատուր Ջուղայեցու]. էջ 270—287

111 Յետգմուխ Պատմութեան Հէյդարալի խանի... էջ 287—297

112 Հայ Որդի Հայի, [Մի նամակ և մի հոդված «Ազդարար»-ին]. էջ 298—313

113 Ազդարար: [Ներքին լուրեր]. էջ 314

114 Վիճակարարութիւն. էջ 315

115 Յատկութիւն երթևեկութեանց նաւուց. էջ 316—317

116 Ներսոյ գրածս Մադրասումն ծախուել է, [Վաճառվող ապրանքների գնացուցակ]. էջ 318—323

117 [Ամսվա տոնացուցակ]. էջ 324—325

118 [Հայտարարութիւններ]. էջ 325

1795 ՂԱՄԱՐ ԱՄՍՈՑ № 11

119 Յետգմուխ Պատմութեան Պարսից... [Նաչատուր Ջուղայեցու]. էջ 326—345

120 Յետգմուխ Պատմութեան Հէյդարալի խանի, [Շարունակութ.]. էջ 346—356

121 Ներսոյ տպեցնալ Յատորք և Ոտանաւորք ընկալեալ ենք 'ի Կալկաթու յամապատասխանէ, [Թղթակցութիւն Կալկաթայից]. էջ 357—358

122 Թան ասացեալ 'ի վերայ հանգուցեալ Աշխիկ Առաքելոյն, «Հաղագս արար խոսվասիրի...», [Բանասաեղծութ. ստորագր. «Քրիստոնեայ»]. էջ 358—360

123 Թան ասացեալ ի վերայ Մովսէսին որդոյն հանգուցելոյն, «Միաբերան Բազումք զով են...», [Ստորագր. «Ասատանի Ջարխ»]. էջ 360—361

124 Անշնորհ Քոյր: «Ոմանք մարդ են՝ իմաստնալի...», [Բանասաեղծութ.]. էջ 361—362

125 Ազնիվ Պարոն Աբրահամ Մուրատեան 'ի Ղանդահար. [Ստորագր. «Մկրտում Սիմէոն]. էջ 362—364

126 Ազգակից: Առ պատուելի Հայ Որդի Հայի. էջ 365—368

127 [Հռոմեանգ պատարագի ժամանակ հիշատակվելիք առաքեալների անուններին և Թուատց կայսրուհի նկատերինա երկրորդի անվան]. էջ 369—372

128 Սրբազան և Սրբակրօն Հայր Տէր Հարութիւն Շմաւոնին. 'ի Մադրաս, 1795, Ղամար 10, [Նամակ «Մկրտում Սիմէօնեանս»-ից]. էջ 370—376

129 Հոգևոր իմոյ Սիմէօնեան Պարոն Մկրտումին խնդալ. Մադրաս. 1795. Ղամար 28, [Տեր Հարութիւն Շմաւոնյանից]. էջ 377—378

130 Ազդարար: [Լուրեր]. էջ 378—381

131 Ներսոյ գրածս Մադրասումն ծախուել է, [Վաճառվող ապրանքների գնացուցակ]. էջ 382—387

132 [Ամսվա տոներ]. էջ 388

133 Կալկաթու վիճակարկութիւն, [Վիճակահանութիւն]. էջ 389—391

1795 ՆԱԴԱՐ ԱՄՍՈՑ № 12

134 Յետգմուխ Պատմութեան Պարսից... [Նաչատուր Ջուղայեցու]. էջ 392—413

135 Յետգմուխ Պատմութեան Հէյդարալի խանի. էջ 414—425

136 [Վաճառվող գրքերի ցուցակ]. էջ 425—426

137 Հայի Որդի Հայի: Պատուելի Ազգակցի իմոյ ողջոյն. էջ 427—430

138 Ասէն սկսի լուրք Կալկաթու. էջ 430—436

139 Լուրէ Նիւթպիու և 'ի զանազան երկրէն առանդ, որ երևեցաւ 'ի կազէթն Ղամար 17 կոչեցեալ (Օրիէնտըլ ստար այսինքն Աստղ Արևելեան). էջ 437—444

140 Մեկնութիւն Նախենաց Հիմանց. [Վիճակահանութեան մասին]. էջ 445

141 Ազդարար: [Լուրեր]. էջ 446—447

142 Ներսոյ գրածս Մադրասումն ծախուել է, [Վաճառվող ապրշումէղանց գինքն]. էջ 448—453

143 [Ամսվա տոներ]. էջ 454—455

144 [Տեղեկութիւն Մադրաս եկած հայերի մասին]. էջ 455

145 [Հայտարարութիւն մի խանութի մասին]. էջ 455

1795 ԹԻՐԱՑ ԱՄՍՈՑ № 13

146 Յետգմուխ Պատմութեան Պարսից... [Նաչատուր Ջուղայեցու]. էջ 456—478

147 Յետգմուխ Պատմութեան Հէյդարալի խանի. էջ 478—485

148 Լուրէ ընկալեալ 'ի Փուլթինանկայ զոր թէ և աւժամայն տպագրեալ տարածեցաք սակս յայտնելոյ ներկայելոց ամենեցուն զպատահումն, այլ այժմ ևս հարկաւոր համարեցաք գնել 'ի յԱզդարարի զի մնասցէ անց և վասն տեղեկութեանց

ապատնեաց։ [Ստորագր. Հնոնարհ Հնազանդ Ծառայ Քաղիկ Մատուր Զաքիֆեանց]. էջ 489—490

149 [Հայտարարություն մանաւոր դասեր վերցնելու մասին]. էջ 490—491

150 Ազդարար։ [Լուրեր]. էջ 491—493

151 Ներոյ գրածս Մադրասումբ ծախուել է. Բանկալու ապրանաց և անաչեղինաց յատկութեանց Թիւրա ամսոյ 28 Յիւն Փրկչի 1795. էջ 496—501

152 [Ամսվա տոներ]. էջ 502—503

153 [Տեղեկություն Մադրաս եկած հայերի մասին]. էջ 503

[Մնունդ.]. էջ 503

1795 ԴԱՄԱՑ ԱՄՍՈՑ № 14

154 Յետևմունք Պատմութեան Պարսից... [Խաչատուր Ջուղայեցու]. էջ 504—530

155 Յետևմունք Պատմութեան Հէյդարալի խանի. էջ 531—541

156 Տէր Թադէոս, Տէր Անդրէաս։ «Եւ քեզ քաղցրագոյն նորոգ բարունակ...»։ [Բանաստեղծութ.]. էջ 542—545

157 [Հայտարարություն։ Գրիգոր Մարգար Խալդարը հայտարարում է, որ վաճառում է արձաններ]. էջ 546—548

158 Ազդարար։ [Լուրեր]. էջ 548—549

159 Երեւելիութիւն նաւուց. էջ 549

160 Հասար գրոյ միոյ գրեալ ի Պասրացու ի թուին 1795 Նոյեմբեր 15-ին։ [Թղթակցություն Պարսկաստանի Բասրայից]. էջ 550

161 [Հայտարարություն. Մնունդ, մահ]. էջ 551

162 Ներոյ գրածս Մադրասումբ ծախուել է։ [Ապրանքների գնացուցակ]. էջ 552—557

163 [Ամսվա տոներ]. էջ 558

164 Լուրք ընկալեալ ի Համատպատասխանէ Պասրայէ. էջ 559

1795 ՀԱՄԻՐԱՑ ԱՄՍՈՑ № 15

165 Յետևմունք Պատմութեան Պարսից... [Խաչատուր Ջուղայեցու]. էջ 560—594

166 Յետևմունք Պատմութեան Հէյդարալի խանի. էջ 595—597

167 Պատահումն այն զոր վասն մարդկան...»։ [Բանաստեղծութ.]. էջ 598—601 [1]

167ա [Հայտարարություն վիճակահանության]. էջ 602—603

168 Լուրք վրաց և պարսից հասնել ի գրոյ միոյ գրեալ ի Պասրայէ ի թուին 1795 Թիւրայ 3-ին. էջ 604—606

169 [Հայտարարություն-առևտրական]. էջ 607—609

170 Համառօտ ծանօթութիւն Նորոգ կարգադրութեանն Մաքսատան. սկսեալն ի Յունուարի, 1796-ին է սկսանելոց. էջ 609—613

171 Ազդարար, [Լուրեր]. էջ 613

172 Ներոյ գրածս Մադրասումբ ծախուել է։ [Վաճառվող ապրանքների գներ]. էջ 614—619

173 [Ամսվա տոներ]. էջ 620

174 Յիշողականութիւն։ [Գովում է լավ հիշատակները]. էջ 621

1795 ԱՐԱՄ ԱՄՍՈՑ № 16

175 Յետևմունք և զաւարտ Պատմութեանն Պարսից։ [Խաչատուր Ջուղայեցու]. էջ 622—651

176 Յետևմունք Պատմութեան Հէյդարալի խանի. էջ 652—659

177 Վիճակարկութիւն։ [Վիճակհանություն, լոտորեա]. էջ 659—661

178 [Հայտարարություն վիճակհանության]. էջ 661—664

179 Տէր Անդրէասեան, Տէր Թադեոս։ «Սիրունդք Ադամայ, որդիք Աբեթեան...»։ [Բանաստեղծութ.]. էջ 667—670

1796 ՈՎԴԱՆ ԱՄՍՈՑ № 17

180 [Հայտարարություն — հոջամալ Սաֆարյանի՝ Եվրոպա շրջելուց վերադառնալու և ճանկացողներին տեսածները պատմելու մասին]. էջ 672

181 [Կոնդակ] Պիոս Զ. պապի. էջ 672—691

182 Յետևմունք Պատմութեան Հէյդարալի խանի. էջ 692—696

183 Սաֆարյան հոջամալ։ «Օգնել իշոյն ձին ոչ հաճի, որոյ յետոյ բեռն ոչ տանիցս։ [Առակ]. էջ 697—699

184 [Հայտարարություն]. էջ 700—703

185 Բուլուքա 30.000 ֆռանսմի։ [Վիճակախաղ]. էջ 704—705

[1] Բնագրում էջերը սխալ են նշված՝ 599-ից հետո գալիս է 590 և այսպես շարունակվում է։

186 Ազդարար: [Լուրեր]. էջ 705—706
187 Ներոյ գրածս Մադրասումն ծախուել է։ [Վաճառվող ապրանքների գները]. էջ 707—710
188 [Ամսվա տոներ]. էջ 711—712
189 [Մահազդ]. էջ 714

1796 ՆԻՐՀԱՆ ԱՄՍՈՑ № 18

190 [Մի նկար օդապարիկի և տեղեկություն նույն նկարի վերաբերյալ Կոստանդ Քադենոյան Հաշտարարանեցու մասին]. էջ 714—715
191 Համառօտ պատմութիւն օդապարիկ գնդոյ և ճանապարհորդութեան Մօնկոլֆիոյ Քաղօյի և Րօպէրթի. էջ 716—725
192 Համառօտ պատմութիւն մեղուաց. արտահանեալ ի բնագրենական պատմութենէ Մօնսիւ Պուֆոնի և Մօնսիւ Պոնրի քաջ բնագրենաց գաղիացոյ։ [Թարգմ. Սահակ Խոճամալ Սաֆարյան]. էջ 725—737
193 Յետնմուն Պատմութեան Հէիդարալի խանի. էջ 727
194 Օրինակ գրոյն Սուրբ Նրուսաղէմայ Միաբանից առ Կոստանդնուպօլսոյ Պատրիարգին... էջ 744—760
195 Օրինակ գրոցն Նախկապատաց առ Պատրիարգին Կոստանդնուպոլսոյ Քաղաքորական քաղաքին. էջ 761—763
196 Ազդարար: [Լուրեր, հայտարարություններ]. էջ 764—765
197 Ներոյ գրածս Մադրասումը ծախուել է։ [Ապրանքների դնացուցակ]. էջ 766—771
198 [Ամսվա տոներ]. էջ 772

1799

ՏԱՐԵԳՐՈՒԹԻՒՆ 1799 տարվան որ է հիշատակարան երևելի անցից դիպելոց յաշխարհի ի տույն ամի. կարգալ ըստ ավուրց յուրաքանչյուր ամսոյ յորում դիպան։ Հավելյալ ի նմա և ընդհանուր աշխարհագրական տեղեկություններ։

Վենետիկ, տպ. Մխիթարյան, 1799—1803.

Խմբագիր՝ Ղուկաս Ինճիկյան։

Тарегрутюн. Летопись политических, военных и филологических событий. Венеция, 1799—1803.

Այս տարեգիրը հրատարակվել է Մխիթարյան-ների կողմից տարեկան մեկ հատոր, ընդամենը երեք հատոր։ Առաջին հատորում հաղորդվում են՝ 1799 թվի տարեկան կարևոր դեպքերը, 1801 թվի հատորում՝ 1800 թվի անցքերը, իսկ 1802 թվի հատորում՝ 1801 թվի կարևոր դեպքերը։

Այս տարեգիրը լուսաբանում էր ներքին կյանքի՝ քաղաքական, եկեղեցական, դիտական կարևոր անցուդարձը, հաղորդում էր արտաքին աշխարհից տեղեկություններ, լուրեր։

Այս «Տարեգրություն»-ը աշխարհաբար առաջին պարբերականն է։

Ընդհանուր «Տարեգրություն»-ը տարեկան անցուդարձն էր տալիս, նա ըստ էության լրագիր էր. Հ. Գ. Գալեմքարյանը ճիշտ կնկրտով գրել է. «կըրնանք ան հատկապես լրագիր անվանել. ինչու որ բովանդակության և պաշտոնի կողմանք լրագրոյ պաշտոն կը վարէր»։

Ի՞նչ պատճառով է դադարել «Տարեգրություն»-ը՝ հայտնի չէ։ Հայտնի է միայն, որ Մխիթարյանները 1803 թվին հիմնեցին մեկ ուրիշ պարբերական՝ «Եղանակ Բյուզանդյանց»-ը, որը շարունակվեց մինչև 1820 թիվը։ Բայց այդ «Եղանակ Բյուզանդյանց»-ը չէր կարող «Տարեգրության բացը լրացնել, նա լրագիր չէր, նա միայն տալիս էր գուշակություն օդոց և այլ ուսումնական-գիտական նյութեր։

«Տարեգրության բացը լրացնելու համար, 1807 թվին Մխիթարյանները (Վենետիկի) սկսում են հրատարակել «Հիշատակարան» անունով՝ քաղաքական և բանասիրական նոր պարբերականը։

«Տարեգրության» առաջին գիրքը (12°—46 էջ) ունի հետևյալ խորագիրը.

«Տարեգրություն 1799 տարվան, որ է հիշատակարան երևելի անցից դիպելոց յաշխարհի ի տույն ամի. կարգալ ըստ ավուրց յուրաքանչյուր ամսոյ յորում դիպան։ Հավելյալ ի նմա և ընդհանուր աշխարհագրական տեղեկություններ»։

1801 թվին լույս տեսած երկրորդ գիրքն ունի հետևյալ վերնագիրը. «Տարեգրություն 1800 տարվույն, որ է հիշատակարան քաղաքական, պատերազմական և բանասիրական անցից և դիպվածոց աշխարհի։ Հիշատակյալ համառոտիվ անվանք և հասակ քաղավորաց, փոփոխություն և դաշնակցություն տերությանց, վիճակք դիտությանց, գյուտք, արվեստք, վաճառականություն (12°, 72 էջ)։

Երրորդ գիրքը լույս է տեսել երեք տետրակով՝ 1802 թվին, խորագիրը նույնն է ինչ, երկրորդ գրքինը։ Մասնայն ավելի ընդարձակված է՝ Ա. «Պատերազմական վիճակ աշխարհի (էջ 1—93), Բ. «Քաղաքական վիճակ աշխարհի (էջ 1—96), Գ. «Եկեղեցական վիճակ աշխարհի և բանասիրական վիճակ աշխարհիս (1—96 էջ) վերնագրերով։

Տարեգրության չորրորդ գիրքը նույն խորագրով ունի 47 էջ։

1803

ԵՂԱՆԱԿ ԲԶՈՒՇԱՆԴՅԱՆ — Բազմավեպ— Վենետիկ, տպ. Մխիթարյան, 1803—1820, 288—300 էջ, (15×20) սմ.

Խմբագիր՝ Ղուկաս վ. Ինճիճյան.

Еханак Бюзандян. Бюзантинский вестник. Венеция, 1803—1820.

Վերը հիշված «Տարեգրության անունը և ձևը փոխում են Մխիթարյանները և 1803 թվին լույս ընծայում՝ «Եղանակ Բյուզանդյանս-ը, որը ուներ 32°—ծավալ, լույս էր տեսնում տարեկան մեկ գիրք, մոտ 300 էջ։

Այս հանդեսը շարունակվեց մինչև 1820 թիվը, այն է 17 տարի։

Թեև «Եղանակ Բյուզանդյանս-ը տպվում էր Վենետիկում, բայց նրա խմբագիրը և հանդեսի աշխատակիցները գտնվում էին Կ. Պոլսում, այդ էր պատճառը որ նա կոչվում էր «Եղանակ Բյուզանդյանս։

Այդ «Եղանակ Բյուզանդյանս-ը կոչվում էր բազմավեպ, նման էր ալմանախի և տարեկան գրքերի մեջ բովանդակում էր հետևյալ նյութերը. [բաժիններ].

1. Նոր տարի—Նոր գիտելիքներ։ Այս բաժնում երկար-բարակ խորհրդածություններով հետ, տեղեկություններ, լուրեր էին տպվում։ Երբեմն այս բաժինը չէր լինում։

2. Գուշակություն օդերևույթ փոփոխությանց։ Այս բաժնում տպագրվում էր ամեն ամսի օրերի եղանակը, բնական երևույթները։

3. Պատմություն օդերևույթականաց. բժշկական, բնական գիտելիքներից տեղեկություններ։

4. Զրուսարան ուսմանց։ Գիտական հատվածներ, երբեմն էլ տպագրվում էին՝ քաղաքական լուրեր։

«Եղանակ Բյուզանդյանս-ը ապրել է 17 տարի, իր բովանդակությամբ նա լրագիր էր, բայց ձևով՝ տարեգիր։ Այս տարեգիրը տպագրվում էր աշխարհաբար, երբեմն զետեղվում էին գրաբար հոդվածներ։

1807

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ։ Տարեգրություն. քաղաքական և բանասիրական։ Վենետիկ, Հրատ. Մխիթարյան միաբանության, տպ. Ս. Ղազարի, 1807.

Խմբագիր՝ Ղուկաս վ. Ինճիճյան։

Ишатакаран. Памятка. Летопись политический словестности. Венеция, 1807.

Գ. Զարպհանալյանը «Պատմություն հայ դպրության գրքում գրում է. «1807-ին Եվրոպայի մեջ տարված պատերազմաց հետաքրքրական լուրերը հարկավոր կրնեն նաև ուրիշ համառոտ պարբերական երկասիրության մը հրատարակությանը։ Ասիկա կը կոչվի «Հիշատակարան», որուն միակ նպատակն էր, ինչպես խորագիրն ալ կըսե, նույն տարվա մեջ Եվրոպա հանդիպած պատերազմաց առյուգ պատմություն տարածել յԱրևելս։ [էջ 383]։

«Արձագանքն-ն իր 1882 թվի № 21-ում այս պարբերականի մասին գրել է. «Այն ժամանակվա Եվրոպական քաղաքական անցքերը այնքան գրաված էին ամբողջ աշխարհին ուշադրությունը, որ ժամանակակից լուրերի և դեպքերի հաղորդելը հայոց համար ևս կարևոր էր։ Այս կարիքը լրացնելու մտքով, Մխիթարյանք 1807 թվից սկսեցին հրատարակել Վենետիկում «Հիշատակարան» անունով պարբերական տետրակներ։

Թե որքան է տևել այս «Հիշատակարանիս հրատարակությունը պարզված չէ։ Հավանական է, որ մեկ տարի է տևել, որովհետև «Հիշատակարան-ի խմբագիր Ղ. Ինճիճյանը Կ. Պոլսից 1808 թվի հունիսի 9-ին գրել է Վենետիկ, Ադոնց Աբրահորը [1], որ ցանկալի է «Հիշատակարան-ի ձևը փոխել՝ տպելով ամեն ինչին ըստ ձևո կազեցյալ, երկիրքյան, ի քաղաքակ թուղթս», անունը փոխել. «Ըստ փոխելու և ձևույն՝ փոփոխեցաք և զանուն, որ յուրույն քղքի գրեալ՝ եդի ի նամակս...»։ Այսպիսով պարզվում է, որ «Հիշատակարան-ը Հ. Ղ. Ինճիճ-

[1] Այդ նամակը տես՝ Հ. Բ. Սարգիսյան, Երկհարյուրամյա գրականական գործունեություն և նշանավոր գործիչներ Վենետիկ Մխիթարյան Միաբանության։ Վենետիկ, 1905, էջ 23

յանի խորհրդով 1807 թվից հետո ձևափոխվել է և 1808 թվին (օգոստոս—սեպտեմբեր) հրատարակվել է «Դիտակ Բյուզանդյանց» ամսագիրը։

ՕՃԱՆՍՓՈՑԱՆ: Քերթ «Օճանափոյան ժողովինս։ Բոմբել, 1820. [վիմատիպ]։

Очанспрян. Бомбей, 1820.

Այս պարբերականը մենք և մեզնից առաջ եղած ուսումնասիրողները՝ չենք տեսել։

Գ. Լևոնյանը սխալ է նկարագրել. նա Քերքին անվանել է «Օճանասփյուռյանց», տարեթիվն էլ գրել է 1810։

Այս Քերքի մասին հիշատակել է առաջինը՝ «Ազգասեր Արարատյանց»-ը գրելով «Ծեղեն այլ լրագիրք ազգիս մերոյ ի Հնդիկս, որպիսիք են Օճանասփյուռյան լրագիրն Բոմբայու, Շեհմարան Կալկաթա... այլ ոչ որի նոցանէն հաս ի հասակ մանկութեանս։ Հետագայում «Օճանասփյուռյանց»-ի մասին գրել է Սինգափուրի «Ուսումնասիրաց»-ը, որ լուսյ է տեսել՝ «քառասուն և հինուն ամոք հառաջ, քան զԱզգասերն էինս։ Հ. Ն. Ակինյանը [1], հիմք ընդունելով, որ «Շեհմարանց»-ը (1821—1823 թվականներին) հրատարակվել է «Օճանասփյան ժողովուրդս տպարանում, գտնում է, որ այդ թվերին «Օճանասփյանց» Քերքին արդեն դադարած պիտի լիներ, նա լույս պիտի տեսած լինի մոտավորապես 1820 թվին, այսինքն, ինչպես «Ուսումնասիրաց»-ն է գրել 40—50 տարի «Ազգասեր»-ից առաջ (1845 թվից առաջ)։

1808

ԴԻՏԱԿ ԲՅՈՒԶԱՆԴՅԱՆ: *Ասոր գործքս է պատմութիւն հիմնիկվան եղածներուն. ասոր կարդալով՝ նաւած տեղեդ իրր քեզ կըտեսնաս ինչ որ կըլլա հիմա աշխարհիս վրաս։ Մենք քաղքիմը մեջ ես, բայց որպես քեզ շատ քաղաք քալած ըլլալիր՝ անանկ տեղյակ կըլլաս ամեն եղածներուն։ Որոնց մեջ որ գանվիս, ինչ բանի վրա որ խոսք բացվի, չես երևնար ուզած անծանոթ, հապա կըրնաս տեղեխտեղը պատասխան տալ, ու ուզածներուն առաջը կրնաս իմանալ։ Վենետիկ, 1808. [տպարան չի նշված], (19×14,3) սմ.*

[1] Հ. Ն. Ակինյան, Գ. Լևոնյան. Հայոց պարբերական մամուլը. Լիակատար ցանկ... [Երևան, 1934, Դրախոսութ.] Հանդ. Ամսօրյա, 1936, № 4—6, էջ 280։

1812—1816 թվերին ունեցել է հետևյալ վերնագիրը.

ԴԻՏԱԿ ԲՅՈՒԶԱՆԴՅԱՆ: *Պատմութիւն քաղաքական ու պատերազմական, բանասիրական, եկեղեցական դիպվածներու, որ հիմիկվան առնես կըլլան աշխարհիս վրա։ Որ է իրր տարեգրութիւն մը առ տարվան։*

Վենետիկ, տպ. Ս. Ղազար, հրատ. Արշարունյաց ընկերութեան, 1812—1816. 8 էջ. (17×24) սմ. Բաժանորդագինը տարեկան 40 դուրուշ։

Խմբագիրներ՝ Գրիգոր վ. Գապարաճյան. (1812).
Մատթիա վ. Փյուսկուլյան. (1813—14).
Մանվել վ. Ջախջախյան. (1815—16).

Дитак Бюзандян. Византийский политический военный, филологический и церковый журнал. Венеция, 1812—1816.

«Դիտակ Բյուզանդյանց»-ի 1808 թվի համարը չունի առաջաբան, չի շոշափել եկեղեցական անցուդարձից լուրեր։ Չկան լուրեր նաև Թյուրքիայից։ Լուրեր, տեղեկութիւններ կան՝ Չվիցերիայից, Ամերիկայից, Իտալիայից, Ինկլիզից, Լեհ, Մոսկով, Նեմցե, Եվետ, Գաուշ, Ռենոի դաշնակցութիւնից, Սպանիայից, Տանիմարկայից, Փորթուգալից, Օլանտայից, Ֆրանսայից։

Ինչպես երևում է հաշտութիւն չի ունեցել այս առաջին համարը «Դիտակ Բյուզանդյանց»-ի և դադարել է։

Չորս տարի հետո, 1812 թվի օգոստոս 1-ին, այս անգամ Կ. Պոլսի Արշարունյաց ընկերութեան ծախսով սկսում է լույս տեսնել «քաղաքական, պատերազմական, բանասիրական, եկեղեցականս «Դիտակ Բյուզանդյանց»-ը, որը հարատևում է մինչև 1818 թիվը։

Այս հանդեսի առաջաբանում ասված է. «Աս տարեգրութիւնը՝ որ հոս մեկ առ մեկ ժողովված մեկ տարվան պատմութիւն է, ամեն տասնեհինգ օր մեյմը հետև հետ կըտպվի ու ամեն բաստայով քանի մը թերթ կըխրկվի Ստամպոլ, նոր-նոր պատմութիւններով։ Ով որ կուզե առնել, ուր տեղ ինչ քաղաք որ ըլլա, իր անունը գրել տա Ստամպոլ Պչախչիին խանութը, որ գրածախս է Չուխաչի խանին թուղերը վճարելով քառասուն դուրուշ. մեկ անգամ բոլոր մեկ տարվան համար։ Անանկով ամեն մեկ բաստա գալուն իր մարդը հոն խրկե, առանց բան մը վճարելու կառնե նկած թերթերը։

«Դիտակ Բյուզանդյանց»-ի լեզուն աշխարհաբար

էր, կ. Պոլսի դրական լեզվին մասին։ Այս երկշաբաթաթերթը բավական ընդարձակ տեղ էր տալիս՝ քաղաքական ինֆորմացիային, լուրերին։

Ներքևում զետեղված հոդվածների տակ ոչ մի ստորագրություն չկա, հավանորեն նյութերը գրվել են՝ խմբագիրների և նրանց մոտիկ գործակիցների կողմից։ «Աբշարունյաց ընկերություն»-ը 1816 թվին լուծվում է և «Դիտակ Բյուզանդյանս»-ն էլ միջոցների չդոյության պատճառով՝ դադարում։

«Դիտակ Բյուզանդյանս»-ը լույս է տեսել՝

1812 թվին № 1—12 [առանց համարների], 48 էջ. (17,5×12,1) սմ.
1813 » № 1—17 316 էջ (18 ×12) սմ.
1814 » № 1—23 454 էջ (20,1×14) սմ.
1815 » № 1—93 454 էջ (20,1×14) սմ.
1816 » № 1—42 168 էջ (20,1×14) սմ.

Դադարել է 1816 թվի № 42-ից հետո։

Կոմպլեկտը կա Վիեննայի Մխիթարյան մատենադարանում։

«Դիտակ Բյուզանդյանս»-ին աշխատակցել են՝ Գրիգոր Խալաթյանցը, Մանվել Չախչախյան, Հաչատուր Սուրմելյան, Մագաքիա Փյուսկյուլյան, Հարություն Ավգերյան և ուրիշներ։

Ներքևում դնում ենք «Դիտակ Բյուզանդյանս»-ի մի քանի համարների բովանդակությունը։

1813. 1, 2, 3, 4, 5 ՀՈՒՆՎԱՐ

[Ամերիկա, Տանիմարքա, Բրուսիա, Նեմցեստան, Իտալիա, Ֆրանսիա. լուրեր]. էջ 1—5

Հ. Տ. Ո՞վ ազգասերք։ [Միաբանության մասին]. էջ 6—8

1813. 6, 7, 8, 9, 10 ՀՈՒՆՎԱՐ

Ինկիլդեռա: Լոնտոն. 20 նոյեմբերի. էջ 9

Հայտնում է, որ ուժեղ քամի է փչել 26-ին նոյեմբերի, որը շատ վնասներ է պատճառել։

Սիկիլիա: Ֆոճճիա. 20 դեկտեմբերի. էջ 9

Հայտնում է, որ ամսի 3-ին, կես գիշերին մեկ սաստիկ երկրաշարժ է եղել։

Ֆրանսա: Փարիզ 16 դեկտեմբերի. էջ 9

«Մինչև նոյեմբերի 6 հավանները խիստ ազնիտ գնաց և բոլոր բանակը հաչողությամբ առաջ կերթար։ Ամսուս 7-ին մեկ սաստիկ ցուրտ մը սկսավ. աս օրեն սկսյալ ամեն գիշեր հարյուրավոր ձի կը մեռներ բանակին մեջ։ Երբ որ Զմոլենսկ հասանք, նայեցանք, որ շատ ձիավոր զորքերու՝ թոփ և ճեպխանեն քաշող ձիեր սատկեր էնե։ [Այնուհետև մանրամասը գրում է պատերազմական անցքերի մասին]։

Ցուցակ նորատիպ գրյանց որ ի Վենետիկ։

1813. 11, 12, 13, 14, 15 ՀՈՒՆՎԱՐ

[Սամսոնիա, Ֆրանսա։ Լուրեր]. էջ 13—14

Մ. Տ. Առ ազգայինս։ [Ռաման, կրթության մասին]. էջ 15—16

Ցուցակ նորատիպ գրյանց, որ ի Վենետիկ. էջ 16

1813. 16, 17, 18, 19, 20 ՀՈՒՆՎԱՐ

[Միացյալ Նահանգներ, Ինկիլդեռա, Տանիմարգա, Լեհաստան, Սաքսոնիա. լուրեր]. էջ 16—20

Ցուցակ նորատիպ գրյանց՝ որ 'ի Վենետիկ. էջ 20

1813. 21, 24, 27, 29, 31 ՀՈՒՆՎԱՐ

[Ինկիլդեռա, Լեհաստան, Գավիէռա, Թուրք, Նէմցեստան, Ֆրանսա]. էջ 20—24

1815. 1, 2, 5, 7 ՀՈՒՆՎԱՐ ԷՋ 1—8

Ամերիգա: [Լուրեր Վաշինգտոնից]. էջ 1
Տանիմարքա: [Քոբենհակ 10 դեկտեմբ]. էջ 1
Շվեծ: [Մտոքհոլմ 2 դեկտեմբ]. էջ 2
Մոսկով: [Պետերբուրգ 5 դեկտեմբ]. էջ 2
Լեհաստան: [Վարսավա 15 դեկտեմբ]. էջ 2
Փորթուգալ: [Լիզպոնա 1 դեկտեմբ]. էջ 3
Սպանիա: [Մատրիտ 17 դեկտեմբ]. էջ 3
Ինկիլդեռա: [Լոնտոն 12 դեկտեմբերի]. էջ 4—5
Ֆրանսա: [Լուրեր]. էջ 5—7
Ֆիռանտրա: [Ֆրուսենկես 16 դեկտեմբ]. էջ 7
Շվիցերի: [Ցուրիկու լուրեր]. էջ 8

1815

ԱՐԵՎԵԼՅԱՆ ԾԱՆՈՒՑՄԱՆՑ: Ռուս-հայերեն լրագիր [Շաբաթաթերթ]։ Աստրախան, տպ. Ֆոն-Վեյսքհոփֆեն և Լիթկա, 1815.

— Խմբագիր-հրատարակիչ՝ Կղեմես Շահվերդյան։

«Аревелян цануцманц».— Восточныя Известия. Астрахан, тип. Фон Вейскгофен и Литке, 1815.

— На русском и армянском языке.

Երկար ժամանակ իշխում էր այն կարծիքը, որ

...երը Քի ռուսահայերի մեջ, առաջին հայ պարբերականը եղել է 1846—47 թվերին Թիֆլիսում հրատարակվող «Կովկաս» լրագիրը։

Այդ կարծիքն, իբրև անհերքելի փաստ, տարածել էին հայ պարբերական մամուլի պատմությունը գրող հեղինակները։

Միայն 1890—95-ական թվականներին բանասերները պարզեցին, որ Ռուսաստանում, հայերեն առաջին լրագիրը հրատարակվել է ոչ թե Թիֆլիսում 1846—47 թվերին, այլ Աստրախանում 1816 թվին։

1813 թվին, մեն Ցոն Վեյքհոփֆեն և Լիթկա Աստրախանում բաց են անում տպարան և սկսում են հրատարակել «Восточныя Известия» անունով մի փոքրիկ շաբաթաթերթ։ Այդ լրագիրը շարունակվել է 1814—15 թվականներին։

Այդ թերթում 1814 թվին մի քանի հոդվածներ, առակներ, բանաստեղծություններ են տպվել՝ հայերենից թարգմանված կամ հայերի մասին։ Այսպես՝

— «Нечто о мученияхъ армянами, претерпенныхъ во время царствования Шах-Аббаса» [1].

— Առակներ՝ «Цветокъ», «Старикъ», «Цапля», «Не рой другому яму», «Урокъ лицемерамъ» և այլն։ Նույն թերթի 1814 թվի № 37-ում տպագրվել է՝ «Любимая армянская песня» վերնագրով մի երգ։

Ինչպես երևում է, 1800-ական թվականներին Աստրախանում արդեն գոյություն է ունեցել հայկական գաղութ, այնքան շատ են եղել հայերը, որ տեղական թերթը նրանց մասին նյութեր է տպագրել։

Այդ տարիներին Աստրախանում է եղել հայազգի եպիսկոպոս Շահվերդյանն իրև ավերատեսուչ Հաշտարխանի Հայկազն կաթոլիկաց եպիսկոպոսական ուսումնարանին։ Այս մարդը հիշված տպարանատերերին համոզում է հայերեն տառեր նույնպես պատրաստել և տպագրել հայերեն գրքեր։ Տեղացի «քաջ արհեստավոր» Կոստանդին Թադեոսյան (Թաթուսովիչ) Սերեբրակովը պատրաստում է հայերեն տառեր և ահա 1815 թվի մայիսի 10-ին «Восточныя Известия» լրագրի № 20-ին կից լույս է տեսնում հետևյալ հայտարարությունը.

[1] Восточныя Известия, 1814, № 2, стр. 14—17. Подпись: К. Ш.

«Հարգելագունեղ Տեարցդ Հայկազնեանց...».

Ով արժանավոր շառավիղք Մեծին Հայկա։

Ի ձեռն բարերական գործունեութեանց տեարց Ցոն Վեյքհոփֆենի և Լիթկայի՝ ունիմք նոր տպարան Հայոց, պատրաստյալ ձեռամբ եղբայրակցին ձերո քաջ արհեստավորի պարոն Կոստանդիա Թադեոսյան Սերեբրակով կոչեցեալ։ Ուստի ունենալով իմ զայս բարերար դիպվված, ձեռնամուխ եղի թարգմանել զդրյանս ուսումնարանաց պատկանելիս ի Ռուսաց լեզվի ի Հայ բարբառ առ ի ընդարձակել զբնական շնորհալից ընդունակութիւնն սերնդոց ձերոց։

Վասն որո և սկիզբն արարի զնահապետական կանոնաց ընթերցողութեան և թարգմանեցի գերքուկ, որ կոչի տետրակ այբբենական, արարեալ հուսումն դեռահաս տղայոց Հայկազնեայց։ Զայս գրքուկս չբննից հոդվածոց կացուցեալ և Ղազանու կայսերական դպրոցան [համալսարանի?] կոմիտեի քննեաց հավանութեամբ հաստատեալ առ ի տպել, պարունակվի յինքնեան Ռուսաց և Հայոց լեզվաւ՝ 1) բոլոր և երկաթագիրք հասարակ ըստ կարգի. 2) վանկակալութիւն. 3) աղօթք հասուց քան զուսանելն և վկնի ուսանելու. 4) համառոտ բարոյական ուսումն. 5) համառոտ պատմութիւնք հանդերձ պատշաճաւոր բարոյականութիւնօքք՝ այսինքն ա) արծիւն և ագռաւն, բ) արջն և մեղուքն, գ) գողն ու շունն, դ) ձին և ապերախտ տերն նորին, ե) դրամն՝ աղքատն և որդին նորա, զ) մանուկն և ծերունին, է) աւազն ծերացեալ, 6) համարողութիւն ըստ հասարակաց, ըստ Հռովմայեցոց և ըստ Հայոց. 7) աղյուսակ բազմապատկութեանց։ Այնուհետև խնդրում է հայտնել, թե քանի հատ է հիշված տետրակից ցանկանում ամեն մեկը, որպեսզի «...դպրութիւն լինի ինձ տպել...»։ Յուրաքանչյուր գրքի գինը նշանակում է մեկ ռուբլի [արդիադրամ, որ է մոտ 34 կոպեկ արծաթի]։ Միաժամանակ հայտնում է, որ 10 գրքուկի բաժանորդագրվողը մեկ հատ կստանա ձրի։

Հայտնի չի այս գրքուկը հաջողվել է հրատարակել, թե ոչ։ Միայն 1815 թվի հոկտեմբեր 20-ին «Восточныя Известия»-ի № 42-ում հայերեն և ռուսերեն տպագրվել է հետևյալը.

«Հայտարարութիւն

ի հեղինակե Արևելյան ծանուցմանց ի Հոսկփա

Ցոն Վեյքհոփֆըննէ։ Ձերիս ամս աշխատեցա համեմատ զորութեանն, մինչ վերջապես ժամանեցի դիտավորութեան իմում զոր առաջադրյալ էի, այսինքն է, զի ի լույս ածեմ զՄանուցմունս Արեւելյան — «Восточныя Извѣстия» թարգմանութեամբ հանդերձ ի հայ բարբառ։ Եւ այս վախճան հաճելագույյալ հավանեցուցի զվերատեսուչն տեղվույս հայկազն կաթոլիկաց եղվիթականն հուսումնարանի զպարոն Կղեմայն Շահվերդյանց հանձն առնուլ զսուրն գործ և լինիլ ինձ գործակից։ Վասն որո և խնդրեցի հրամանն Ձաղանու կայսերական հուսումնարանին, զոր և առացյալ եմ։

Արդ այժմ հայտ առնելով հարգելագունիդ հասարակութեանդ վասն Արեւելյան Մանուցմանս, որք ի լույս ածյալ լինին ի հետևյալ 1816 համի, և մատուցանելով ի առաջադրութիւն, խնդրեմ խոնարհաբար զի հաճեցյալ ընդ այս՝ ցուցանիջիք ինձ զմեծահոդութիւն ձեր, քանզի ամենայն գործառնութիւնք, որք ունին զվախճան վասն համայնից օգտի ձեռք ևեթ պահպանին։

Այնուհետև խնդրում է բաժանորդագրվել. հայտնում է, որ Աստրախանում «Արեւելյան Մանուցմանս» վասն բոլոր տարվոյ գինն է 15 ռուբլի թղթադրամ՝ [կամ հինգ ռուբլի արծաթ], իսկ ուրիշ քաղաքների բաժանորդներին՝ 20 ռուբլի։

Մանուցման մեջ ասված է, որ լրագիրը պիտի լույս տեսնի երկու լեզվով՝ հայերեն և ռուսերեն։

Այս հայտարարությունը մի շարք անգամ տպագրվել է ռուսերեն «Восточныя Извѣстия» թերթի համարներում։ 1815 թվի № 51 և 52-ում կա ռուսերեն և հայերեն նոր հայտարարություն, որտեղ խնդրում են՝ «... առաջադրողաց, հայամբհետ առացին զՄանուցմունս Արեւելյանս... հուսումնարանեն եղվիթական հայկազն կաթոլիկաց... հավուրս չորեքշաբթու 1 ժամուամբ, նույնպես խնդրում են հայերեն լեզվով հայտարարություններ տալ տպելու [տողը 15 կոպեկ]։

Մինչև այժմ չի պարզված, թե «Արեւելյան Մանուցմանց» ռուս-հայերեն թերթը որքան է տևել, քանի համար է լույս տեսել։ Հայտնի է միայն, որ 1815 թվի վերջերից Ալեքսանդր Ա. կայսրի կարգադրությամբ Ռուսաստանից սկսում են արտաքսել եզվիտներին։ Անպայման եզվիտ Կղեման Շահվերդյանը և իր ընկերները նույնպես արտաքսվել են և «Արեւելյան Մանուցմանց» թերթն էլ դադարել է։

1819

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԻՒՆ։ Վիեննա։ Հրատ. Մխիթարյանների, 1819. 4 էջ.

— Համաձայնություն Մխիթարյան միաբաններին։

— Լույս է տեսել մեկ համար։

Գ. Լևոնյանը կարծել է, որ տարեգիր է[1], այսինքն եղել է շաբաթաթերթ և լույս է տեսել միայն մեկ համար[2]։

1820

ՀԱՅԵԼԻ ԿԱԼԿԱԹԻԱՆ, որ է վեպք քաղաքականության, դրականության և այլոց։ [Շաբաթաթերթ]։ Կալկաթա, տպ. Հորդանանյան Պողոսի, 1820. 4 էջ, (32×22) սմ. Հրատ. «Ծիմաստասիրական Միաբանութենէն»։

Խմբագիր՝ Հովհաննես Տեր-Հակոբյան։

Айели Калкатян. Калькутское Зеркало. Калькута, 1820.

1818 թվին (մայիս 27) Հնդկաստանի Կալկաթա քաղաքի հայ գաղութի մի քանի ուսումնասեր անձինք կազմակերպում են մեկ հրատարակչական ընկերություն, «Իմաստասիրության Միաբանություն» անունով և նպատակ են դնում հայերի մեջ տարածել «...ուսումնասիրություն, ընթերցասիրություն և բարեսիրություն»։ Այդ ընկերության «Հայտարարության» [ծրագրի] մեջ ասված է. «...Ունիմք զպէսպէս պիտանացու և զվնեցողտու մատենս և տեւորակս յանգղիականէ ի մեր հայ լեզու թարգմանեալս պատրաստ ի տպագրութիւն. այլ և ձեռնամուխս ենք լեալ ի թարգմանութիւն այլոց առնասարս մատենից և գրեանց, զոր յոյս մեծ ունիմ... ի լրումն ածել...»։

Այս Միաբանության տպարանի տակ է դնում իր տպարանը Պողոս Հորդանանյանը. տպարանի վերատեսուչ է նշանակվում՝ Մկրտիչ Հարությունյան Աղանուրյանցը և Հովհաննես Ավդալյանցը։ Այդ տպարանում մի քանի գրքեր են տպագրվում և «Մի անգամ ի շաբթու հրատարակել զլրաթուղթ մի Հայելի Կալկաթյան անուն, յո-

---

[1] Լևոնյան, Գ. Հայոց պարբերական մամուլը։ Խիակատար ցուցակ։ Վրևան, 1934, էջ 4։

[2] Ակինյան Հ. Ն. Գ. Լևոնյանի «Հայոց պարբերական մամուլը»։ [Գրախոսական]։ Հանդես Ամսօրյա, 1936, № 4—6, էջ 287։

րում գրյալ բովանդակացին պետպես լուրք քաղաքականք և վաճառականականք, քի յանգլիական լրաթղթոյ յեղաշրջյալ, և քի ի համապատասխանատուց մերոց ի հետաստանն ընկալյալ. և ազգի ազգի գրականական և ուսումնական բանք»[1],

«Հայելի Կալկաթյանի» № 1-ը լույս է տեսել 1820 թվի օգոստոս 12-ին։ «Հայելին» ուներ 32×22 սմ. ծավալ, երկսյուն էր, 4 էջից։ Լույս էր տեսնում ամեն շաբաթ օր։ Բովանդակությունը՝ քաղաքական, առևտրական, գրական և այլ լուրեր էին։

Քաղաքական բաժնում տպվում էին՝ տեղական և անգլիական թերթերից քարգմանություններ։ Գրական բաժնի մեջ տպվում էին անգլերենից քարգմանված՝ ուսանավորներ, պատմվածքներ։ «Նավականք» վերնագրի տակ տպվում էին «Ճամանողք» և «Դնացողք» նավերի, նավապետների անունները և նշվում էին նավերի մեկնելու օրերը։ «Հայելի Կալկաթյանը» տպագրվում էր գրաբար, երբեմն լույս էին տեսնում նաև աշխարհաբար թղթակցություններ։

1821

ՇՏԵՄԱՐԱՆ: [Ամսագիր]։ Կալկաթա, տպ. Օճանափեան ժողովուրդն, 1821—1823. 26 էջ. (18×12) սմ.

— Խմբագիր՝ Մարտիրոս Մկրտչյան Շիրազեցի։

Штемаран. [Ежемесячник]. Калкута, 1821—1823.

Այս ամսագրի և Բոմբեյում տպագրված «Օճանափեան» վիմատիպ պարբերականի (1810) մասին «Ազգասեր Արարատյանն» իր 1851 թվի № 66-ում հետևյալն է տպագրել. «Ընդեն այո՛ լրագիրք ազգիս մերոյ ի Հնդիկս, որպիսիք են Օճանափեան լրագիրն Բոմբայո, Շտեմարանն Կալկաթա... այլ ոչ ոք ի նոցանէ հաս ի հասակ մանկութեանս»։

«Շտեմարանը» հրատարակվել է հիմնականում գրաբար, նյութերի մի խոշոր մասն էլ՝ նոր-Ջուղայի բարբառով։ Խմբագիր Մարտիրոս Մկրտչյանն աշխատել է բավարարել իր հնդկահայ վաճառականների և իր հայրական մարդկանց պահանջը։ «Շտեմարանը» լույս է տեսել գրքի ծավալով (18×12 սմ.). Նյութերը դասավորված են խառնիճաղանճ։ Տպագրանշյուր համարը ոչ թե խմբագրականով կամ առաջնորդողով է սկսվում, այլ գրարար ոտանավորով։

Ամսագրում կան նույնպես՝ բարոյախոսական հոդվածներ, թղթակցություններ, խմբագրական անվերջ նկատողություններ, ստացված թղթակցությունների պատասխաններ, ընթացիկ լուրեր, բանաստեղծություններ և փոքրիկ պատմվածքներ, աշուղների երգեր, առակներ, առածներ և այլն։

Ամսագիրը լիքն է նկուղեցու և տերտերների շուրջը եղած բանսարկիչ վեճերով, պոլեմիկական հոդվածներով։ Բավական մեծ քանակությամբ տպագրված են նաև կրոնական ճառեր, քարոզներ։

Բանաստեղծությունների մեծ մասը կրոնական բովանդակություն ունեն և երբեմն էլ դժվարանում են՝ լույսը, հատաջադիմությունը։ Ահա մի նմուշ ոչ-կրոնական բանաստեղծության։

Ալիկոծութիւն[1]

Ով այնկած ծով անյատ գազան.
գիարդ այսքան՝ սպատնաս դու.
Հակ հանուն ի քէն գոչան.
առ ծայնի քո հնչմամբ ազգու։
Որր խոհակք քո՝ ուռնան ի վեր,
Նաւքն երեքեն՝ բնկանել.
մարդիք ի նմա քաջնան ի ներ,
Անկնան իրք 'ի գերծանել։
Արգ՝ խնայե 'ի սրամտել,
Իրր սուիծ խրոխտ և մարդակեր.
և ազորմիա առ ' ի փրկել
գմեզ յայնացրտ՝ մահաբեր...

«Շտեմարանը»-ի խմբագիր Մարտիրոս Մկրտչյան Շիրազեցին ամսագրի նյութերի մեծ մասն ինքն է գրել։ Նա գրել է՝ ուսանավորներ, ճառեր, քարոզներ, պատասխանել է իրեն ուղղած բազմաթիվ հարցումներին, նամակներին, թղթակցություններին։

Օրինակ. ամսագրի № 2-ում մեկը դիմում է խմբագրին. «Արդյոք ասրն առանց փողու, կամ փողն առանց սիրու է առավելը» և խմբագիրը հենց դրա տակը հատուկ պատասխան է տպագրում։

Մի նամակում ընթերցողը խմբագրին դանգատ-

[1] Տե՛ս Ե. Հայկական հին լրագրության էջ մը. Բազմավեպ, 1907 հունվ. № 1, էջ 15, № 2, էջ 57—61

[1] Ուղղագրությունը չի փոխված.

վում է, որ անամոթի ծառաները, լավ չեն աշխատում. իսկ խմբագիրը պատասխանում է, որ նրանք էլ մարդ են, նրանց հետ մարդավարի պիտի վարվել (էջ 357)։

«Շտեմարան»-ը չունի հատուկ ֆորոնիկա-ի, լուրերի բաժին, բայց շատ համարներում ամսագրի կան էջատակում վերնագրի տակ տպագրված լուրեր, ընթացիկ կյանքից տեղեկություններ։

Օրինակ. ամսագրի 510—511 էջերում լուրեր կան՝ Հունաստանի ազատագրական շարժման մասին, նաև Իրանից, Ռուսաստանից։ Խմբագիրը լուրերը բացատրում է, իր համակրանքն է հայտնում հունական ազատագրական շարժմանը, դատնում է, որ քրիստոնյա պետություններից Անգլիան ոչ հաճի օգնել...», իսկ Ռուսաստանը «...բազում զօրս ունի, կամի օգնել Յունաց...»։

«Շտեմարան»-ի խմբագիր Մարտիրոս Մկրտչյանը հայ հարուստներին քննադատել է, բայց եղել է պահպանողական հայացքների տեր մարդ։ Պահպանողական հայացքները՝ Մ. Մկրտչյանի բացահայտված են ամսագրում տպագրված բազմաթիվ քարոզներում, եկեղեցական հոդվածով, նրա խմբագրած մյուս բոլոր նյութերում։ Ըստ Մ. Մկրտչյանի հայ եկեղեցին է հանդիսանում հայ ժողովրդի միակ ներկայացուցիչը, եկեղեցին հնգամոն դեր պիտի ունենար հայկական համայնքներում։ Նա իր բարոյա-խրատական հոդվածներում նշում է կրոնական սկզբունքներից, եկեղեցական ավանդություններից։ Նա քարոզում էր՝ «Սիրեցէք զիշխամին ձեր, բարի արարէք առելեաց ձերոց...»։

Ինչպես հայտնի է 19-րդ դարի քահանական քվականներին հնդկահայ գաղութում բավական ուժեղ էր ռուսական օրիենտացիան։ «Շտեմարան»-ի նյութերից երևում է, որ նա քննադատել է անգլիական գաղութարարներին, կողմնակից է եղել ռուսական օրիենտացիային։

[№ 1, էջ 1—137]

199 Համապատասխանութիւն. [Քրիստոսկյուլյան է. «Աղգասեր» ստորագր.]. էջ *51—53*

200 Վ. Օ. Տ. Ի Կալկաթա-ի *11* յունվէր *1828*. Բան. էջ *53—55*

201 Տաղաչափասեր: «Ծօրինեալ ի Սուրիանոս Դաշտենցվո...» [Ոտանավոր աշխարհաբար]. էջ *55—56*

202 Պատասխանատու: Հարգելի վերատեսուչ *O. S.* [Կրթությյան, դաստիարակությյան մասին]. էջ *56—62*

203 Ցավակից բարեկամ: Հարգելի դպիր Մարտիրոս Մկրտչյան: [Եկեղեցու և քահանայի մասին]. էջ *63—66*

204 Անցք. [Նազարեթ եկեղեցու ժողովի մասին]. էջ *66—68*

205 Բժշկականէ: [«Դեղ վասն կալօրա Մարտիրոսի— «Միջկացավի դեղ»]. էջ *88—90*

206 Ա. Բ. Տատմերում ուղում: [Հայտարարություն]. էջ *91—92*

207 Վ. Օ. Տ. Նրգ [«Դեղ ձեր սխրալի...» Ոտանավոր]. էջ *92—93*

208 Աւվետական: [Կաշի պատրաստելու մասին]. էջ *93—96*

209 Սիծաղաշարժ տաղերգություն: [«Ասի ձեր տուն ե՞ր տեղա...»— «Էս օր երկու գյոզալ տեսի...»—«Մի տես էսօր ինձ ի՞նչ արար...»—«Շուն պատռվի էս ինչ արավ...» Ամիր օղլու բանաստեղծություններից]. էջ *96—101*

210 Լրագրություն: [Լուրեր]. էջ *103—104*

211 Բան: [Լուրեր, տեղեկություններ՝ հույների ազգային շարժման, եկեղեցական տոների և այլնի մասին]. էջ *105—119*

212 Էքստրաորդինէրի: Հիսաքանչ գրագողություն, [Էֆեմերտու տպագրության մասին]. էջ *120—129*

213 Վ. Օ. Տ. Քարոզ Ծաղազա սիրտ ընկերին. էջ *129—135*

214 Գ. Դ. Ապլիկէշն: [Մի երազի մասին]. էջ *135—136*

[№ 2, էջ 137—199]

215 Բարբայդ: Վտանգ և որոգայթ կենաց: [Ջափածո]. էջ *137—138*

216 Կատարն: Սեր առ Քրիստիու— Վատու [Ջափածո]. էջ *138—139*

217 Որդիական մտածողություն: [Գամվածք Ստորագրութ. ընտրածություն անգ ընթերցողաց»]. էջ *140—141*

218 Սիրանուշ: Համապատասխանություն: [Ռուսակցական ձևերի մասին]. էջ *142—145*

ՀԱՅԿ ՏԵՓՈՅԵՍՆ
ԳՐԱԴԱՐԱՆ
Մ.ԱԿՍԴԵԼՄԻՆ

219 Կուպիտ: Նկատելի բան: [Պատմվածք. գրաբար]. էջ 145—148

220 Հարգելի վերատեսուչ: [Ընթերցողը հարց է տալիս. «Երդյոք սեր առանց փողոյ, կամ փող առանց սիրոյ է առավել...»]. էջ 148—150

221 Վ. Օ. Տ. Հարգելի վերատեսուչ: [Թղթակիցը հարց ու պատասխանի միջոցով գրում է ոմն Տեր-Հովսեփի վատ վարքի և եկեղեցական գործերի մասին]. էջ 150—159

222 Քարոզ: [Գրաբար]. էջ 159—164

223 Ողբ Դավթի `ի վերա Յովնաթանայ: [Ջափածո գրաբար]. էջ 166—167

224 Հեղ զանուշ ցօղ քոյ զաւետական: [Ջափածո. գրաբար]. էջ 167—168

225 Ողբոյն հրաժարական: [Ջափածո. գրաբար]. էջ 168—169

226 Բողոք զԱիրականէ: [Ջափածո. գրաբար]. էջ 169

227 Միլիտոս: Համապատասխանություն: [Քղթակցություն է]. էջ 170—176

228 Վ. Օ. Տ. Բան: [Խրատ է վերը նշված քղթակցին]. էջ 176—178

229 Պատմություն: [Անտորագիր: Նորից Տեր-Հովսեփի գործերի մասին]. էջ 179—181

230 Բան առ ճշմարտասեր ընթերցողս: [Հայ աղանդավոր մեկի մասին է, որին վիրավորել է վերը նշված Տեր-Հովսեփը]. էջ 181—184

231 Որճնեա տեր: [Նորից նույն քահանայի և բապտիստ պարոն Կարապետի մասին]. էջ 184—196

232 Հայտարարություն: [Ոմն Մանջի Հովհաննեսի մասին]. էջ 197—198

[№ 3, էջ 199—230]

233 Սաիման: [Ջափածո. գրաբար]. էջ 199

234 Որփէոս և Պղուտոն: [Ջափածո. գրաբար]. էջ 199—200

235 Ալեկոծութիւն: [Ջափածո. գրաբար]. էջ 200—201

236 Սիրելիութիւն: [Ջափածո. գրաբար]. էջ 201—202

237 Պսակ: [Ջափածո. գրաբար]. էջ 202

238 Ի պարտաւականէ: [Ջափածո. գրաբար]. էջ 202—203

239 Խոսակցություն: [Նորից հարց ու պատասխանի միջոցով մեղադրում է Տեր-Հովսեփին]. էջ 203—210

240 Կին: [Ջափածո. գրաբար]. էջ 215—216

241 Հրաւիրումն: [Ջափածո. գրաբար]. էջ 216—217

242 Առ տպագիրն հայոց տպարանին: [Հարց է տալիս խմբագրին ամուսնության մասին]. էջ 217—218

243 Վ. Օ. Տ. Կացրդական հանգեա հիմնադրութեան: [Նկարագրում է եկեղեցու հիմնադրման ծեսը]. էջ 221—224

244 Քարոզ: Ճաղատս աղօթից: [Գրաբար]. էջ 225—230

245 Քարոզ: Ճաղատս Աստուածասիրութեան: [Գրաբար]. էջ 231—235

[№ 4, էջ 236—276]

246 Չուարճաբանութիւն: Պարսաւ `ի վերայ պոռնիկ քահանայիւ: [Ջափածո. գրաբար]. էջ 231—233

247 Բաղեր օղլի: Բողոք `ի ժլատեայս: [Ջափածո]. էջ 233—234

248 Հակագրութիւն: [Ջափածո]. էջ 234—235

249 Ջարդուցեալ սոխակին: [Ջափածո. գրաբար]. էջ 236—237

250 Առ լրացեալ լուսին: [Ջափածո. գրաբար]. էջ 237—242

251 Բան առ ճշմարտասերն ընթերցողս: [Նորից Տեր-Հովսեփ քահանային է մեղադրում]. էջ 242—247

252 Միլիտոս: Հարգելի վերատեսուչ: [Թղթակցություն է եկեղեցու շուրջը]. էջ 248—251

253 Քարոզ: Ճաղատս Աստուածասիրութեան. էջ 251—257

254 Վ. Օ. Տ. Ճանըք. էջ 257—258

255 Ճառ: Ճաղատս գալստեան Քրիստոսի... էջ 259—263

256 Հարգելի դպիր: [Թղթակիցը գրում է, որ ուրախ է, որ Տեր-Հովսեփի հետ հաշտվել են, «Վ. Օ. Տ.» — ստորագրությամբ պատասխանում է]. էջ 263—270

257 Վ. Օ. Տ. Ճառ: Ճաղատս Ճարութեան Տեառն. էջ 271—275

[№ 5, էջ 276—290]

258 Յովկաննես առ Դիոս։ [Ջափածո. գրաբար]. էջ 276—278

259 Մկրտչյան, Մարտիրոս։ Բան առ ճշմարտասեր ընթերցողս։ [Նկնդեցական գործերի մասին]. էջ 279—284

260 Ալեայան, Գեորգ։ Պաւղէլի ընթերցողք։ [Թղթակցություն է նորից Տեր-Հովսեփի մասին]. էջ 290—294

[№ 6, էջ 301—355]

261 Հանրական երգ փառաբանութեան առ Աստուած։ [Ջափածո, գրաբար]. էջ 301

262 Նախնի կաքաւերգութիւն։ [Ջափածո. գրաբար]. էջ 301—302

263 Մեծիր Ասիա։ [Ջափածո. գրաբար]. էջ 302—304

264 Առակ։ [Աշխարհաբար]. էջ 304

265 Անցք։ Որդւոյն Իսրայէլի ընդ ծովն կարմիր։ [Ջափածո. գրաբար]. էջ 309—310

266 Ջարդ պատգայ։ [Հնդկական տոնախմբության մասին]. էջ 311—318

267 Ջուվինիս։ Մածկութիւն ի սէր—Հանդիպում։ [Ջափածո. գրաբար]. էջ 321—322

268 Մկրտչյան, Մ. Քարոզ. էջ 323—330

269 Յարդարմունք։ [Ջափածո. գրաբար]. էջ 331—332

270 «Հանդոր և խաղաղ լուռ նաւանակի...»։ [Ջափածո. գրաբար]. էջ 332—337

271 Ազգասեր։ Հարգելի դպիր։ [Թղթակցություն ընդդեմ ներքին նրկպատակությունների խմբագիրը վերջում պատասխանում է]. էջ 343—348

272 Անառոն։ Ջաքէոս մաքսապետ։ [Ջափածո. գրաբար]. էջ 349—350

273 Հիմնեիոս։ Առ տպագիրն հայոց տպարանին։ [Թղթակցություն]. էջ 350—353

[№ 7, էջ 356—472]

274 Վ. Ո. Տ. Հետևումն յորդորանաց։ [Ջափածո. գրաբար]. էջ 356

275 Ի. Լ. Հարգելի դպիր։ [Թղթակցություն. գանգատվում է, որ անամորթ ծառաները գող են, փախչում են։ Խմբագիրը խրատում է՝ լավ վարվիլ]. էջ 357—362

276 Անառոն։ Մայր։ [Ջափածո։ Գրաբար]. էջ 363—364

277 Մարդասեր։ Առ տպագիրն հայոց տպարանին. [Թղթակցություն]. էջ 364—373

278 Վ. Ո. Տ. Հետևումն յորդորանաց։ [Ջափածո. գրաբար]. էջ 382

279 Վ. Ո. Տ. Ճառ. Բ. Ի վերայ զինչութեան մարդկային հոգւոյ. էջ 384—388

280 Վ. Ո. Տ. Գրավորական առաջադիմություն Հնդկաց. էջ 388—391

281 Ճշմարտասեր։ Հարգելի դպիր։ [Թղթակցություն]. էջ 400—408

282 Անառոն։ Վաստակ։ [Ջափածո. գրաբար]. էջ 405—406

283 Վ. Ո. Տ. Հետևումն յորդորաց։ [Ջափածո. գրաբար]. էջ 414

284 Վ. Ո. Տ. Հետևումն ճառի հոգւոյն Ճառ յաղագս Համբարձման Տեառն. էջ 415—421

285 Անառոն։ Նախանձ։ [Ջափածո. գրաբար]. էջ 430—431

286 Պատանյակ։ Առ Նիմփայ։ [Ջափածո. գրաբար]. էջ 433—434

287 Անառոն։ Համբարձման օր։ [Ջափածո. գրաբար]. էջ 348—439

288 Վ. Ո. Տ. Ճաղատս նախագահութեան գրաւորական արհնասի... [Ջափածո. գրաբար]. էջ 442

289 Հիմնեիոս։ Առ տպագիրն հայոց տպարանին։ [Թղթակցություն։ Քաղվածքներ կան Շնքսպիրից]. էջ 446—460

[№ 8, էջ 473—511]

290 Վ. Ո. Տ. Հետևումն յորդորանաց։ Ճաղատս կրից ընդհանրապէս։ [Ջափածո. գրաբար]. էջ 473

291 Վ. Ո. Տ. Հետևումն ճառի հոգւոյն Ճաղատս խղճի մաց. էջ 474—477

292 Մկրտչյան, Մարտիրոս։ Բան առ ճշմարտասեր ընթերցողս։ [Նորից Տեր-Հովսեփի մասին]. էջ 478—487

293 Անապօլիոն։ Հարգելի վերատեսուչ։ [Թղթակցություն է լավ և վատ բարեկամների մասին]. էջ 487—492

294 Անառոն։ Հոգեպաշտաս։ [Ջափածո. գրաբար]. էջ 492—493

295 Հիմնեիոս։ Առ տպագիրն հայոց տպարանին։ [Գրում է, որ «Շտեմարանի»-ի նախորդ համա-

րում ինքը սխալներ է կատարել քարոզմանած նյութերի մեջ]. էջ 493—495

296 Ջուվինիս: Առ տպագիրն հայոց տպարանին [Հանելուկ է ուղարկել տպագրելու]. էջ 496—497

297 Առ: [Ջափածո. գրաբար]. էջ 497

298 Կ. Հ. Նոսիս: [Մեկ գրպարտչի մասին]. էջ 498

299 Հետևումն յորդորականաց: Ծաղագա բաժանման կրից: էջ 501

300 Վ. Օ. Տ. Հետևումն Հառի հոգւոյն: Ծաղագա կարողութեանց մաաց. էջ 502—505

301 Բեչլեր: Համապատասխանություն: Հարգելի դպիր: [Բանավեճ է «Հիմնեհոսո»-ի դեմ]. էջ 505—509

302 Անառոն: Ողբ: [Ջափածո. գրաբար]. էջ 509—510

303 Աղամալ: Հարգելի դպիր: [Ընթերցողը զգուշացնում է՝ «օրն մին մարաքայաս սահմանումս»—այսինքը՝ կռիվ, խառնակություն ևս գցում]. էջ 511—512

304 Վ. Օ. Տ. Զվարճաբանություն: [Խմբագիրը պատասխանում է Աղամալին, որ ինքը չի վախենում]. էջ 513—515

305 Ա. Բ. Գ. Դ. Սևավ կամ կապուտակ աչք: [Գրում է, թե որն է գեղեցիկ կանանց աչքերից]. էջ 515—516

306 Հերմես: Առ: [Ջափածո. գրաբար]. էջ 516

307 Անառոն: Գիշեր: [Հանելուկ]. էջ 517

308 Քաջիկ: Ծորդորակ: [Ջափածո. գրաբար]. էջ 517—518

309 Ճռաարշացի: «Ներբողեան ի սուրբ Լուսաւորիչն...»: [Ջափածո. գրաբար]. էջ 521—522

310 Գառանյակ: Հարգելի վերաառաւղ: [Հարցնում է՝ «Համիմ խմանալ թե արդյոք կարող ան երկու աղբերք երկու քվերց հետ պատակվելը]. էջ 522—523

311 Վ. Օ. Տ. Բան: [Խմբագիրը պատասխանում է, որ հնդկահայերը կարող են ամուսնանալ երկու քույրերի վրա]. էջ 528—529

312 Անառոն: Կին: [Ջափածո. գրաբար]. էջ 527—528

313 Լրագրություն: [Լուրեր են՝ «ազգային», Հունաստանից, Իրանից, Ռուսաստանից և այլն]. էջ 510—511

314 Ամուսնություն: [Ով ո՞ւմ հետ է ամուսնացել Լուր է]. էջ 511

[№ 9, էջ 532—584]

315 Վ. Օ. Տ. Հետևումն յորդորանաց: Կանխաբանութիւն սիրոյ: [Ջափածո. գրաբար]. էջ 532

316 Վ. Օ. Տ. Կամք մարգոյ: [Հոդված գրաբար]. էջ 533—535

317 Անառոն: Օրհնութիւն: Կրօն: [Ջափածո. գրաբար]. էջ 536—540

318 Աբեհաս: Առ: [Ջափածո. գրաբար]. էջ 541—542

319 Մուզա: Սէր Աստուածային: [Ջափածո. գրաբար]. էջ 542—543

320 Լուսֆիկ: Առ Ցլօրէնցիա: [Ջափածո. գրաբար]. էջ 544—545

321 Ճռաարշացի: Ծաղագա սիրելոյ զԱստուած: [Ջափածո. գրաբար]. էջ 545—548

322 Գևառոսյանց: Գաամութիւնք երկու քվերք: [Բարոյախոսական]. էջ 548—556

323 Մկրտչյան, Մարտիրոս: Բան առ ճշմարտասեր ընթերցողս: [Գրում է իր մասին]. էջ 551—553

324 Վ. Օ. Տ. Հետևումն յորդորանաց: Սահման և բաժանումն սիրոյ: [Ջափածո. գրաբար]. էջ 556

325 Ծաղագա կատարելութեան կամաց: Ծաղագա առաքինութեանց կամաց: [Բարոյախոսական: Խմբագրից]. էջ 557—559

326 Անառոն: Գառրանք աշխարհի: [Ջափածո: Հեղինակը գրում է «յորինեալ ի Համերոսին...»]. էջ 561—564

327 Մարդասեր: Առ տպագիրն հայոց տպարանին: [Թղթակցություն է Բենգալիայի նահանգում տեղի ունեցած հեղեղի մասին]. էջ 565—570

328 Հերմես: Բան: [Ծավակցում է հեղեղի առթիվ. գրում է՝ «զպատուհասն երկնային է...»]. էջ 570—576

329 Մկրտչյան, Մարտիրոս: Մին բժիշկ և մին խաթուն: Մին Այրիչ: [Փոքրիկ պատմվածք]. էջ 578—584

[№ 10, էջ 585—608]

330 Վ. Օ. Տ. Հետևումն յորդորանաց: Բաժանումն գործոց սիրոյ: [Ջափածո. գրաբար]. էջ 585

331 Աւարիա և արարքացիք: [Աշխարհագրական]. էջ 587—588

332 Պատանեակ: *Տրամախօսութիւն ի մէջ ուրուման Պատանեկի և օրիորդի միոյ:* [Հարց ու պատասխան է]. էջ 588—589

333 Կացրգական հանգիս. պսակ: [Նկարագրում է մեկ հարսանիք, տպագրում է բաժակառուները]. էջ 590—594

334 Աճառոն: *Բարկութիւն:* [Ջափաժո, գրաբար]. էջ 601—602

335 Վ. Օ. Տ. *Մոլլա և ցորեն:* Լօռ և ծաղրածուք: *Բանաստեղծ և մանուկ: Հանդիպումն բարեկամաց:* [Թարգմանական պատմվածքներ]. էջ 604—606

336 Մկրտչյան, Մարտիրոս: *Բան առ խաղաղասիրսն:* [Բարոյախոսութիւն]. էջ 607—608

337 Վ. Օ. Տ. *Հետևումն յորդորանաց: Թէ գի՞նչ իցէ միաւորութիւն և ի քանիս բաժանի:* [Ջափաժո. գրաբար]. էջ 609

338 Նաւայաս: *Պետք:* [Աֆորիզմներ]. էջ 610

339 Պետրոսյանց: *Արվեստականք:* [Ջանազան քանաքներ պատրաստելու կերպը]. էջ 611

340 Ջուվինիս: *Առ տպագիրն հայոց տպարանին:* [Գրում է, որ իր նախկինում տպագրած ռամանավորները թարգմանված են անգլերենից]. էջ 613—614

341 Կեղծավոր և գիտուն: [Փոքրիկ պատմվածքանատորագիր]. էջ 614—615

342 Հերմէս: *Առ...* [Ջափաժո. գրաբար]. էջ 615—616

343 Վասոս: *Երգ օրորոցի:* [Ջափաժո. գրաբար: Թարգմ. անգլ.]. էջ 616—618

344 Ֆենելոն: *Դիալոկ: Դեմոկրիտոս և Հերակլիտոս:* [Թարգմ.]. էջ 618—623

345 Վ. Օ. Տ. *Այր և անծանոթ կին: Փիլիսոփա և դեռհիկ:* [Թարոյախոսական պատմվածքներ]. էջ 623—627

[№ 11, էջ 628—648]

346 Վ. Օ. Տ. *Հետևումն յորդորանաց: Թէ գի՞նչ ինցն Յարումն և ի քանիս բաժանի:* [Ջափաժո. գրաբար]. էջ 628

347 Քարոզ: *Ծաղրագս աշխարհապատումիկան Տեառն.* էջ 629—638

348 Աճառոն: *Վարդավառ:* [Ջափաժո գրաբար]. էջ 633—634

349 Մաճ: [Անգլիական եպիսկոպոսի մահվան հուղարկավորության մասին]. էջ 635—637

350 Հետազոտ: *Առ տպագիրն հայոց:* [ASS—տառերի նշանակության մասին: Պոլեմիկա]. էջ 641—643

351 Հերմէս: *Առ...* [Ջափաժո. գրաբար]. էջ 644—645

352 Մոլլա և էշ: Էշ և շուք: Հրաշք: [Փոքրիկ պատմություններ]. էջ 646—648

353 Երգ հնկաց: [«Ջուրայ նը կըրէ...» Հնդկերեն]. էջ 648

[№ 12, էջ 649—684]

354 Վ. Օ. Տ. *Հետևումն յորդորանաց: Ծաղրագս ապշութեան:* [Ջափաժո. գրաբար]. էջ 649

355 Թարգմանել ի Բէնգալ հարկարուց վասն «Շեհեմապահին» մերոյ: [Անգլիական եպիսկոպոսի մահվան մասին]. էջ 650—654

356 Համապատասխանութիւն: [Թղթակցություններ են: Մեկը խնդրում է իր երազը բացատրել: Մյուսը հարցնում է՝ «... եթէ մինն մեր սիրում լինի, որ կատ. կամ. մինն մեր առում լինի որ կսիրի»]. էջ 658—659

357 Աճառոն: *Մեծամարտութիւն:* [Ջափաժո. գրաբար]. էջ 659—660

358 Պատմութիւն: *Դալաք և պարոն: Մանուկ և վարժապետ: Դատավոր և վարժապետ: Վեճ դատարկաբանութիւն: Հարց ի մանկանէ միոյ: Քիթ կարած պարոն:* [Անեկդոտագիր փոքրիկ պատմվածքներ]. էջ 661—664

359 Վ. Օ. Տ. *Դիտողութիւն:* [Բարոյախոսական]. էջ 670—675

360 Պատմութիւն: *Ժլատ և կոշնական: Աղքատ և ծաղրածու: Գրագիր և պարոն: Բազե և աքաղաղ:* [Փոքրիկ պատմվածքներ]. էջ 683—684

[№ 13, էջ 682[1]—785]

361 Վ. Օ. Տ. *Հետևումն յորդորանաց: Ծաղրագս վնասու սիրոցին:* [Ջափաժո. գրաբար]. էջ 682

362 Կարդ Լիտոլտն: *Դիալոկ: Կադմոս և Հերակլէս:* [Թարգմ. անգլ.]. էջ 683—691

363 Վ. Օ. Տ. *Քարոզ: Ծաղրագս յայտնի պաշտամանն.* էջ 692—702

364 Գանգատ *ի մկանց և ի ձագուց նոցին:* [Ջափաժո. գրաբար]. էջ 702—703

---

[1] Էջերը շատ հաճախ սխալ են նշել, կրկնվում են. մենք չենք կարող մեզնից էջեր հորինել:

365 Բնակիչ կալկաթա [Վիճակագրական]. էջ 703

366 Նաւ: Պետք [Աֆորիզմներ]. էջ 704—705

367 Անապօլիոն: Հարգելի դպիր [Նամակ խմբագրին]. էջ 705—708

368 ՆՕՏ: Դարձի սեր իմ [Ձափածո. գրաբար]. էջ 708—709

369 Պատմութիւնք: Բժիշկ ամօքիածն Դարվիշ և խափշիկ գաւառներ Կուբր և Ճրագ Բանաստեղծ և հարուստ Թագաւոր և գիտուն [Փոքրիկ պատմվածքներ]. էջ 713—715

370 Վ. Օ. Տ. Հետևումն յորդորանաց Ցաղագս դմայլման [Ձափածո. գրաբար]. էջ 761

371 Վ. Օ. Տ. Տետուիճն-պատմութեան Հընդկաստանու աշխատասիրեալ ի պարոն Թօմազ Քօջամալեան Նոր-Ջուղայեցւոյ [Գրքի մասին]. էջ 762—767

372 Վոլ-Արգունի: Խրատ [Ձափածո]. էջ 767—768

373 Վ. Օ. Տ. Քարող. էջ 768—770

374 Լրագրություն: [Լուրեր]. էջ 772—773

375 Մուխըմբըզ: [Հընդկերեն]. էջ 779—781

376 Վ. Օ. Տ. Ըմբռնումն բամբակագործաց, Նավապետ և նավասոխ [Պատմվածքներ]. էջ 784—785

[№ 14, էջ 786—818]

377 Վ. Օ. Տ. Հետևումն յորդորանաց Ցաղագս խանդակաթութեան [Ձափածո. գրաբար]. էջ 786

378 Կռակ: [Մահվան մասին]. էջ 787—792

379 Քարոզ: Ցաղագս խաղաղութեան. էջ 792—796

380 Վ. Օ. Տ. Դիտողութիւն [Բարոյախոսական խրատներ]. էջ 796—800

381 Լրագրություն: [Լուրեր]. էջ 801—802

382 Վ. Օ. Տ. Բան [Հայերի քշված վիճակի մասին]. էջ 802—805

383 Վ. Օ. Տ. Պատճառք [Հույների ապստամբության հզորանալու ութ պատճառներ է թվում]. էջ 805—807

384 Բառեսեր: Կշռամքանք [Անառակի մասին]. էջ 807—809

385 Պատիժ դժբաղդութեան [Պատմվածք]. էջ 811—815

[№ 15, էջ 819—857]

386 Վ. Օ. Տ. Հետևումն յորդորանաց Ցաղագս նոանդեան [Ձափածո]. էջ 819

387 Հերվի: Առարկութիւն ընդ մէջ Թերոնի և Ասպասիոսի [Գրաբար]. էջ 820—832

388 Վ. Օ. Տ. Պատմագրութիւն [Հնդկական պատմությունից հանված]. էջ 833—840

389 Անխաբ: Համապատասխանություն [Քրիստոնեական էության պահարի մասին]. էջ 841—842

390 Ճառ: Ցաղագս սրբոյ խաչին. էջ 843—849

391 Խառնապատում: [Խառը լուրեր]. էջ 850—852

392 Պատառիկ: Ոգւոյն հրաժարական Նիմփայ [Ձափածո. գրաբար]. էջ 852—853

393 Համապատասխանություն: [Մենք գրում է, որ նկնդեցում մի երիտասարդ ազնվական է հագնվել]. էջ 853—855

394 Պատմություն: Մելա և աշակերտք [Անատոլիր]. էջ 856—857

395 Եզովպոս: Ոգնի և գայլ [Առակ]. էջ 857

[№ 16, էջ 858—910]

396 Պատմագրութիւն: Ցաղագս քրիստոնեության Մալվարաց... [Հնդկաստանի պատմությունից]. էջ 858—864

397 Քաղցրաբան խրատ [Ձափածո. գրաբար]. էջ 865—866

398 Քարոզ: [Նկնդեցում խոսված]. էջ 866—870

399 Ուխտատեղիք: [Հնդկաստանի պատմությունից հանված]. էջ 878—884

400 Միլիտոս: Հարգելի դպիր [Քրիստոնեություն է. ապտոնում է խմբագրին՝ իրեն մասին վատ բաներ չգրել]. էջ 886—888

401 Վ. Օ. Տ. Պատասխան [Վերը նշված քրիստոնյին պատասխանում է]. էջ 889—891

402 Վ. Օ. Տ. Պատմություն [Բարոյախոսական]. էջ 891—893

403 Մկրտչեան, Մարտիրոս: Ցայտնի յանդիմանութիւն: [Գրաբար]. էջ 894—900

404 Ճառ: [Նկնդեցում խոսված]. էջ 900—903

405 Վ. Օ. Տ. Նահատակություն: [Ձափածո գրաբար]. էջ 904—905

406 Կացդրական հանդես [Աղանդավորների մասին]. էջ 905—907

[№ 17, էջ 911—940]

407 Քարոզ: [Նկեղեցում խոսված]. էջ 911—915

408 Ֆրանկլին, Բենիամին: Խրատ առ պատանիս [Խրատներ են: Ահա մի՝ քանի մտքեր՝ «Մտածեցնեք, որ ժամանակն է փողս» «Մտածեցնեք, որ համբավն է փողս» «Մտածեցնեք, որ փողն պրտղավետ է և ճոխացուցիչ» և այլն]. էջ 916—918

409 Բարոյական բանք [Խրատներ]. էջ 918—921

410 Հոգևոր առարկութիւն: [Քարոզ է, խոսված եկեղեցում]. էջ 923—933

411 Մենեանդր: Հարգելի դպիր: [Թղթակցութիւն]. էջ 933—934

412 Վ. Օ. Տ. Բան: [Պատասխան վերը նշված թղթակցութեան]. էջ 934—937

413 Վ. Օ. Տ. Մանուցումն: [Գրում է իր թշնամիների մասին]. էջ 938—939

[№ 18, էջ 940—982]

414 Դուրգայ Գուրգայ: [Հնդկաց առասպել]. էջ 940—942

415 Վ. Օ. Տ. Բան ի վերա լեզվին հայոց: [Դիտողութեամբ խմբագրի]. էջ 942—946

416 Եպիփան: Հարգելի դպիր: [Թղթակցութիւն. Ից խմբագրի պատասխանը]. էջ 947—950

417 Ճգնավոր: Առ տպագիրն հայոց տպարանին: [Գնդեցկութեան մասին]. էջ 951—953

418 Մկրտչյան, Մարտիրոս: Բան առ ճշմարտասեր ընթերցողս: [Ներքին խռովութիւնների մասին]. էջ 954—959

419 Հայտարար: [Մեկը հայտարարում է, որ իր կինը փախել է տնից]. էջ 959

420 Ողբ: Յորժամ Մեծն Աղէքսանդր Մակեդոնացին մերձեր ի մահ, ասաց ողբս. էջ 965—972

421 Շհուրյան, Ստեփանոս: Իմ պարոն: [Քղթակցութիւն եկեղեցական գործերի մասին]. էջ 972—974

422 Գերապատուելի և ազնվամեծար Սրհալ Ստեփանոս Շքուրյանին: [Պատասխան]. էջ 974—977

423 Վ. Օ. Տ. Ռիդիկիւլական առարկութիւն ժողովքի անցք: [Միական ժողովի մասին]. էջ 980—982

[№ 19, էջ 983—1004]

424 Ողբ: Յօրինեալ ի դիմաց մօրն Աղէքսանդրու վասն որդւոյն մեռելոյ. էջ 983—987

425 Մեկնութիւն: [Լուծումն նայի Մարգարէի մի ասածվածքի]. էջ 987—991

426 Անուռն: Բարեկամ: [Ձափածո. գրաբար]. էջ 991—992

427 Բարոյական բանք: [Խրատներ]. էջ 993—994

428 Աբենաս: Առ տպագիրն Օհանասփիւռ տպարանին: [Թղթակցութիւն]. էջ 996—998

429 Վ. Օ. Տ. Առարկութիւնք եկեղեցական. էջ 1000

[№ 20, էջ 1005—1017]

430 Վ. Օ. Տ. Հետևումն յորդորանաց: Նկարագրութիւն վշտակիր մտաց: [Ձափածո. գրաբար]. էջ 1005

431 Յայտարարութիւն: Ջէնեռալ Բօնապարթի..., Դուռն Օսմանեան տերութեանս... [Հրամաններ են]. էջ 1006—1008

432 Համապատասխանութիւն: [Մի քանի փոքրիկ թղթակցութիւններ են եկեղեցական ժողովի և գործերի մասին]. էջ 1009—1013

433 Լրագրութիւն: [Ընթացիկ լուրեր]. էջ 1015—1017

[№ 21, էջ 1018—1064]

434 Վ. Օ. Տ. Հետևումն յորդորանաց: Նկարագրական մտածմունք: [Ձափածո. գրաբար]. էջ 1018

435 Ճշմարտասեր: Հարգելի վերատեսուչ: [Նորից Ստեփանոս Միրզայի և եկեղեցուն հասցրած վնասի մասին]. էջ 1023—1024

436 Վ. Օ. Տ. Հետևումն յորդորանաց: [Ձափածո. գրաբար]. էջ 1030

437 Սարկաւագ: Յաղագս աւետեաց և ծննդեան Տեառն մերոյ... էջ 1032—1036

438 Բան: Հարգելի դպիր: [Թղթակցութիւն]. էջ 1036—1039

439 Վ. Օ. Տ. Ռիդիկիւլ: [Եկեղեցու մասին]. էջ 1043—1045

440 Վ. Օ. Տ. Հետևում յորդորանաց: Յարածուփ մտածմունք և վախճանական ելք: [Ձափածո. գրաբար]. էջ 1046—1047

441 Ճառ: [Ասված նկեղեցում]. էջ 1048—1053

442 Վ. Օ. Տ. Դիտողութիւն: [Գրում է վերը նշած մի քանի վկաների մասին: Բոլորին էլ սխալ է համարում: Կոչ է անում հաշտ լինել]. էջ 1060—1062

443 Աբենաս: Առակ Ա. Բ. Գ. [Կան նաև առակների խմաստները]. էջ 1062—1064

[№ 22, էջ 1065—1080]

444 Ոդջոյն հրաժարական: [Ջափածո. գրաբար]. էջ 1065—1068

445 Տանիգլիականէ թարգմանեալ վասն «Շուշմարտութիւն... [Քառյակներ]. էջ 1068

446 Վ. Օ. Տ. Առ սժանդակողք տպարանին. էջ 1069—1070

447 Համապատասխանութիւն: [Բազմաթիվ առորագրություններով շնորհակալական թուղթ է Տեր-Ղուկաս քահանային ուղղած]. էջ 1071—1074

1 8 3 0

ՏԻԵԶԵՐՔ: Հանդէս դրոսավայր: 1830. [Տեղը անհայտ].

Тиезерк. Космос. Журнал. 1830. [Место неизвестно].

Այս պարբերականի գոյությունը Հ. Ն. Ակինյանը «շատ կասկածելի» է համարում [1].

1 8 3 2

ԼՐՈ ԳԻՐ ՄԵՆԻ ՏԵՐՈՒԹԵԱՆՆ ՕՍՄԱՆԵԱՆ: *Կ. Պոլիս, տպ. «Թագվիմ վաղաս» լրագրի, 1832—1850, 4 էջ (37×25) սմ.*

Խմբագիր՝ Գեորգ Գրիգորյան:

«Про гир Меци Терутян Османян». Газета Великого Османского государства. Константинополь, 1832—1850

Այս լրագիրը Թյուրքիայի առաջին հայ պարբերականն է: 1832 թվին, Կ. Պոլսում, Տաճկական կառավարության միջոցով հրատարակվող «Թագվիմ վաղայիե» թերթին կից սկսում է լույս տեսնել «Լրո գիրը», որի նպատակն էր, «... Ի գիտութիւն տեղացի հայ բազմաթիվ հաստատակութեան հաղորդել կառավարության հրամանները, կարգադրությունները, պաշտոնյաների նշանակումները, պետական ճեռքերի հայտարարությունները և այլն»:

Սկզբում լույս էր տեսնում 7, 14 և 20 որը մեկ: Թերթի լեզուն աշխարհաբար էր, երբեմն խճողված տաճկերեն բառերով:

«Լրո գիր...»-ը լույս է տեսել 1832 թվին 32 համար: Ներքևում տալիս ենք այդ թերթի 3 համարի նկարագրությունը: 1841 թվին արդեն այս լրագիրը կոչվում էր «Հայոցատար Գիր Լրո Մենի Տերութեանն Օսմանեանց»: Այս թերթը շարաթական մեկ համար էր լույս տեսնում: Տպագրվում էր Պողոս Արապյան Ապուշնիցյանի տպարանում, (41×27) սմ. Ծավալով «Հայոցատար Գիր լրո...»-ն շարունակվել է մինչև 1850 թիվը: Այդ թերթի 1850 թվի մեկ համարի բովանդակությունը նույնպես տալիս ենք ստորև:

1832 ՀՈՒՆՎԱՐ 27. № 13, էջ 1—8

Գործ Ներքին: [Ներքին լուրեր]. էջ 1—?

Գործ զրաց. էջ 2

1832 ՀՈՒԼԻՍ 5 № 32. էջ 1—8

Գործ Ներքին. էջ 1—4

Գործ զրաց. էջ 4

Գնահատություն: [Ապրանքների գները]. էջ 4—5

Գործ արտաքին. էջ 5—8

1840 ՄԱՐՏ 14 № 6 էջ 1

Գործ Ներքին. էջ 1—3

Ապրանքների գները. էջ 3

1850 ԱՊՐԻԼ 22, № 144. էջ 1—4

Ներքին լուրեր: Կենտրոնից, գավառներից). էջ 1

Արտաքին լուրեր: [Պարիս, Անգղիա, Ինգլիզքեռա, Ամստրիա, Բրուսիա, Ամերիկա, Զվիցեր, Սպանիա, Տանիմարգա և այլն]. էջ 2—4

1 8 3 9

ՇՏԵՄԱՐԱՆ ՊԻՏԱՆԻ ԳԻՏԵԼՅԱՑ: *Զմյուռնիա, տպ. Հ. Հալլոքի [հետագայում Գ. Կաֆֆֆիի, վերջում Ա. Զըրչիի]. հրատ. Բողոքական միսիոներների, 1839—1854, 16 էջ. (27×18) սմ.*

Штемаран питани гителяц. Сборник польезных знаний. Измир. [Смирна]. 1839—1854.

---

1 Ակինյան Հ. Ն., Գ. Հանդես, «Հայոց պարբերական մամուլը» [հիշատակարան ցուցակ... [Երևան, 1931. Գրախոսություն]: Հանգ. Ամսօրյա, 1936, № 4—6, էջ 281:

1820-ական թվականներից Տաճկաստան մուտք են գործել Եվրոպական և Ամերիկյան բողոքական քարոզիչներ՝ միսիոներներու նպատակ ունենալով դարձնել նաև հայերին մեջ և 1839 թվականին, ծովեզերյա Զմյուռնիա քաղաքում սկսում են հրատարակել՝ «Շաւիմարան Պիտանի Գիտելեաց» պատկերազարդ ամսագիրը։ Այդ ամսագիրն ունի, իր ժամանակի համար, բավական բազմակողմանի բովանդակություն՝ եկեղեցական, կրոնական նյութեր, քաղաքական, բանասիրական հոդվածներ և որ նրա տերերի համար գլխավորն էր, ամեն մի նյութ համեմված է միսիոներների «բարեյաջողություններով»։

«Շաւիմարան Պիտանի Գիտելեաց»-ը դրվում էր աշխարհատար, նրա առաջաբանում խոստանալով քարոզիչները դրում էին. «... Արժան դատեցանք, որ մեր Շաւիմարանը ամենքին ըլլա...»։

Այդ ամսագիրն ուներ հետևյալ բաժինները՝

— Կրոնական, որտեղ տպագրվում էին՝ քարոզներ, ճառեր, աղոթքներ, խրատներ, միսիոներական «խորհուրդներ»։

— Բարոյական. հոդվածներ, հորդորներ, առածներ և այլն։

— Գիտական. բնագիտական, աշխարհագրական հոդվածներ, և միսիոներական այլ նյութեր։

«Երևակ»-ի խմբագիրն է եղել՝ Հովհաննես Տերկասապետյան Տերոյենց Զամուռճյան Պրուսացին, որ «Ներհուն բանասեր»-ի անուն էր վաստակել։ Նա սովորել էր Արմաշու դպրեվանքում, գիտեր արևելյան և եվրոպական մի քանի լեզուներ, համարվում էր «խոշոր գիտնական»։ Հ. Զամուռճյանը 1846—48 և 1850—58 թվականներին խմբագրել է Քյուրքահայ ամիրաների օրգան «Հայաստան» լրագիրը, 1855—66 թվերին՝ «Ջոհայէ Քրքախոս Քերքը, և ապա «Երևակ»-ը (1855—66)։

Հովհ. Զամուռճյանը «Երևակ»-ը լցնում էր կրոնական-եկեղեցական նյութերով։ Նա գրել է՝ դևերի գոյության մասին, աստվածածնի հղության, կաթոլիկների, բողոքականների, քրիստոնեական բազմաթիվ աղանդների մասին, վաստաբանել է ժամանակի բոլոր լուսավորված մարդկանց՝ սկսած Վոլտերից ու Ռուսոյից մինչև պոլսահայ սահմանադրականները։

Բոլորի դեմ Հ. Զամուռճյանը միայն մի զենք ուներ, դա կրոնն էր։ «Մեր ազգը միության կապ ունի միայն կրոնքը, և ով որ այս կրոնքը մեկ դի կձգե... աներկյուղ համարձակությամբ կասեմ ազգին քակտիչ և կործանիչ է»[1]։

Նա գտնում էր, որ կրոնն ու եկեղեցին ամենազոր են, նրանք պիտի փրկեն հասարակությունը բոլոր չարիքներից։ Օրինակ. ժ. ժ. Ռուսոյի մասին նա գրել է. «...կուզե, որ ամեն պարտեզ, ամեն տուն իր բոլոր մեջիններովը ամենուն հասարակաց ըլլա և անմիջապես ավելացնում է. «...այս տեսակի հավասարությենեն մեզ ազատողը կրոնքն է. անոր հովանավորությանը տակն է, որ մենք հիմա քրտինքով վաստակածներուս տերն եմք»[2]։

Հովհ. Զամուռճյանը դեմ էր ժողովուրդների ազատության պայքարին։ Նա գրել է. «Կարիպալտի Մածծինիին պլխավոր կուսակիցը և աջ բազուկն

[1] «Երևակ», 1861, № 113։

[2] Նույն տեղը, 1862, № 112։

է, իսկ Մածծինի՝ անաշհման ազատության կուսակից է, որ ոչ բագավոր կուզե աշխարհի վրա և ոչ որևիցե իշխանություն քե քաղաքական և քե կրոնական մասին»[1]։

Մեր անմահ երջիծաբան Հ. Պարոնյանը «Ազգային ջոջեր»-ում Հ. Ջամուռճյանի մասին գրել է, որ նա վաճառված գրչակ է եղել. «Ամիրաները... կըքաշալներին ղինքը ոսկիներով, զորս անձնվիրաբար կառներ պատվիլին... և այդ գումարներով Հայաստանյաց եկեղեցին կը պաշտպաններ»[2]։

Հովհ. Ջամուռճյանը իր խավարամոլ պայքարում արևմտահայ դեմոկրատիայի դեմ հենվել է նույնպես՝ եզիմտ պապականների և կղերի վերնախավի վրա։

«Ներևակ»-ի նյութերը տալիս ենք կրճատ նկարագրությամբ։

1857 ՀՈՒՆՎԱՐ 1, № 1, էջ 1—32

6507 Հառաջաբան։ [Հանդեսի նպատակների, խնդիրների մասին]. *էջ 1—6*

6508 Նոր տարի։ *1857. էջ 6—12*

6509 Ասիական քանի մի ազգաց նոր տարվա սովորությունները. *էջ 12—16*

6510 Պատկին անքակտելի ըլլալը։ [Հակամարտությունն հայ բողոքականների հետ]. *էջ 17—22*

6511 Բողոքական ընտանիքի մը դարձ. *էջ 24—27*

6512 Այլ և այլ։ [Լուրեր, տեղեկություններ]. *էջ 27—32*

1857 ՀՈՒՆՎԱՐ 15, № 2, էջ 33—64

6513 Պատմություն գիտության լեզվաց. *էջ 33—37, № 3, էջ 65—69, № 4, էջ 97—101, № 5, էջ 129—134, № 6, էջ 161—166, № 7, էջ 193—196, № 8, էջ 225—238, № 9, էջ 257—261, № 10, էջ 289—292, № 11, էջ 321—325, № 12, էջ 353—358*

6514 Վալմոնի, կոմս և պարոն Տը Լոզան։ [Թրանսիական գիտնականների մասին]. *էջ 38—42, № 3, էջ 69—74, № 4, էջ 101—107, № 5, էջ 135—140, № 6, էջ 167—170, № 7, էջ 196—200, № 8, էջ 229—234, № 9, էջ 262—266*

6515 Պոչով աստղ։ [Գիսավորի մասին]. *էջ 52—58*

6516 Այլ և այլ։ *էջ 58—64*

[1] Նույն տեղը, *1860, № 88։*

[2] Պարոնյան Հ., Երկերի լիակատար ժողովածու, հտ. 3, էջ 45 և շարունակութ.։

1857 ՓԵՏՐՎԱՐ 1, № 3, էջ 65—96

Շարունակվող հոդվածներ։

1857 ՓԵՏՐՎԱՐ 16, № 4, էջ 97—128

6517 Մեծին *Կոստանդիանոսի* մկրտությունը։ [Պատմական]. *էջ 107—114, № 5, էջ 141—144, № 6, էջ 170—175, № 7, էջ 201—206, № 8, էջ 234—238*

6518 Բժշկական. *էջ 117—121*

1857 ՄԱՐՏ 1, № 5, էջ 129—160

6519 Աշխարհագրական։ [Վիճդաններ]. *էջ 145—151*

6520 Հեդիկենեռուն գիտությունը. *էջ 158—160*

1857 ՄԱՐՏ 16, № 6, էջ 161—193

6521 Տեսեսական։ [Հաց թխելու նոր փռերի մասին]. *էջ 176—181*

1857 ԱՊՐԻԼ 1, № 7, էջ 194—224

6522 Աշխարհագրական։ [Ճապոնիա։ Ռուսաստանի նետ գիտը]. *էջ 207—211*

1857 ԱՊՐԻԼ 16, № 8, էջ 225—256

6523 Աշխարհագրական։ [Հնդկաստան]. *էջ 239—242*

1857 ՄԱՅԻՍ 1, № 9, էջ 257—298

6524 Աշխարհագրական։ *Անամի* թագավորությունը և բնակիչները։ [Հետերուն Քրատավ քաղաքը]. *է 274—293*

1857 ՄԱՅԻՍ 16, № 10, էջ 299—320

6525 Կալվին և *Սերվետուս*. *էջ 298—303, № 11, էջ 329—337*

6526 Աշխարհագրական։ [Իրանի մասին]. *էջ 304—308*

1857 ՀՈՒՆԻՍ 1, № 11, էջ 321—352

6527 Դրամագիտություն. *էջ 338—342*

1857 ՀՈՒՆԻՍ 16, № 12, էջ 353—

6528 Աշխարհագրական։ [Նիկոլաև նավահանգիստ]. *էջ 371—373*

1857 ՀՈՒԼԻՍ 1, № 13, էջ 1—32

6529 Պատմություն գիտության լեզվաց. էջ 1—9, № 14, էջ 33—37, № 15, էջ 65—69, № 16, էջ 97—103, № 17, էջ 129—133, № 18, էջ 161—164, № 19, էջ 193—198, № 20, էջ 225—236, № 21, էջ 257—266, № 22, էջ 294—299, № 23, էջ 327—334

6530 Աշխարհագրական: [Դրունք կասպից]. էջ 19—22

1857 ՀՈՒԼԻՍ 16, № 14, էջ 33—64

6531 Աշխարհագրական: [Ագրա.-Միշագնաք]. էջ 48—59

1857 ՕԳՈՍՏՈՍ 1, № 15, էջ 65—96

Շարունակվող հոդվածներ.

1857 ՕԳՈՍՏՈՍ 16, № 16, էջ 97—128

6532 Աշխարհագրական: [Գօզոր կղզիներ]. էջ 120—124

1857 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1, № 17, էջ 129—160

Շարունակվող հոդվածներ.

1857 ՍԵՊՏԵՄԲԵՐ 16, № 18, էջ 161—192

Շարունակվող հոդվածներ.

1857 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1, № 19, էջ 193—224

6533 Աշխարհագրական: [Չինաստան համբարդութիւն]. էջ 212—220

1857 ՀՈԿՏԵՄԲԵՐ 16, № 20, էջ 225—256

6534 Աշխարհագրական: [Չերքեզներու դիցաբանութիւնը]. էջ 248—252

1857 ՆՈՅԵՄԲԵՐ 16, № 21, էջ 257—288

6535 Կալվին և Սերվետուս. էջ 272—277, № 22, էջ 308—312

1857 ՆՈՅԵՄԲԵՐ 16, № 22, էջ 289—320

6536 Աշխարհագրական. էջ 313—314

1857 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1, № 23, էջ 321—340

Շարունակվող հոդվածներ.

1858

6537 Հնագիտություն. № 26, էջ 42—47

6538 Հնախոսություն: Մեհենեի հին բնակիչները. № 26, էջ 48—57

6539 Աշխարհագրական: [Սահարա]. № 27, էջ 84—89

6540 Արաբացիներուն հին առաջը. № 29, էջ 139—144

6541 Արաբներուն հիմակվան գիրը. № 29, էջ 145—148

6542 Որովայնախոս. № 36, էջ 353—358

6543 Մարզվանու չարխափան ս. Աստվածածնոյ վանքը. [Հուլիս]. № 37, էջ 7—11

6544 Լիզվագետներուն պարապանութիւնը. [Հուլիս]. № 37, էջ 16—18, № 38, էջ 48—57, № 39, էջ 78—96

6545 Հավուց Քառ. [Հնագիտական]. № 40, էջ 103—104

6546 Մաթեոս Ուռհայեցիին ժամանակագրութիւնը. № 41, էջ 133—140

6547 Մատենական հիշատակարաններ. № 42, էջ 166—170, № 43, էջ 202—206, № 44, էջ 231—240

6548 Ազգային: Ներսես Պալեն. № 47, էջ 327—328

6549 Մովսես Խորենացի. [Մատենագրական]. № 48, էջ 363—368. 1859. № 49, էջ 11—14

1859

6550 Փոխության դեմ դեղ. № 49, էջ 18—23

6551 Աֆղան ազգի ծագումը. № 49, էջ 23—27

6552 Արմաշու վանքին պատմութիւնը. № 52, էջ 97—104, № 53, էջ 129—143, № 54, էջ 165—168

6553 Երգիծական բանաստեղծութիւն. № 57, էջ 266—279

6554 Կիրակոս պատմիչ և պարոն Տյուտրե. № 60, էջ 358—366

6555 Հայոց ատիկաններուն վրա. № 61, [Հուլիս]. էջ 15—20, № 62, էջ 40—46, № 63, էջ 73—80

6556 Կարապետ կաթողիկոս Ուլնեցի. [1661 թ.]. № 70, էջ 294—302, № 71, էջ 326—333, № 72, էջ 358—364

6557 Տրամախոսություն. № 71, էջ 342—346

1860

6558 Մովսես Խորենացիին վրա նոր քննություն. [Հունվար]. № 73, էջ 12—17

6559 Հայկազեան բնկերություն [Կ. Պոլսում]. № 75, էջ 71—76

6560 Տամարական գիտելիք մը. № 76, էջ 104—109

6561 Նար հայ պատմագրաց [Վենետիկի հրատ.]. № 76, էջ 134—137

6562 Ջերեզեներուն վրա. № 79, էջ 212—218

6563 Հայոց տառագրության քննություն. [Մ. Նալբանդյանի «Հրաշագործ Հայոց տառագրություն» գրվածքի մասին]. № 86, էջ 49—59

6564 Նալբանդյանցին մեկ նամակին վրա [Կ. Պոլսի «Մեղու»-ի մեջ. Ջամուրճյանի դեմ]. № 87, էջ 83—102

6565 Մեղուին պատասխանը [Մ. Նալբանդյանի պաշտպանություն, ընդդեմ Ջամուրճյանի]. № 93, էջ 280—287

6566 «Մեղու»-ի հրատարակչին քանի մը խրատներ. [Մ. Նալբանդյանի և «Մեղու»-ի դեմ]. № 94, էջ 306—315, № 95, էջ 331—337, № 96, էջ 364—372. 1861. № 97, էջ 17—26

1861

6567 Թոմաս Մեծոբեցի և պարոն Նև. № 97, էջ 9—16

6568 Վինաբաններու նոր կերպ մը [Հ. Սվաճյանի «Մեղու»-ի դեմ]. № 97, էջ 26—30

6569 Ազգային Սահմանադրություն և սահմանադրականք. № 109, էջ 11—18, № 110, էջ 40—48, №111, էջ 70—74, № 112, էջ 110—117, № 113, էջ 144—149, № 114, էջ 177—184

6570 Դևերուն գոյությունը և չարությունը [Նոթից չարախոսում է Մ. Նալբանդյանի վրա]. № 113, էջ 137—144, № 114, էջ 169—177, № 115, էջ 209—216, № 116, էջ 241—246, № 117, էջ 273—279, № 118, էջ 305—310, № 119, էջ 337—343, № 120, էջ 369—378. 1862. № 121, էջ 1—10, № 122, էջ 33—42, № 123, էջ 65—78, № 124, էջ 87—104, № 125, էջ 129—136, № 126, էջ 161—165, № 127, էջ 193—198, № 128, էջ 225—233, № 129, էջ 257—264, № 130, էջ 289—295, № 131, էջ 321—326, № 132, էջ 353—366

1862

6571 «Հյուսիսափայլ» պարբերականին գաղափարությունը [Հրճվում է, որ նրանից գաղափարել է]. № 123, էջ 79—86

1864

6572 Վոլգեր բարուց կողմեն. № 2, էջ 9—10

6573 Կրթություն և բարոյականություն. № 4, էջ 25—27

6574 «Մեղուն» և «Մասիսը» [Մամուլի տեսություն]. № 6, էջ 46—48

6575 Հեղափոխության արդյունքը [Ֆրանսիայի 1789 թ. բարեփոխ. ուսուցչի մասին]. № 7, էջ 55—56

6576 Երգ որմնադրաց [Ջափածո]. № 9, էջ 69

6577 Աղեի ազատություն. № 11, էջ 84—85, № 12, էջ 93—94

6578 Տեմարտ և «Մասիկ». № 12, էջ 87—88

6579 Իշխանություններուն ծագումը [Առաջնորդող]. № 12, էջ 89—90, № 13, էջ 97—98, № 14, էջ 105—106, № 15, էջ 113—114

6580 Ժամին Ֆրանսասան կըլլա. № 16, էջ 126—127

6581 Աենդիր Միության հունաց ընդ հայոց. № 16, էջ 129—130

6582 Լեզվի վերանորոգություն. № 17, էջ 132—134

6583 Թատրոն և բարոյական. № 20, էջ 156—157

6584 Սեփիլ: [Ջափածո]. № 20, էջ 158

6585 Ռոզոֆ առ ազգն [«Մերևակ»-ի խմբագրի մասին]. № 21, էջ 161—162

6586 Հրաշալի բժշկություն. № 21, էջ 165—166

6587 Գիտություն հավատքի օգնական. № 22, էջ 169—171

6588 Սեապաշտություն. № 22, էջ 175

6589 Հոբինեաեոս աղանգանկտ. № 23, էջ 177—178, № 25, էջ 193—194, № 26, էջ 201—202

6590 Աղաեղներն պատմելուն օգուտը. № 24, էջ 185—187

6591 Վիքտոր Հյուգո և Մաղիկ. № 24, էջ 188

6592 Մեղու աստվածաբան և Մուսայք Մասյաց օրենսգիրք [Թանավոհ]. № 26, էջ 207—208

6593 Հայ բողոքականները [Առաջնորդող].

Հայ հրապարակախոսներ և խմբագիրներ՝ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ, ՍՏ. ՆԱԶԱՐՅԱՆ, Հ. ՊԱՐՈՆՅԱՆ, ՍՏ. ՈՍԿԱՆ, Մ. ՄԱՄՈՒՐՅԱՆ, Ա. ԱՐԱՍԽԱՆՅԱՆ. Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, Է. Տ–ԳՐԻԳՈՐՅԱՆ, ՍԳ. ՍԳԱՆԴԱՐՅԱՆ

№ 27, էջ 209—210, № 28, էջ 217—218, № 29, էջ 225—227, № 30, էջ 233—234

6594 Ազգայնության վրա ընդհանուր տեսություն. № 31, էջ 241—243, № 32, էջ 249—250, № 33, էջ 257—258, № 34, էջ 265—267, № 35, էջ 274—276

6595 Պյութագորյան փիլիսոփայությունը. № 33, էջ 251—252

6596 «Մաղիկ». [Հրագրի մասին]. № 33, էջ 255—256

6597 Աղեկ գրքերու ընկերություն. № 33, էջ 258—260

6598 Պիգասյան Թռչնիկ [Հանդեսի մասին]. № 33, էջ 261—263

6599 Նկեղեցական բարեկարգություն. № 35, էջ 273—274

6600 Պղատոն և Տրիտերիք Բ. № 35, էջ 277—

6601 Ռենանի գրքին դեմ [Վարք Հիսուսի]. № 35, էջ 291—293, № 38, էջ 298—299, № 39, էջ 308—309

6602 Նկեղեցի և ընտանեկան դպրոց. № 38, էջ 297—298

6603 Տրեհնամասնեներու և բողոքականներու միությունը. № 40, էջ 317—318

6604 Հավատքը ինչի՞ պետք է. № 41, էջ 321—323, № 42, էջ 329—331

1866

6605 Նոր տարի [Հանդեսի խնդիրների մասին]. № 97, էջ 1—2

6606 Ռուսաստի մեկ վկայությունը. № 98, էջ 15—16

6607 Մորմոններ: [Ազանդ]. № 104, էջ 47—48

6608 Բողոքականության արդյունքը ազգիս մեջ. № 104, էջ 61—63, № 105, էջ 68—71

6609 Ջենոր Գլակ և Բրուտոն: [Սկիզբը № 36]. № 104, էջ 63, № 107, էջ 84—85, № 108, էջ 94—95, № 109, էջ 98—100

6610 Պռոմնբեոս կամ նախնական ավանդություն. № 105, էջ 65—67, № 106, էջ 73—75, № 107, էջ 81—82, № 108, էջ 89—91, № 109, էջ 95—96, № 110, էջ 103—106, № 111, էջ 113—114, № 112, էջ 121—123, № 115, էջ 129—130, № 114, էջ 137—139, № 115, էջ 145—147

6611 Աստվածաշնչի նոր թարգմանություն մը. № 114, էջ 141—143, № 118, էջ 175

6612 Մոլոռականեռ արդյոք բնակիչ ունեն. № 118, էջ 171—172, № 119, էջ 173—174

6613 Տեսություն պ. Ճ. Արամյանին դիտողությանը վրա [Սկիզբը № 118]. № 120, էջ 183—185, № 123, էջ 207—209

6614 Մահիգուժ: [Մ. Նալբանդյանի]. № 124, էջ 217

6615 Ռուսահայ ի՞նչ ըսել է. № 129, էջ 353—355

6616 Իզմիրի դպրատունը [Մ. Ոսկանի մասին]. № 131, էջ 373—374

6617 Տպագրության ազատություն ի Ռուսաստան. № 133, էջ 389—390

6618 Կրոնք և ազգությունք. № 135, էջ 399—40, № 136, էջ 447—448

6619 Ռուս տերություն և Լեհաստան. № 136, էջ 452—453

ՄՈՒՍԱՑԳՐ ՄԱՍՑԱՑ: Շաբաթաթերթ բաուերական. Կ. Պոլիս, տպ. Արևելյան, 1857—1858, 4 էջ, (44×30) սմ. բաժանորդագինը տարեկան 60 դահեկան։

Հեղինակ գործույ՝ Ա. Հ. Ճիզմեճյան (Արմենակ Հայկունի)։

Мусайк Масяц.— Музы Масиса. Еженедельник. Костантинополь, 1857—1858

«Մուսայք Մասյացո»-ի խմբագիր Արմենակ Հայկունին ծնվել է Կ. Պոլսում 1835 թվին։ Փոքր հասակում կորցնելով ծնողներին՝ նախ սովորել է Ազգային հիվանդանոցի որբանոցում, ապա՝ անգլիական (Համլենի) բողոքական դպրոցում։

1860-ական թվականներին, երբ արևմտահայ թատրոնն սկսում է իր առաջին քայլերը Ա. Հայկունին ոգևորված հայ թատրոնի գաղափարով, 1857 թվականի սկզբներին, առաջինը մեր իրականության մեջ, հրատարակում է «Մուսայք Մասյացո» թատերական պարբերականը։

«Մուսայք Մասյացո»-ը կարճ կյանք է ունեցել՝ ընդամենը երկու տարի։

«Մուսայք Մասյացո»-ում լույս են տեսել թատերական առեղծագործություններ, բանասիրական, տեսական հոդվածներ՝ թատրոնի, դրամատուրգիայի և թատրոնի գործիչների մասին։

Թարգմանական ու ինքնուրույն պիեսներն կողքին «Մուսայք Մասյացո»-ում տպագրվել են՝ հոդվածներ թատրոնի նշանակության մասին։

«Մուսայք Մասյաց»-ում են լույս տեսել Ա. Հայկունու թարգմանած «Հերսիլիա և Կատերինա պիեսները և նրա փոխադրած «Վատ սիրտ կամ առակալի դիշեր մը Սիրաքուղայի մեջ» պիեսը։

Այդ պիեսներն ունեն բարժուական-բարոյախոսական բովանդակություն, ժամանակի ֆրանսիական ու իտալական մելոդրամների գաղափարներով են լցված։ Ա. Հայկունու ինքնուրույն պիեսներից են՝ «Ավրա Գեղեցիկ և Շամիրամ» և «Ոդիմպիադա», որոնց բովանդակությունը վերցված է պատմական հայ անցյալից։

Ա. Հայկունու «Երշակ» պատմական ողբերգությունը աշխարհաբար է։

Իբրև դրամատուրգ Ա. Հայկունին խոշոր ազդեցություն և հետք չի թողել մեր դրականության մեջ, գեղարվեստական տեսակետից նրա պիեսները թուլլ գործեր են։

Ա. Հայկունին ունի նաև մի շարք բրոշյուրներ՝ «Գաղտնիք կղերականության», «Գերեզման երիտասարդաց» (դիտա-առողջապահական), «Գաղտնիք բնության», «Գարնան ծաղիկներ» և «Ճերմակ կամ պրն. Ստ. Փափազյան և յուր ժամանակը»։

Բացի վերջին գրքույկից, որ ուղղված է՝ եկեղեցու, հոգևորականության դեմ, մնացած բոլոր բրոշյուրները նվիրված են առողջապահական հարցերի, երիտասարդության մեջ բուն գրած ախտերին։

Ա. Հայկունին ժամանակի պարբերականներում՝ «Մուսայք Մասյաց»-ում, «Ծաղիկ»-ում, «Գնդասյան Թռչնիկ»-ում դրել է նաև՝ բանաստեղծություններ, պոեմներ և հոդվածներ։

Նրա պոեմներից են՝ «Վարդ ու շուշանը», «Մարատ և Նարդիզը», «Հովսեփ և Աստղիկը» և այլն, որոնք բոլորն էլ թուլլ գործեր են։

Ա. Հայկունին 1861 թվին հրատարակել է նաև «Էլիզա» վեպը, որ պատկերում է Ղրիմի պատերազմի տարիներին՝ իր տպավորությունները, հուշերը։

Իբրև խմբագիր, հրապարակախոս աստիճանի գալով 1860-ական թվականների սկզբներում Ա. Հայկունին կանգնել է ժամանակի պրոգրեսիվ մտավորականների շարքերում և պայքար է մղել՝ կղերա-պահպանողականների դեմ։

Նա պայքարել է ամենամոլի ռեակցիոներ՝ Ջամուճյանի դեմ։ Ա. Հայկունին ծանոթ է եղել Մ. Նալբանդյանին, հանդիպել է նրան Իզմիրում և Կ. Պոլսում, սիրել ու հարգել է նրան, որոշ չափով կրել է Մ. Նալբանդյանի գաղափարական ազդեցությունը։

Իր հրապարակախոսական հոդվածներում Ա. Հայկունին պաշտպանել է հայերի ազգային-ազատագրության գաղափարը, մերկացրել է եվրոպական պետությունների գաղութարարական քաղաքականությունը, քննադատել, խարազանել է հայ հոգևորականությանը, շեշմորեն դրել է մեր ժողովրդի լուսավորության հարցերի մասին։ Ահա մի քանի նմուշներ նրա հոդվածների հիմնական գաղափարներից։

«Մուսայք Մասյաց»-ի մի քանի համարներում տպագրված են խմբագրականներ, քաղաքական հոդվածներ, որտեղ Ա. Հայկունին բարձր է գնահատում թատրոնի դերը՝ ժողովրդի լուսավորության ու դաստիարակման գործում։ Եվ այդ, այն պայմաններում, երբ Կ. Պոլսում խավարամոլները կատաղորեն խափանում էին թատրոնի առաջին քայլերը, թատրոնը անբարոյականության մի վայր էին համարում, դերասաններին՝ անբարոյական մարդիկ։

Ա. Հայկունին պայքարի է դուրս եկել խավարամոլների դեմ, նա գրել է. «Թատրոն մը ուրիշ բան չէ, բայց միայն ժողովրդյան վարքը և բարքը ուղղելու նպատակով կանգնած դպրոց մը»։

Նա բարձր է գնահատել պիեսների լեզուն. «...թատրոնի մեջ, դերասանին բարձր ձայնով հնչած պարզ և մաքուր խոսվածքը հանդիսատեսներուն մտքին վրա մեծ ազդեցություն ընելով անշուշտ պիտի դրգռե զիրենք նույն կերպով խոսելու»։ Գրում է Ա. Հայկունին։

Իր մի շարք հոդվածներում Ա. Հայկունին կրոնը և հոգևորականներին դրական է որպես՝ լուսավորության ու գիտության քշնամի, որպես մի քար՝ կրթության, թատրոնի, դրականության զարգացման ճանապարհին։

Նա գրել է. «Մարդկային բարոյականությունը երբեք ծագում առած չէ կրոնքեն։ ...Կրոնավորաց և բարոյականության մեջ ահագին անջրպետ մը կա.... Մարդս աշխարհ եկած չէ հանդերձյալ կենաց համար առանջվելու, այլ այս կյանքս ալ շատ նրանություններ ունի, որ վայելելու է»[1]։

Ռեակցիոն տարերը, կղերը, Կ. Պոլսի պահպա-

[1] Ճերմակ կամ պ. Ս. Փափազյան, 1863, էջ 4։

նոզական մամուլը և աղդային իշխանութիւնները հալածել են Ա. Հայկունուն։

Պահպանողական ժամանակ-ի խմբագիր Սահակ Փափազեանը եմանապարհը կորցուած, ամոլոված հրապարակախօսին համարում է՝ ասլն ան հոգիներին մեկը, որոնք անդադար կմարտընչեն աստծու եկեղեցւոյն դեմ[1]։

Ա. Հայկունու հակակրօնական գործերի համար Կ. Պոլսի պատրիարքը բանադրել է նրան, համաձայնելով հերետիկոս։

Հալածանքն այնքան է բորբոքւում, որ հոգևոր իշխանութիւնների և պատրիարքարանի վճռական պահանջով Ա. Հայկունին գրում է մի մեղմյական-բացատրական։ Կ. Պոլսի առաջավոր մամուլը՝ ամենուն-ն պաշտպանել է Ա. Հայկունուն։

1864 թվականից Ա. Հայկունին փոխարինել է Սվաճյանին, եղել է ամենուն-ի խմբագիր։ Բայց նրա դեմ հարուցված հալածանքները, կյանքի ծանր պայմանները թույլ չեն տվել Ա. Հայկունուն շարունակել իր պայքարը՝ կրոնի ու եկեղեցու և խավարամոլների դեմ և 1886 թվին, 31 տարեկան հասակում աղքատութեան մեջ, մեռնում է նա։

1857 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2, № 2, էջ 1—4

6620 Հրավեր առ Մուսայս ի Մասիս։ [Ջափաճո]. *էջ 1*

6621 Հայոսարարութիւն։ [Թերթի մասին]. *էջ 1*

6622 Հերսիլիա։ [Ողբերգութիւն]. *էջ 1—4, № 3, էջ 3—4, № 4, էջ 3—4, № 5, էջ 2—4, № 6, էջ 1—4*

1857[2]

6623 Ի՞նչ է թատրոն մը. [Տեղեկութիւն թատրոնական]. *№ 2, էջ 2, № 4, էջ 1—2, № 5, էջ 2, № 7, էջ 1—2*

6624 ***. Բողոք առ սիրուհիս։ [Բանաստեղծութ.]. *№ 4, էջ 2*

6625 Կատարինեն։ Ողբերգութիւն չորս վարագուրի բաժանած։ [Շիման ով ուօրթ անգլ. վեպից]. *№ 7, էջ 2—4, № 8, էջ 2—4, № 9 ,էջ 1—4, № 10, էջ 2—4, № 11, էջ 2—4, № 12, էջ 3—4, № 13, էջ 1—4*

6626 ***. Զեյթունցին իր պինդալ սիրուհուն։ [Բանաստեղծութ.]. *№ 11, էջ 4*

[1] Ժամանակ, Կ. Պոլիս, 1863, № 16։

[2] Դրվում է համառոտ նկարագրութեամբ։

1858

6627 Նոր–տարի։ [Խմբագրական]. *№ 14, էջ 1*

6628 Երգեցակ։ Ողբերգութիւն չորս վարագուրի բաժնված։ [Կամ նաև առաջարան]. *№ 14, էջ 2—4, № 15, էջ 2—4, № 16, էջ 2—4, № 17, էջ 2—4, № 18, էջ 3—4*

6629 Թատրոն Հայկազեան։ [Խմբագրական]. *№ 15, էջ 1*

6630 Ե. Մ. Մ. Վարդանի. առ ողբս զվազամեռիկ երկորյակ դստերս յուր գնացեալ՝ գՇուրիկ և զԳոհարիկ։ [Բանաստեղծութ.]. *№ 15, էջ 1—2*

6631 Ազգասիրութիւն։ [Խմբագրական]. *№ 16, էջ 1*

6632 Գաւակեր հուսահատեալ սրտի։ [Բանաստեղծութ.]. *№ 16, էջ 2*

6633 Հեքիմյան, Սրապիոն։ Տաղք, քերթվածք և բառերգութիւնք. *№ 17, էջ 1—2*

6634 Ղափրասեցյան, Գարեգին։ «Քաջ զինվոր մը...» «Քիզ տեսա սիրուն...»։ [Բանաստեղծութ.]. *№ 18, էջ 2—3*

ԲՆԱՐ ԱՐԵՎԵԼՑԱՆ։ Կ. Պոլիս, տիմատիկ Գ. Երանյան, 1857—1859—1863.

Հատը 40 դուրուշ, տարեկան 400 դուրուշ։
Խմբագիրներ՝ Արիստակես Հովհաննիսյան։
Գաբրիել Երանյան։
Վերջում՝ Ն. Քաշճյան։

Кнар Аревелян. Восточная лира. Константинополь, 1857—1863

Այս ապակենտիպ թերթը հրատարակել է արևելյան ժողովուրդների (տաճիկներ, պարսիկներ, արաբներ) և հայերեն երգերը՝ եվրոպական ձայնագրութեամբ մշակված։

Միքանի համար է տալվել ապակենտիպով, մեզ չի հաջողվել գտնել և նկարագրել այս երաժշտական պարբերականի նյութերը։

1858

ԵՎՐՈՊԱ։ *Օրագիր ընտանեկան։ [Երկշաբաթաթերթ]։ Վիեննա, տպ. Մխիթարյան, 1858—1863, 16 էջ, (28×20) սմ.*

Հրատ. և խմբագրութ. Մխիթարյան Միաբանութ.

Европа. Газета. [Двухнедельник]. Вена, 1858—1863

ԹԱՆԳԱՐԱՆ ՀԱՍԱՐԱԿԱՑ: *Գիտական հանդես. Զմյուռնիա, 1858.*

Խմբագիր՝ Գալուստ Կոստանդյան.

Тангаран Асаракац.— Музей общественный. Научный журнал. Измир, 1858

ՀԱՐՈՒՍԻՍԱՓԱՅԼ: *Օրագիր ընդհանուր ազգային լուսավորության և դաստիարակության. Մոսկվա, տպ. Լազարյան ճեմարանի, 1858—1864, 64, 80 էջ, (24×16) սմ. բաժնորդագինը տարեկան 8 ռուբլի.*

Խմբագիր՝ Ստեփանոս Նազարյան.

———

Այսուհետև ոչինչ եղիպատոյան խորամանկ քուրմեր, որ կամեին լինել գիտության միակնակ պահապանքը. այսուհետև ոչինչ Չինական պարիսպ, որ պիտի է փակեր լուսավոր գաղափարների մուտքը ազգերի մեջ: Այսուհետև լույս և ճշմարտություն և ազատություն խավարի բարեկենյան գերութենից:

Ս. Նազարյանց

«Юсисапайл» — Северное сияние. Журнал обще-национального просвещения и воспитания. Москва, 1858—1864

«Հյուսիսափայլ»-ի խմբագիր Ստեփանոս Նազարյանը հենց առաջին համարի «Հայկական լեզվի խորհուրդը» իր հոդվածում հետևյալն է գրել այդ հանդեսի նպատակների ու խնդիրների մասին. «...Հյուսիսափայլ» օրագիրը կբաժանվի չորս առանձին հոդվածների.

Առաջին հոդված.

Սորա մեջ գրվելու են ճառեր ընդհանուր երկրագիտության, ուշադիր լինելով Հայաստանի և Ռուսաստանի աշխարհագրության ու ստատիստիկային, այլև զանազան աշխարհների նկարագրությունք, նորա բնական կերպարանությունքը և դրացնից առաջացած հետևանքը ազգային քաղաքագործության մասին: Տեղեկություններ աշխարհագրական և հայտնագործություններ վերա և հարցաբրություն արժանի հատվածներ աշխարհի հինգ բաժիններին մեջ ճանապարհորդած մարդկանց գրվածքներից:

երկրորդ հոդված.

Սորա մեջ կպարունակվին համաշխարհային պատմության վերա ճառեր, ուշադիր լինելով Ռուսաց ազգի պատմությանը: Այսոնք լինելու են հիշատակի արժանավոր անցքերը համաշխարհական պատմության մեջ, վարքագրական պատկերացույցք երևելի մարդկերի թե Եվրոպայի, թե Ասիայի և թե Ռուսաստանի մեջ հատկապես: Հայրենական ազգի պատմությունը, ինչքան որ Հայք կարողացել են դրծ կատարել աշխարհի հրապարակումը, քաղաքական հանգիսի մեջ, պիտի է այստեղ ավանդվի ազգին, ցույց տա հայերին յուրյանց նախահարց արդյունաբերությունը և վնասաբերությունը ազգին, նորա պարծանքի և ամոթը, որպես ուսումն և խրատը հետագա հայերին:

Երրորդ հոդված.

Սորա մեջ, կպարունակվին բնագիտական ճառեր, այսինք խոսք և գրույց այն օրենքների վրա, որ ներգործում են մարմնեղեն աշխարհի մեջ և այդ օրենքների գործադրությունը ընկերական կեցության համար, ճառեր զանազան ֆիզիկական հայտնությունների վերա, հասարակախոս աստեղարաշխության, քիմիայի, հանքաբանության և ֆիզիոլոգիայի մասին: Այստեղ կլինի նույնպես բանախոսություն անկական կյանքի վրա, գիտության արժանի բույսերի մասին աշխարհի զանազան սահմաններումը, նորա տնկարկության և ներգործության մասին հասարակաց օրախոսության վերա: Բացի սրանից, նկարագրություն օգտակար գյուտերի և հայտնագործությունների թե ճարտարության և թե բնության մեջ:

Չորրորդ հոդված.

Բարոյական, գեղեցիկ, բանաստեղծական ճառեր. այստեղ գրվելու են առավել պատվական մտածություններ և առավել պատվական զրույցողություններ թե ոտանավոր և թե արձակ ոճով. ընտիր ընտիր թարգմանված հատված հին հայկական լեզվից և եվրոպական մատենագրություններից. այլև քննողական ճառեր թե նոր և թե հին հայերեն հրատարակած գրքերի վրա, փախչելով ամենայն վիճաբերություններից, անաչառապես դատելով արժանավորությունը ամենայն աշխատության որ բղխած էր հայկական հանճարից:

Հրապարակող՝ Ս. Նազարյանց

Իր ժամանակի առաջադեմ ամսագիր «Հյուսիսափայլը» հրատարակվել է Ստեփանոս Նազարյանի խմբագրությամբ և Միքայել Նալբանդյանի նոանդուն մասնակցությամբ։ Ստեփանոս Նազարյանը իր գրվածքներով և «Հյուսիսափայլը»-ով կարևոր դեր է կատարել՝ հայ հասարակական մտքի ու գրականության զարգացման գործում։

«Հյուսիսափայլը»-ը համախմբելով իր շուրջը ժամանակի հայ առաջավոր ինտելիգենցիային, այդ թվում Մոսկվայի համալսարանի առաջավոր հայ ուսանողներին, պայքար էր մղում կղերա-ֆեոդալական գաղափարախոսության դեմ։

«Հյուսիսափայլը»-ն առաջին հայ ամսագիրն էր, որ մի շարք հարցերում հետևում էր ուուսական առաջավոր գրականության և հրապարակախոսության գաղափարներին։

«Հյուսիսափայլը»-ը նոր լույս տնսավ, «Սովրեմեննիկ»-ի դեկավարությունն անցել էր ռուս ռևոլյուցիոն դեմոկրատներին՝ Չերնիշևսկուն, Դոբրոլյուբովին։

«Հյուսիսափայլը»-ում սկսեցին տպագրվել Մ. Նալբանդյանի և ուրիշների հոդվածները, որոնք արձագանքում էին «Սովրեմեննիկ»-ի առաջադրած՝ քաղաքական, տնտեսական, փիլիսոփայական և հասարակական կյանքի վերափոխման գաղափարներին։

Ծու. Վեսելովսկին «Հյուսիսափայլը»-ի մասին գրել է. «Հյուսիսափայլը»-ը և նրա շուրջը հավաքված խմբակի պատմությունը հետաքրքրում է առանձնապես այն պատճառով, որ հայ մամուլի և հրապարակախոսության հանկարծակի ծաղկումը հանդես եկավ 60-ական թվականներին ուուս հասարակական կյանքի ազդեցության տակ. ընդհանուր շարժման նոր հովերն իրենց արձագանքը գտան հայ շրջաններում, չկտրելով, սակայն, նրանց գործիչներին ինքնուրույնությունից և հարազատ հողի վրա այդ սերմերն աճեցնելու հնարավորությունից»[1]։

«Հյուսիսափայլը»-ի խմբագիր Ստեփանոս Նազարյանը ծնվել է Թիֆլիսում 1812 թվին։ Նա սովորել է Ներսիսյան դպրոցում, ապա շարունակել է Դորպատի համալսարանում։

1840 թվականին ավարտելով Դորպատի համալսարանի պատմա-փիլիսոփայական ֆակուլտետը, 1843 թվին Ստ. Նազարյանը վարում է Կազանի համալսարանի հայոց լեզվի դասատուի պաշտոն, իսկ 1849 թվից Մոսկվայում Լազարյան ճեմարանի արևելյան լեզուների պրոֆեսորի պաշտոն։ 1869—1871 թ.թ. Ստ. Նազարյանը Ներսիսյան դպրոցի տնօրեն է եղել։ Նա մահացել է 1879 թվին։

Ստ. Նազարյանն իրրև խմբագիր և ժուրնալիստ ունի իր տեղը հայ պարբերական մամուլի պատմության մեջ։ Նա եղել է ժամանակի ամենառաջադեմ մարդկանցից, իր հրապարակախոսական հոդվածներում երևան է բերել՝ ակզբունքայնություն, ղեկավարվել է գիտական տվյալներով, տիրապետել է տրամաբանության օրենքներին, օգտվել է երկիծանքի, ձախակողմ զենքից։

Մեծ գրկանքների գնով, վեց տարի շարունակ Ստ. Նազարյանը հրատարակել է «Հյուսիսափայլը»-ը, պայքարելով կղերա-ֆեոդալական գաղափարախոսության իշխող հսկա բանակի, ցարական ցենզուրայի և խավարամոլության դեմ։

Ստեփանոս Նազարյանը ներկայացնում էր լուսավորական շարժման լիբերալ բուրժուական թևը։ Ստ. Նազարյանը դեմ էր ժողովրդի ազատագրման ռևոլյուցիոն ուղուն, կողմնակից էր խաղաղ բարեկեցություններ՝ եկեղեցու ռեֆորմի, վաճառականության զարգացման, դպրոցի և կրթության ավրպականացման, թատրոնի ու լրագրության տարածմանը և այլն։

Իր «Ֆրանսական ռևոլյուցիայի պատճառները» հոդվածաշարքում Ստ. Նազարյանը դեմ է դուրս գալիս ֆրանսիական ռևոլյուցիային և գրում է, որ ռևոլյուցիան պիտի կանխվեր ռեֆորմների միջոցով, որ «ժողովրդի դերագույն իշխանության ուամունքը կորստաբեր էր։

Ստ. Նազարյանի նպատակն էր կապիտալիզմի ուղիով մղել հայկական կյանքը, նա գրում էր՝ առևտրի ու արդյունաբերության զարգացման միջոցառումների մասին, դեմ էր ֆեոդալական կարգերին, այդ իմաստով նրա պայքարը կղերա-ֆեոդալական հոսանքի դեմ՝ առաջադիմական էր։

Ստ. Նազարյանը գտնում էր, որ ժողովրդի լուսավորության գործը պիտի կատարել աշխարհաբար, նրան հասկանալի լեզվով, նա առաջադրեց դպրոցի աշխարհականացման պահանջը։

«Հյուսիսափայլը»-ը մեծ աշխատանք է կատարել հայ գրական միասնական լեզվի մշակման գործում։ Նա գրաբար հոդվածներ չէր տպում, բոլոր

[1] Сборник об армянской литературы, 1939, стр. 110.

նյութերը միայն աշխարհարար էին լույս տես-նում։

Ստ. Նազարյանը դրեց նաև հայ եկեղեցու բարեփոխման, վերանորոգման հարցը։ Այս բոլոր հարցերում Ստ. Նազարյանը պայքարում էր որպես հայ բուրժուական լուսավորիչ, նա ձգտում էր հայ կյանքի զարգացումը տանել բուրժուական հարաբերությունների ուղիով։

Ժողովրդի կրթության և լուսավորության հարցերը կազմել են «Հյուսիսասփյուռ»-ի հիմնական խնդիրներից։ Ստ. Նազարյանը ժողովրդի լուսավորության գործին շատ մեծ նշանակություն էր տալիս, հանգելով իդեալիստական այն գաղափարին, որ լուսավորության միջոցով կարելի է բարձրացնել ժողովրդի ոչ միայն ինտելեկտուալ, այլև նյութական վիճակը։

«Հյուսիսասփյուռ»-ում տպվել են Ստ. Նազարյանի և ուրիշների մի շարք հոդվածները՝ դպրոցական գործի, դասագրքերի, ծրագրերի, ընտանեկան ու ֆիզիկական կրթության և մանկավարժական կադրերի պատրաստման մասին։

Ստ. Նազարյանը մեծ դեր է խաղացել նաև պրոգրեսիվ գրականություն ստեղծելու գործում։ Նա պայքարել է հին, սխոլաստիկական գրականության դեմ, նա իրոք լուսավորիչ ձգտում էր այն բանին, որ գրականությունը օգնի լուսավորության գործին։ Ստ. Նազարյանը պաշտպանել է «Քաֆտառական հրեա»-ի թարգմանությանը կցած Մ. Նալբանդյանի առաջաբանի դրույթները, որտեղ Նալբանդյանը քննադատում էր միխիթարյանների կրոնա-սխոլաստիկական ուղղությունը։

Ստ. Նազարյանը գտնում էր, որ դիտությունը, գրականությունը, թատրոնը պիտի քննադատեն հայ կյանքի բացասական երևույթները։ «Հայց ազդի մարմինը,— գրել է նա,— ունի իր վերստ ապականված տեղեր. դրանց քննել անաչառապես և ի բաց կորել սուր դանակով, չպիտի վախենա դիտությունը և մարդկային բարեկամը»[1]։

Ստ. Նազարյանը մեծ նշանակություն էր տալիս քննադատող, մերկացնող կատակերգությանը։ Նա գրել է. «Մեր կամենք մենք կշռել կատակերգական և ողբերգական խաղարկությունք, միտ դնելով, թե որը դոցանից հատաչացնում էր ավելի ներգործություն, այնուհետև փորձը տալու էր նախապատվությունը դուցն կատակերգականին»[1]։

Բարձր գնահատելով հայկական կյանքի բացասական երևույթների քննադատությունը, Ստ. Նազարյանը «Հյուսիսասփյուռ»-ում գովել է Գոգոլի «Ռևիզորը», ամսագրում տպագրել է հայ կյանքի խոցերը մերկացնող այնպիսի ստեղծագործություններ, ինչպիսիք են՝ Ս. Շահազիզի «Վանի վիշտը», Մ. Նալբանդյանի «Հիշատակարան»-ն ու «Մեռելահարցուկը», Գ. Տեր-Հովհաննիսյանի «Տեր-Սարգիս» վեպը և այլն։

Ստ. Նազարյանը մի ուրիշ խոշոր գործ էլ է կատարել։ Նա առաջինն է, որ գրել է ռուսերեն՝ հայ հին և միջնադարյան գրականության պատմությունը և այդպիսով օգնել է հայ-ռուս կուլտուրական կապերի ամրացմանը։

Բայց 1861 թվին, Մ. Նալբանդյանի հեռանալուց հետո, սկսվում է «Հյուսիսասփյուռ»-ի անկման շրջանը, նա զրկվում է իր մարտական ոգուց, քաղաքական պայքարող տիտանից։ Ստ. Նազարյանը լիբերալիզմի դիրքերից սկսում է հարմարվել ցարիզմի ռեակցիոն կուրսին և համարյա բն դադարեցնում է «Հյուսիսասփյուռ»-ում մարտական հրապարակախոսական և պոլեմիկական հոդվածների ու հասարակական-քաղաքական հայացքների արծարծումը։

Գրելով Ստ. Նազարյանի դրական հայացքների պրոգրեսիվ բնույթի մասին, միաժամանակ պետք է նշել, որ Ստ. Նազարյանի քննադատությունը սահմանափակ էր, դուրս չէր գալիս լուսավորական նպատակների շրջանակներից։ Օրինակ. նա քննադատում էր ֆեոդալական եկեղեցին, պահանջում էր ռեֆորմ, բայց չէր ժխտում կրոնը, ցանկանում էր վերանորոգել, լիբերալիզմի շահերին հարմարեցնել եկեղեցին։

Սկզբնական շրջանում «Հյուսիսասփյուռ»-ը տպագրել է նաև ժողովրդական լեգենդներ, ասացվածքներ և այլն։ Բայց հետագայում, նյութական ծանր վիճակն ստիպել է շատ կարևոր նյութերի տպագրությունը դադարեցնել։ «Հյուսիսասփյուռ»-ն իր գոյության վեց տարիների ընթացքում մեծ տեղ է տվել՝ գեղարվեստական գրականության թարգմանություններ։ Տպագրվել են՝ Բեռանժեի, Հայնեի, Լերմոնտովի և այլ շատ հեղինակների ստեղծագործությունների թարգմանությունները։

[1] Հյուսիսասփյուռ, 1861, № 1, էջ 8։

[1] Նույն տեղը, 1861, № 1, էջ 47։

Մ. Սադոյանի շնորհալի թարգմանությունը Լերմոնտովի «Դեմոն»-ի և մի արժեքավոր գործ է։

«Հյուսիսափայլ»-ն իր պրոգրեսիվ-լուսավորական գաղափարներով մեծապես առաջ մղեց հայ գեղարվեստական դրականության զարգացումը։ «Հյուսիսափայլ»-ում են տպագրվել Ս. Շահազիզի քաղաքական պոեմիայի լավագույն բանաստեղծությունները («Ներքրզածություն բանաստեղծի», «Ազգային վիճակ» և այլն) ու «Լևոնի վիշտը» պոեման, որտեղ անխնա մերկացված են հայ կյանքի՝ խավարամտությունը, ֆեոդալական ըրնությունը, սոցիալական հակասությունները։

«Հյուսիսափայլ»-ում են տպագրվել Մ. Նալբանդյանի ռևոլյուցիոն գեղարվեստական գրվածքները («Մինին խոսք, մյուսին հարսնա, «Մեռելահարցուկ», «Սատանայի պաշտոնական հանդեսը», «Հիշատակարան»-ը և այլն)։

«Հյուսիսափայլ»-ում է տպագրվել Գ. Տեր-Հովհաննիսյանի ռևոլյուցիոն հայտնի վեպը, «Տեր-Սարգիս»-ը, որը պատկերել է 1850—60-ական թվականների հայ հոգևորականությունը իր խավարամիտ ու այլանդակ կողմերով։

«Հյուսիսափայլ»-ի շնորհիվ քննադատական մեթոդը դրսևորվում է հայ գեղարվեստական արվեստի մեջ, «Հյուսիսափայլ»-ը մեծ չափերով նպաստել է հայ ռևոլյուցիոն պոեզիայի ու արձակի զարգացմանը։

Ընդհանուր գծերով կանգ առնելով «Հյուսիսափայլ»-ի և նրա խմբագիր Ստ. Նազարյանի դերի ու կատարած աշխատանքների վրա, անհրաժեշտ ենք համարում ընդգծել, որ աշխատելով «Հյուսիսափայլ»-ում Մ. Նալբանդյանը և Ստ. Նազարյանը ինչպես քաղաքական, տնտեսական, լեզվական, նույնպես և գրականության հարցերում կղերա-ֆեոդալական գաղափարախոսության դեմ կռվում էին տարբեր դիրքերից, Ստ. Նազարյանը հայ լիբերալ բուրժուազիայի գաղափարախոսն էր, իսկ Մ. Նալբանդյանը՝ արմատական դեմոկրատ՝ աշխատավորական-գյուղացիական մասսաների շահերի պաշտպան։

Այժմ համառոտակի Մ. Նալբանդյանի մասին։

Հենց սկզբից անհրաժեշտ ենք համարում հայտնել ընթերցողին, որ մեծ մտածողի և գրծչի կյանքն ու բազմակողմանի գործունեությունը մենք տվել ենք՝ չափազանց համառոտ և հակիրճ։

Մ. Նալբանդյանի կենսագրական շրջիններըը— նպատակ չունեն տալ նրա բազմակողմանի կյանքն ու ստրած ժամանակաշրջանի պատմական նկարագիրը, մենք չենք խորացել Մ. Նալբանդյանի՝ փիլիսոփայական, տնտեսագիտական, դրականագիտական, լեզվաբանական և այլ աշխատությունների ու հայացքների մեջ։

Մեր նպատակն է եղել կանգ առնել Մ. Նալբանդյանի հրապարակախոսության վրա, նրա գործունեության ռևոլյուցիոն-դեմոկրատական ժամանակաշրջանում։

Միքայել Նալբանդյանը ծնվել է 1829 թվի նոյեմբերի 14-ին Նոր-Նախիջևանում, արհեստավորի ընտանիքում։ Սովորել է Գաբրիել Պատկանյանի ուսումնարանում, 1885—1859 թ.թ. ուսանել է Մոսկվայի համալսարանում։

Մոսկվայի համալսարանը խոշոր չափով ազդում է Մ. Նալբանդյանի քաղաքական աշխարհայացքի ձևավորման վրա։ Չերնիշևսկու պրոպագանդի ազդեցությունը շատ ուժեղ էր համալսարանի ուսանողության վրա։ Համալսարանի ուսանողները կարդում էին նույնպես Լոնդոնում հրատարակվող «Կոլոկոլ»-ը, որը խմբագրում էր Գերցենը և գաղտնի տարածվում էր Ռուսաստանում։

Մ. Նալբանդյանը Մոսկվայի համալսարանում սերտ կապեր է հաստատում ռուս և լեհ ռևոլյուցիոն ուսանողության հետ։

Մոսկվայի համալսարանում Մ. Նալբանդյանը լսել է առաջավոր բնագիտության ներկայացուցիչներին՝ Գլեբովին, Պոլոմին, Խոդեմցևին, Ռոզլեին և այլն։

1857 և 1859—1862 թ.թ. Մ. Նալբանդյանը եղել է արտասահմանում՝ Կ. Պոլսում, Վենետիկում, Վիեննայում, Բևռլինում, Փարիզում և Լոնդոնում։ Նա տեսել է գաղութային ու կիսագաղութային մի տակ գտնվող՝ Եգիպտոսը, Պաղեստինը, Հնդկաստանը, Թյուրքիան, Լեհաստանը։ Եվրոպայում Մ. Նալբանդյանը ականատես է եղել 1848 թվականների ռևոլյուցիոն շարժումներից հետո տեղի ունեցող կապիտալի և աշխատանքի պայքարին, կապիտալիստական կրիզիսներին, աշխատավորության քայքայմանը, բանվորական-գյուղացիական մասսաների կատաղի շահագործմանը։ Կարող է՞ր արդյոք մի այնպիսի զգայուն ու խորաթափանց մարդու համար, ինչպիսին Մ. Նալբանդյանն էր, իր ամբողջ տեսածն ու լսածն

անհետանալ անցնել։ Ոչ իհարկե։ Արտասահմանում նա կապեր է հաստատել «Լոնդոնի պրոպագանդիստների»-ի՝ Ա. Ի. Գերցենի ու Պ. Վ. Օգարևի հետ, նաև արևմտահայ դեմոկրատական ինտելիգենցիայի հետ, հանձինս Հարությունի Սվաճյանի և Մանուկ Ոսկանի։ 1862 թվին, վերադառնալով արտասահմանից Մ. Նալբանդյանը ձերբակալվում է և նետվում Պետրոպավլովյան բանտը։ 1865 թվին Մ. Նալբանդյանն աքսորվում է Սարատովի նահանգի Կամիշին քաղաքը, որտեղ մահանում է 1866 թվի մարտի 31-ին։

Մ. Նալբանդյանի ռևոլյուցիոն-դեմոկրատական հայացքները կազմավորվել են ռուս ռևոլյուցիոն-դեմոկրատների՝ Ն. Չերնիշևսկու, Ն. Դոբրոլյուբովի, Ա. Գերցենի ու Օգարևի անմիջական ազդեցության տակ։ Ինչպես ռուս ռևոլյուցիոն-դեմոկրատները, նույնպես Մ. Նալբանդյանը ելույթներում էր ոչ միայն կղերա-ֆեոդալական ռեակցիայի, այլև լիբերալ բուրժուազիայի դեմ։

Մ. Նալբանդյանը որպես ռևոլյուցիոներ-դեմոկրատ, որպես աշխատավորական-գյուղացիական մասսաների շահերի պաշտպան, իր ամբողջ գործունեությամբ և հրապարակախոսությամբ պայքար է մղել ներքին ու արտաքին ճնշողների, կեղեքողների դեմ, հայ ժողովրդի ինչպես սոցիալական, նույնպես և ազգային ճնշումների, հարստահարության դեմ։ Մ. Նալբանդյանը անցյալ դարի 50—60-ական թվականների ամենախոշոր դեմքն է, մեր ռևոլյուցիոն հրապարակախոսության հիմնադիրը, նա էր, որ առաջինը ապացուցեց, քարոզեց, որ հայ ժողովրդի փրկությունը միակ ուղին դա ռուսական ռևոլյուցիայի ուղին է։

Ըստ Նալբանդյանի՝ Ռուսաստանն է այն հզոր ուժը, որ կարող է վճռել հայ ժողովրդի ապագան։

Մ. Նալբանդյանը գծեց այն ուղին, որը հայ ժողովրդին միացրեց ռուս մեծ ժողովրդի ազատագրական պայքարին։

«Հյուսիսափայլ»-ը հանձինս Մ. Նալբանդյանի կրել է «Современник»-ի և ռուսական ռևոլյուցիոն-դեմոկրատական շարժման ազդեցությունը։ Այդ իսկ տեսակետից անհրաժեշտ ենք համարում, համառոտակի բացատրել «Современник»-ի և ռուսական ռևոլյուցիոն-դեմոկրատների դերը և գործունեությունը։

«Современник»-ը 1846 թվից անցավ նոր ղեկավարության (Ներկրասովի) ձեռքը։ Ն. Գ. Չերնիշևսկու և Ն. Ա. Դոբրոլյուբովի աշխատակցության շրջանում ամսագիրը դառնում է ռուսական ռևոլյուցիոն-դեմոկրատիայի մարտական օրգանը։ Այդ շրջանում, «Современник»-ի հասարակական-քաղաքական ծրագիրն էր՝ պայքար ինքնակալության և ճորտատիրական իրավունքի դեմ։ Չեռնյաև ժուրնալի խմբագիրը Ն. Գ. Չերնիշևսկին չէր, բայց նա էր հանդիսանում ժուրնալի ոգին, նա Դոբրոլյուբովի հետ գրում էին մարտաշունչ հոդվածներ՝ հասարակական-քաղաքական և գրական-եսական հարցերի մասին։ Իր հոդվածներում Չերնիշևսկին և Դոբրոլյուբովը պարզաբանում, պրոպագանդում էին ռևոլյուցիոն-դեմոկրատիայի գաղափարները և իրենց մասնիբուլիտական հայացքները։ Օգտագործելով գրաքննության հնարներ, հաղթահարելով ցարական գրաքննության արգելքները, «Современник»-ը գրում էր ճորտատիրական կարգերի դեմ, ընթացիկ քաղաքական ու տնտեսական հարցերի մասին, ֆրանսիական բուրժուական ռևոլյուցիայի մասին, քացահայտում էր Արևմուտքի բուրժուական շահագործման և լույս մասսաների աղքատացման էությունը։

«Վնասակար ուղղության համար» 1866 թվին միապետությունը փակեց «Современник»-ը։

Հայտնի է, որ Մ. Նալբանդյանը ընդգրկվեց ռուսական ռևոլյուցիոն-դեմոկրատական շարժման մեջ, սերտ կապեր հաստատեց Ա. Ի. Գերցենի, Ն. Պ. Օգարևի, Սերնո-Սոլովևիչի հետ, դարձավ այդ շարժման գործիչներից մեկը։

1860-ական թվականներին Մոսկվայում ու Պետերբուրգում սովորող հայ ուսանողներից շատերը նույնպես անձնական կապեր են ունեցել ռուս ռևոլյուցիոներ-դեմոկրատների հետ, դառնվել են «Современник»-ի և ռուսական ռևոլյուցիոն-դեմոկրատական քաղաքական մտքի ազդեցության տակ։

Մ. Նալբանդյանը 1861—62 թվերին լինելով Լոնդոնում բարեկամություն է հաստատում Ա. Ի. Գերցենի ու Ն. Պ. Օգարևի հետ։ Մ. Նալբանդյանն կարդացել, ուսումնասիրել և մեծապես ազդվել է Ա. Ի. Գերցենի ու Ն. Պ. Օգարևի հրատարակած ռևոլյուցիոն ազատ մամուլից, պրոպագանդիստական գրականությունից և Չերնիշևսկու գաղափարներից։

Վ. Ի. Լենինը գրել է, որ Գերցենն է եղել ռուսական ազատ մամուլի ստեղծողը արտասահմա-

նում, 1853 թվից Գերցենը Լոնդոնում հրատարակում է «Полярная звезда»-ն, իսկ 1857 թվից «Колокол»-ը։ Անկեղծ ճանապարհներով Գերցենի ուղղություն հրատարակությունները ուղարկվում էին Ռուսաստան։ «Колокол»-ը սկզբում ամսագիր էր, իսկ 1858 թվից դառել էր երկշաբաթաթերթ, նա Ռուսաստանում ուներ թղթակիցների լայն ցանց, որոնք սիստեմատիկ կերպով գրում էին՝ ցարական բռնություններին, բուրժուազիայի կեղեքումների մասին։ 1859 թվից «Колокол»-ին կից հրատարակվում էր հատուկ հավելված «Под суд» անունով, որը տպագրում էր մերկացնող հոդվածներ, թղթակցություններ Ռուսաստանից։

«Колокол»-ի մեջ մերկացվում, անողոք քննադատության էին ենթարկվում հորատատիրական կարգերը, ցարական բռնությունները։ 1861 թվի հորատատիրական իրավունքի վերացումից հետո «Колокол»-ում Գերցենը և Օգարևը մարտական պահանջ էին դնում՝ ոչնչացնել կալվածատիրական հողատիրությունը, հողը տալ նրանց ովքեր մշակում են այն։ «Колокол»-ը պահանջում էր իշխանության բոլոր մարմինների ընտրություն՝ ժողովրդի կողմից։ Չնայած իր տատանումներին դեպի լիբերալիզմը, իր կյանքի վերջին տարիներին Գերցենը «... հայացքը դարձրեց ոչ թե դեպի լիբերալիզմը, այլ Ռևոլյուցիոնալիզմ, այն ինտերնացիոնալիզմ, որին ղեկավարում էր Մարքսը (Լենին, Վ. Ի. Երկեր, հատ. 18, էջ 14)։

Այս հակիրճ ծանոթագրության մեջ մենք կանգ կառնենք մեծ ռևոլյուցիոներ-դեմոկրատ Մ. Նալբանդյանի միայն հրապարակախոսության և ռուս դեմոկրատների հետ ունեցած նրա գաղափարական կապերի վրա։

Նախա-Հյուսիսափայլ-յան շրջանում Մ. Նալբանդյանը գրել է «Հազարգա հայկական մատենադրութիւնեան» (1854 թ.), «Փափաղական հրեայի» առաջաբանը և «Հիսուսյանքը» աշխատությունը (1857 թ.)։

«Հյուսիսափայլ»-յան շրջանում նա գրել է՝ «Հիշատակարան Կոմս Եմմանվելի օրագրական թերթերից» (1858—59—60 թ.թ.), «Նկատողություն» «Հորհրդածություններ ազգի հառաջադիմության մասին» (1858), «Մխիթար Սեբաստացի և Մխիթարյանք» (1858 թ.), «Հրաշափառ խաչատառություն» (1860 թ.) և այլն։

Մ. Նալբանդյանը «Հյուսիսափայլ»-ում գրել է նաև հետևյալ հոդվածները՝ «Կրիմեական ժողովրդական լեզվով թարգմանված և տրված «Հոբին» պատմությունը Գամառ-Քաթիպայի աշխատությամբ, «Հանգիստ նոր հայախոսության Գործ Սանկտպետերբուրգի Նաղարյանց», «Մեռելահարցուկ» (վիպակ), և բազմաթիվ այլ նամակներ։

Այս հակիրճ թվարկումն ասում է, որ Մ. Նալբանդյանի մասնակցությունը «Հյուսիսափայլ»-ին շատ ընդարձակ է եղել, նրա հոդվածներն իրենց բովանդակությամբ՝ բազմակողմանի են, ժանրով բազմազան։

Մ. Նալբանդյանը «Հյուսիսափայլ»-ում գրել է՝ թե ինքնուրույն և թե թարգմանական գործեր, հրապարակախոսական, քննադատական հոդվածներ, պամֆլետներ, գրական-պատմական նյութեր, գիտական հոդվածներ, թղթակցություններ, նամակներ և այլն։

Իր հոդվածներում Մ. Նալբանդյանը գրել է՝ հայ ժողովրդի ազատագրության, հայ գրական լեզվի, ազգության հարցի, գրականության և թատրոնի հարցերի, զանազան քաղաքական ու տնտեսական խնդիրների, լուսավորության ու պրոգրեսի մասին և այլն։

Մ. Նալբանդյանը բարձր էր դասում հրապարակախոսությունը. հրապարակախոսության խնդիրն էր նա համարում՝ «...պատժել և պատուհասել բերանով ու գրչով ազգի պակասությունքը, հրապարակել նորանց աչքան, մինչև որ ազգը տեսանելով յուր վերայի կեղտը՝ զզվի, գարշի և խնամ տանի լվանալու և մաքրելու յուր անձը, որպեսզի արժանի լինի լուսափայլ դեմքով մասնակից լինել եվրոպական մարդկության բարիքներին»[1]։

Այժմ համառոտակի կանգ առնենք Մ. Նալբանդյանի հրապարակախոսության հիմնական հարցերի վրա։

Իր «Հիշատակարան»-ի մեջ Մ. Նալբանդյանը որոշակիորեն ասում է, որ ազգությունն ունի երկու հակադիր դասակարգ՝ «հասարակ ժողովուրդ և տգիտասիրն կուսքերս, իշխողներ, հարուստներ, ազնվականներ։

---

[1] Նալբանդյան, Մ., Երկերի լիակատար ժողովածու, հատ. I, էջ 315։

Նա կոչի է դուրս եկել շահագործողների, հարստահարների դեմ։ Նա ցասումնալի գրել է, որ պիտի վերանա հաստարակ ժողովրդի ու հարստահարողների միջև սահմանագիծը։ «Հաստարակության ներկա զարգացման հետևանքով պետք է ընդմիշտ վերանան, ինչպես պետք է ոչնչանան և ինքյան, այդ պարոնները, գերեզմանափորի բահի տակ այնպես, որ ապագա սերունդը չիմանա, որ 50 տարի առաջ ապրել են այսպիսի ողորմելի արարածներ»։

«Հաստարակ ժողովուրդը, պայքար նրա ազատության և երջանկության համար, ահա ինչն էր Մ. Նալբանդյանի ինչպես ողջ կյանքի ու ստեղծագործության, նույնպես և հրապարակախոսության հիմնականը։

Հոգևոր դասի, ժամանակի կղերի մասին հետևյալն է գրել. «Որտեղ մի դայթակղություն, որի պատճառը չէր եկեղեցական, որտեղ հարստահարություն, որի հերոսը չէր եկեղեցական, որտեղ խռովություն, որի խմորը չէր եկեղեցական։ Ահա, ժամանակը լցված է, ուստի և հրապարակի առաջ ասում ենք. տերություն լրտես-եկեղեցական, ազգը մատնող ու դավաճանող-եկեղեցական... կաթողիկոս քունավորող-եկեղեցական, եկեղեցի կողոպտող-եկեղեցական, շարաշար արրեցողության համար պատուհասվելուց փախչելով, յուր եկեղեցուն դրժող և դնալի պապականության դիմող-եկեղեցական..., կաթողիկոս չընտրվելու համար հավատն ուրացող-եկեղեցական..., կրոնական կարգ ասացող և մինչև յուր անասնական կյանքի վերջը բոզի հետ կենակցող-եկեղեցական, պարտքի գումարներն անհետացող-եկեղեցական, ի վերջո ամեն բան, եկեղեցական...»[1]։

Մ. Նալբանդյանը բազմաթիվ առիթներով շեշտել է, որ հոգևորականները և «ընտրյալները» չեն ազգության հիմքը, այլ հաստարակ ժողովուրդը։ Ահա նրա մտքերից.

«Ազգության հաստատունը և լծակը,— գրում է Մ. Նալբանդյանը 1860 թվականին,— է հաստարակ ժողովուրդը։ Մի ազգ, թող որքան կամի, հարուստ լինի երևելի մարդիկով, այնուամենայնիվ այդ ազգի ազգության մեքենան շարժվում է հաստարակ ժողովրդի վրա. սա է այդ մեքենայի առանցքը, լծակը և հաստատունը... Որ և իցե խոսելով ազգի վերա միշտ աչքի առաջ ունինք հայոց հաստարակ ժողովուրդը, և ազգ ասելով չենք իմանում այն մի քանի մարդիկ, որ արծաթի առատությամբ վեր են բարձրացել ազգի մակերևույթից, այլ այն խեղճ ու կարևկցության արժանի ժողովուրդը, որի վրա ծանրացել է ազգային ապարախտության հետևանքը»։

«...Ազգային շինություն բնական կերպով պիտի հաստատվեր ցածից—հիմքից. այդ հիմքը է հաստարակ ժողովուրդը։ Այն մարդը, որ սիրում է ազգը, որ նվիրում է յուր անձը ազգի բարոյական ապաստավորության, պարտական է ծառայել հաստարակ ժողովրդի օգտին։ Հաստարակ ժողովրդից կազմվում է ազգության մեքենան, լուսավոր մարդիկ կարող են և պարտական են միայն ուղղություն, գարկ և ընթացք տալ մեքենային»[1]։

Մ. Նալբանդյանը դասակարգերի ու նրանց պայքարի մասին գրել է. «Ամեն ժամանակ բանների նոր կարգը պատերազմ ունի հին կարգի հետ։ Անխուսափ համարելով որևէ հաշտեցում հակասարար դասակարգերի, ուղղությունների միջև, Մ. Նալբանդյանն իր ընկատողություններ հոդվածում գրել է. «Մեր ազգի մեջ կան հայացքներ, ուղղություններ, կան ուրնմն և դրշակներ, կա պատերազմ։ Օտարոտի մի բան էր հերքել այս, նույնպես օտարոտի էր ցանկանալ մի տեսակ միություն հակատակող բաժիններին։ Այդ վնասակար էր մեր ազգին։ Պատերազմը հետևանք է շարժողության, իսկ շարժողությունը կյանք է»։

Այնուհետև նա գրում է. «...օրենյալ է պատերազմը. թող նա լինի հզոր, անխնա, ազնիվ և բարեխիղճ»։

Ինչ պատերազմի մասին է խոսքը։

Այդ պատերազմն այն ժամանակ մղվում էր մի կողմից ազգային-կղերական, մյուս կողմից դեմոկրատական հոսանքների միջև։ Այդ պատերազմը մղվում էր ամբողջ կղերա-ֆեոդալական հայ մամուլի՝ «Մասյաց աղավնի»-ի, «Ճռաքաղ»-ի և ուրիշների ու դեմոկրատիայի տրիբուն Մ. Նալբանդյանի միջև։ Գ. Այվազովսկին, ցարական օխրանկային պրած իր ամբաստանագրում խընդրում էր մինիստրին «... Ըստ հնարավորին շուտ

---

[1] Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հտ. 3, էջ 24։

[1] Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հտ. 1, էջ 452 և հաջորդները։

արդելել «Հյուսիսափայլ»-ը, իսկ Մ. Նալբանդյանին, որպես վնասակար ու անհանդիստ մարդու՝ ենթարկել արժանի պատժի, օրենքի ամբողջ խստությամբ, որպես հանցավոր իր դավանակիցների համերաշխությունը խուսվելու դիտավորության և մեր համայնքի խիստ պատվարժան կրոնավոր և աշխարհիկ անձանց անձնապես վիրավորելու համար»։

Մ. Նալբանդյանը գտնում էր, որ հասարակ ժողովրդի շահերի պաշտպանությունն է իր միակ նպատակը։ «Ընկու տոզը» պամֆլետի մեջ նա գրել է, որ իր կյանքի այդ մեծ նպատակից չեն կարող հետ կանգնեցնել, ոչ բանտը, ոչ աքսորը. նա ասում է, որ պատրաստ է ոչ միայն բանիվ և գրչով, այլև ձեռնքով և արյունով պաշտպանել իր քարոզած ազատությունը և հայ հասարակ ժողովրդի արդար գործը։

Մ. Նալբանդյանը լավ էր ըմբռնում, որ Ռուսաստանում ծավալվող ռևոլյուցիոն պայքարը մեծ նշանակություն ունի. նա կործանելու է ճորտատիրական կարգերը, այդ կարգերի պաշտպան ցարիզմը, ազատագրելու է ցարիզմի գաղշապարի տակ հեծող ազգություններին, ամբողջ աշխարհի աշխատավորներին օժանդակող մի բան է։ Նալբանդյանը գրել է. «Ռուսիո ազատությունը ընդհանուր մարդկության ազատության վերաբերությամբ մեծ խորհուրդ ունի»։

Մ. Նալբանդյանը հայ ժողովրդի ազատագրական պայքարը կապում էր ռուս ժողովրդի ազատագրական պայքարի հետ, համարում էր Ռուսաստանի բոլոր ժողովուրդների ազատագրական պայքարի բաղկացուցիչ մի մասը։ Նա քննադատում էր այն ռեակցիոներներին, որոնք հայերի ազատագրության գործը անկապում էին Ռուսիայի իմպերիալիստական պետություններից, նա գրում էր, որ իրենց ագրեսիվ պլանների համար է, որ արևմտա-եվրոպական բուրժուական պետությունները «հայկական հարցը»-ով են զբաղվում։

Իր «Ընկու տոզը» պամֆլետում Մ. Նալբանդյանը կոչ էր անում դուրս գալ ռևոլյուցիոն պայքարի՝ սուլթանիզմի ու ցարիզմի դեմ, ներքին հարստահարիչների, կեղեքիչների դեմ, միանալ դեմոկրատական շարժմանը և ազատագրել հայ ժողովրդին։

Մ. Նալբանդյանը հայ ժողովրդի փրկությունը տեսնում էր միայն Ռուսաստանի ռևոլյուցիոն շարժմանը միանալու մեջ, զգուշացնում էր հայ դեմոկրատական ուժերին հետ չմնալ ռուսական ռևոլյուցիայից, նա գրել է. «Վախենում ենք և իրավունք ունինք վախենալու, քի մի գուցե մինչև հայը կշտանա յուր մահանման քնից, լուսինը անդնդասույզ գնա հորիզոնից ներքև»։

Մ. Նալբանդյանը ժողովրդի ազատագրությունը ընդունում էր միայն տնտեսական հարցի լուծման դեպքում։ Նա իր «Ընկրկագործությունը որպես ուղիղ ճանապարհ» գրքում պարզաբանել է, որ երբ հողը պատկանում է հասարակության մի անշնան մասին, կալվածատերերին, ժողովուրդը կմնա ստրկացած, կառավարման ձևի որևէ փոփոխություն չի բերի նրան ազատություն։

«Ընկրկագործությունը որպես ուղիղ ճանապարհ» գիրքը հանդիսանում է Մ. Նալբանդյանի քարոզած սոցիալ-քաղաքական և ազգային ազատագրական հայացքների հանրագումարը։ Իր այդ գրքում Մ. Նալբանդյանը տնտեսական հարցի լուծումը ներկայում է ժողովրդի քաղաքական վիճակի փոխման, քաղաքական հիմնական հարցի լուծման հետ։ «Չկա քաղաքական ազատություն, առանց տնտեսական ազատության և հակառակը, չկա տնտեսական ազատություն, առանց քաղաքականի. ահա Ընկրկագործության... հիմնական, ղեկավար միտքը։ Մ. Նալբանդյանը գտնում է, որ ով համաձայն չէ, վիճում է այս հիմնական մտքի դեմ, նա երեխա է դեռ [1]։

«Ընկրկագործությունը որպես ուղիղ ճանապարհ» աշխատության մեջ Մ. Նալբանդյանը պաշտպան է կանգնում գյուղացիական հարցի ռևոլյուցիոն ճանապարհով լուծմանը։ Նա գրում է. «... Սորուկը կացինով կվճռե գործը։ Ժամանակը շատ մոտեցած է, և կարծվածից ավելի մոտեցած...»։

Մ. Նալբանդյանը քննադատում է բուրժուական ռևոլյուցիանները, գրում է, որ այդ ռևոլյուցիաները «փոխեցին կառավարության ձևերը», այնինչ պիտի փոխեին տնտեսական սիստեմը։ Նա գտնում է, որ առանց կապիտալիզմը կործանելու հնարավոր չէ տնտեսական սիստեմը փոխել։ Նա սոցիալիստ-ուտոպիստ էր և Ջերնիշևսկու նման հին գյուղացիական համայնքը համարում էր սոցիալիզմին անցնելու միակ ուղին, հողի ու ար-

---

1 Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հտ. 3, էջ 92։

տադրության միջոցների համայնացման մասին նա գրել է. «Հողը պատկանում է հասարակության, որի ամեն մի անդամ հավասար իրավունք ունի հավասար քանակության վրա, հավիտյանս ժամանակների և մի կողմից վաճառելու իրավունք չունենալով, իսկ մյուս կողմից առանց արդելքի հողը գործելու և արդյունավորելու իրավունքն անկողոպտելի պահելով, այդ հասարակության անդամը և նորա սերունդը հաստատում է յուր կյանքը մի ամուր և ապահով հիմքի վրա և անհնար է,- որ նա կամ աղքատության հանդիպի, կամ խպատ կարող մնա»:

Ինչպես Լոնդոնի պրոպագանդիստները 1860 թվականներին մեծ հույսեր էին դնում ժողովրդի ծոցից դուրս եկած երիտասարդության վրա, նույնպես և Մ. Նալբանդյանը «երկրագործության... մեջ ազգի երիտասարդության հետ է կապում հայ ժողովրդի քաղաքական ու տնտեսական ազատագրման հիմնական հարցը:

Իր գրաքննադատական հոդվածներում, հետևելով Բելինսկու, Չերնիշևսկու, Դոբրոլյուբովի հայացքներին, Մ. Նալբանդյանը հարցերին մոտենում էր մատերիալիստական փիլիսոփայության տեսանկյունով, ռևոլյուցիոն-դեմոկրատիայի դիրքերից: Նա գտնում էր, որ գրականության ու արվեստի նպատակը պիտի լինի արտացոլել ռեալ իրականությունը:

Ըստ Նալբանդյանի գեղարվեստական գրականությունը պիտի լինի կյանքի հայելին, ճշմարտացի արտացոլի իրականությունը, լինի ժողովրդական, վերափոխի հասարակական կյանքը: Մ. Նալբանդյանը մեծ կարևորություն էր տալիս գրական երկի ինչպես գաղափարական բովանդակությանը, նույնպես գեղարվեստական ձևին, լեզվին, մատչելիությանը: 1860-ական թվականներին գրաբարի ու աշխարհաբարի շուրջը ծավալված երկարատև պայքարում Մ. Նալբանդյանը գտնում էր, որ աշխարհաբարը պիտի ազատորեն զարգանա ժողովրդական լեզվի հիմունքներով օգտագործելով գրաբարի որոշ տարրեր, նույնպես և գավառաբարբառից և օտար փոխառություններից վերցրած որոշ տարրեր:

Դպրոցի և լուսավորության հարցերում Մ. Նալբանդյանը ինքնուրույն և համարձակ եզրակացություններ է հանգել: Ժողովրդի ինքնագիտակցության բարձրացման միակ միջոցը նա համարում էր լուսավորությունը, նա ժողովրդին կոչ էր անում տիրապետել լույսին, գնալ արդարեսի ճանապարհով: Նվ ժողովուրդ առնով շարունակ հասկանում էր «ճշմարտակ ժողովուրդը», աշխատավորությունը:

Լուսավորության միջոցով Մ. Նալբանդյանը ձգտում էր ժողովրդին բարձրացնել այնպիսի գիտակցության, որ նա մասնակցի վերահաս ռևոլյուցիոն շարժումներին:

Ի հակադրություն Սո. Նազարյանի, որը հնարավոր էր գտնում դպրոցի և եկեղեցու խաղաղ գոյակցությունը, Մ. Նալբանդյանը պահանջում էր դպրոցներն ազատել եկեղեցու հսկողությունից, լուսավորության գործը հանձնել ժողովրդական հոգաբարձության ձեռքը:

Մ. Նալբանդյանը բարձր էր գնահատում թատրոնի դերը: Նա գրել է. «Թատրոնական բեմը ստոր չէ ուսումնական ամբիոնից. թատրոնի բեմն է այն աթոռը, ուր նստում է փիլիսոփայությունը... թատրոնի բեմն է այն բարձրական ահեղ դատաստանը, ուր արդարությունը և հանցանքը առանց աչառության ստանում էին յուրյանց արժանի հատուցումը»[1]:

Հայտնի է, որ 1859—62 թ. թ. իր ճանապարհորդությունների ժամանակ Մ. Նալբանդյանը իր շուրջն է համախմբել արևմտահայ դեմոկրատական ինտելիգենցիայի ներկայացուցիչներին (Հ. Սվաճյանին, Սերովբե Թագվորյանին, Հովհաննես Քյարիհյանին, Ստեփան Ոսկանին և ուրիշներ), գործոն մասնակցություն է ունեցել սուլթանական բռնակալության դեմ ուղղված ազատագրական պայքարին: Մ. Նալբանդյանի երկու այցելությունները Կ. Պոլիս օգնում են նրան ծանոթանալ և իր շուրջ համախմբել դեմոկրատական երիտասարդությանը և առավել վստահելիներից կազմակերպել մի գաղտնի կազմակերպություն: Մ. Նալբանդյանի գլխավորությամբ «Միություն»-ի շուրջը համախմբված ուժերը պայքար էին մղում երկու ուղղությամբ, մի կողմից կղերա-ֆեոդալական հոսանքի դեմ, մյուս կողմից բուրժուական լիբերալիզմի դեմ:

Մ. Նալբանդյանը չսխալվիլ հարված է հասցրել ոչ միայն արևելահայ ռևակցիոներներին, այլ նաև արևմտահայ կղերա-ֆեոդալական ուժե-

---

1 Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հտ. 2, էջ 306:

